Էջմիածին

1962

ՌՆԺԲ
ԺԹ ՏԱՐԻ

Սեպտեմբեր

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ԹՎ

1962



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության հաստատման հինգհարյուրամյակի առթիվ	3
ԽՍՀԱԿՐԱԿԱՆ—Թուրքիայի հայոց Պատրիարքության հաստատման հինգհարյուրամյակը	5
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ դիմումը եկեղեցիների Համաշխարհային խորհրդին Հայաստանյայց Առաքելական եկեղեցու անդամակցության համար	8
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ հուշագիրը եկեղեցիների Համաշխարհային խորհրդին Հայաստանյայց Առաքելական եկեղեցու մասին	10
Պաշտոնական հաղորդագրություն Հայաստանյայց Առաքելական եկեղեցու եկեղեցիների Համաշխարհային խորհրդին անդամակցության մասին	13
Հայաստանյայց Առաքելական եկեղեցին անդամակցում է եկեղեցիների Համաշխարհային խորհրդին	14
եկեղեցիների Համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղարության նամակը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին	16
Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների եկեղեցիների Ազգային խորհրդի պատվիրակությունը Մայր Աթոռում	17
Ամենապատիվ Տ. Խաղ արքեպիսկոպոսը Մայր Աթոռում	20
Սուրբ էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վերամուտը	21
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	23
Սարկավագների ձեռնադրություն Մայր Աթոռում	25
ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆ — Կոստանդնուպոլսո Պատրիարքությունը	26
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ—Պոլիս և իր դերը	28
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՅԱՆ—Համառոտ պատմական ակնարկ Երևանի եկեղեցիների մասին	38
Հ. ԽԱԼՓԱԽՉՅԱՆ—Տաթևի հերաչքող սյունը	45
Ցուցակ Մայր Աթոռ Ս. էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	58

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»

Rédaction de la revue „Etchmiadzine", Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1962 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ՀԻՆԳՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՎԱՋԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՑ Տ. ՇԵՒՈՒՀՔԱՅ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԳԱԼՍՏԵԱՆ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ, ՎԱՐՉՈՒԹԵՒՆՑ ԵՒ ԹՐՔԱՀԱՅ ՍԻՐԵՑԵԱԼ ՀՕՏԻՆ ՄԵԾՈՒՐ ՈՂՋՈՅՆ, ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Ի ԳԱՀԷՆ ՍՐԲՈՅ ՀՈՐՆ ՄԵԾՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱՍԱԼԷ ՆՈՐԻՆ

Ամբ Գրիգոր Լուսաւորչի տեսիլքով հոգեպէս վիրաւորեալ. հայ ժողովուրդի գաւակները «Աշխարհի Էջերը» իրենց սրտին մէջ սուած. յաճախ. շատ յաճախ պանդուխտի ցուպը ձեռքերուն. ստիպուեցան հեռանալ իրենց հայրենի տունէն և այլուր հաստատել իրենց կեանքի կայանը:

Եւ այսպէս դարեր շարունակ, սփռուեցաւ մեր Ազգը դէպի արևմուտք և դէպի արևելք, դէպի հարաւ և դէպի հիւսիս:

Հայ Սփիւռքի ճամբաները շատ անգամ եղան Գողգոթայի ճամբաներ, բայց մեր ժողովուրդը խաչը ուսին բարձրացաւ աննկուն և անյոգնաբեկ. որովհետև միշտ հաւատաց յարութեան հրաշքին և իր հոգիին մէջ վառ պահեց յոյսը յաւիտենական կեանքին, միշտ հաւատարիմ իր Առաքելական Սուրբ Եկեղեցիին:

Մեր ժողովուրդի գաւակները դարեր շարունակ անշարժ մնացին իրենց հաւատքի ժայռին վրայ իբրև «քաղաքակիցք սրբոց և ընտանիք Աստուծոյ, շինեալք ի վերայ հիման առաքելոց և մարգարէից, որոյ է գլուխ անկեանն Քրիստոս Յիսուս» (Եփես. Բ 19—20):

Այսպէս է որ Գողգոթան դարձաւ յարութեան բարձունք, տառապանքը՝ աղբիւր ոգեկան ուժերու և պատմութիւնը հայոց՝ ստեղծարար շքերթ:

Հայ Սփիւռքի պատմական կայաններէն մին եղաւ հին Բիւզանդիոնը, մանաւանդ Ե դարէն սկսեալ: Բայց հապար տարի յետոյ է, որ կեանքի նոր պայմաններու մէջ, 1461-ին, Կոստանդնուպոլսոյ մէջ հիմնուեցաւ Հայոց Պատրիարքական Աթոռը, առաջին գահակալը ըլլալով երջանկայիշատակ Յովակիմ եպիսկոպոսը:

Այդ օրէն ահա 500 տարիներ ևս եկան ու անցան:

Փառքի էջերով լեցուն պատմութիւնն է այդ հաւատաւոր ու կենսունակ ժողովուրդի մը, որ կեանքին ընդմէջէն անցաւ հայեացքը միշտ դէպի երկինք յառած, լոյս ու ծաղիկ սփռելով իր ճամբուն վրայ:

Այսօր Ձեր պատմական Աթոռը, Թուրքիոյ հայոց Պատրիարքական Աթոռը ի Ստամբուլ, համայն իր ժողովուրդով, կը տօնէ ու կ'ոգեկոչէ անցնող այդ պատմութիւնը, եկեղեցական և մշակութային կեանքի խաղաղ ու բարգաւաճ պայմաններու մէջ, հանրապետական Թուրքիոյ բարեխնամ հովանիին ներքև:

Աստուածակառոյց Սուրբ Էջմիածինը և Մենք՝ Ձեր Հայրապետը, յոյժ երջանիկ ենք Ձեզի յղելով սոյն գիրը այս տօնական առիթով: Այս պահուս Մեր սրտէն կը բխին ամենաջերմ բարի մաղթանքներ և օրհնութիւններ ուղղեալ Ձեզի՝ սիրեցեալ եղբայր Մեր, Ամենապատիւ Տ. Շնորհք արքեպիսկոպոս, Ձեզի, աստուածասէր հոգևոր հայրեր և ժողովրդանուէր մշակներ և Ձեզի, բարեպաշտ հաւատացեալներ, հարազատ զաւակներ Մեր:

Տէրը և պահպանիչը մեր և յոյսը բոլոր հաւատացելոց, թող Իր ապահով հովանին միշտ տարածեալ պահէ ամէնուդ վրայ անխտիր և ըլլայ Ձեզի միշտ օգնական և առաջնորդ կենաց:

Թող անսասան և շէն մնայ Ձեր Պատրիարքական Աթոռը, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ նուիրապետութեան ծոցին մէջ, լուսաւորուած Քրիստոսի և Ավգի սիրով:

Թող բարօր ու անվտանգ աճի և կարգանայ Ձեր բարեխնամ երկիրը իր սքանչելի մայր քաղաքով, խաղաղ ու երջանիկ:

«Այսուհետև, եղբարք իմ սիրելիք, հաստատուն եղերուք, անշարժ կացէք, առաւել լերուք ի գործս Տեառն յամենայն ժամ: Գիտասջիք, զի վաստակք ձեր ոչ են ընդունայն առաջի Տեառն» (Ա Կորնթ. ԺԵ 58):

ԵՒՍԷՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 22-ն օգոստոսի
1962 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԲ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԻՆԳՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԸ

Նպտեմբերի 23-ին, Թուրքիայի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոսի գլխավորությամբ և Ստամբուլի հայոց թաղական խորհուրդների և վարչության նախաձեռնությամբ, նշվում է Հայոց Պատրիարքության հաստատման 500-ամյակը:

Այս բարեպաստիկ առիթով, Վեհափառ Հայրապետը Իր օգոստոս 22 թվակիր սրբատառ կոնդակով, օրհնություն և ողջույն նղելով Թուրքիայում ապրող Իր հավատացյալ զավակներին, գրում է.

«Աստվածակառույց Ս. Էջմիածինը և Մենք՝ Ձեր Հայրապետը, հույժ երջանիկ ենք Ձեզի հղելով սույն գիրը այս տոնական առիթով։ Այս պահուս Մեր սրտեն կրխին ամենաջերմ բարի մաղթանքներ և օրհնություններ ուղղյալ Ձեզի՝ սիրելյալ եղբայր մեր Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոս, Ձեզի, աստվածասեր հոգևոր հայրեր և ժողովրդավեր մշակներ, և Ձեզի, բարեպաշտ հավատացյալներ, հարազատ զավակներ Մեր։

Պատմական մի շատ կարևոր իրադարձության նիշատակը և նշանակությունը ոգեկոչելու սրտագին պարտականության առաջ ենք գտնվում ազգովին:

Պատմականորեն ստեղծված և ժամանակի ընթացքում եկեղեցական նվիրապետությամբ մեծարված Թուրքիայի Հայոց Պատրիարքական Աթոռը, որպես անբաժանելի մեկ մասը Հայաստանյայց Առաքելական եկեղեցու իշխանապետության, մեծ դեր է կատարել արևմտահայ ժողովրդի պատմության մեջ:

Հին է Կոստանդնուպոլսի հայ գաղթականության պատմությունը:

«Հայ Սփյուռքի պատմական կյանքերեն մին եղավ հին Բյուզանդիոնը, մանավանդ ն դարեն սկսյալ։— գրում է Վեհափառ Հայրապետը:

570-ական թվականներին է, որ Վարդանանց երկրորդ ապստամբությունից հետո, Հովհաննես Գաբեղյան կաթողիկոսի օրով, սկիզբ է առնում Կոստանդնուպոլսի հայ գաղութը: Գաղթական հայերին հատկացվում է առանձին թաղամաս և եկեղեցի:

ԺԱ դարում Կոստանդնուպոլսում կար արդեն կազմակերպված հայ համայնք: Այդ մասին է վկայում 1197 թվականին պատահած Ծռազատիկը, որի շուրջ վեճեր էին առաջացել Պոլսի հայերի և հույների միջև:

1307 թվականին Սսում գումարված ազգային-եկեղեցական ժողովին ներկա 26 հայ եպիսկոպոսների շարքում նիշատակվում է նաև Տ. Հուսիկը՝ «եպիսկոպոս Ստինպոլայ հայերուն»:

1360 թվականին Կոստանդնուպոլսում նիշվում է առաջին հայկական եկեղեցին Ս. Սարգիս անունով, ըստ մի ձեռագրի նիշատակարանի վկայության:

1391 թվականին շինվում է Ղալաթիս նշանավոր Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որ ուխտավայր է մինչև այսօր:

1430-ական թվականներին նիշվում են, որպես առաջնորդ Կոստանդնուպոլսի, Եսայի եպիսկոպոսը և հանրածանոթ տաղասաց և նկարիչ Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոսը, որը կաթողիկոսի կողմից այցելել է Կոստանդնուպոլիս:

Այս փաստերը խոսում են այն մասին, որ 1453 թվականից առաջ, երբ Ֆաթիհ սուլթան Մուհամեդ Բ-ը գրավում էր Կոստանդնուպոլիսը, այնտեղ կային հաստատված բազմաթիվ հայեր:

Կոստանդնուպոլսի գրավման օրերին հավանաբար ականատես երկու ասողասացներ՝ Աբրահամ Անկյուրացին և Առաքել Բաղիշեցին, իրենց «Ողբ»-երում խոսել են Կոստանդնուպոլսի անկման մասին:

Կոստանդնուպոլսի անկումը հատկապես խոր և ցնցող տպավորություն է թողել Առաքել Բաղիշեցու վրա, որն իր հայտնի «Ողբ մայրաքաղաքին Ստամբոլայ» աշխատության մեջ ողբում է «վերջին քրիստոնեական պետությունը, որը արևելյան քրիստոնյաների հենարանն էր, հույսն ու ապավենը» (Աբեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», Բ գիրք, էջ 367):

Պոլսի գրավման օրերին, այնտեղ գտնվում էր հայկական առանձին գաղութ: Մայրաքաղաքի գրավումից հետո, հաջորդ ութ տարիների ընթացքում, անում է հայ գաղութը: Սուլթանը, Մուհամեդ Ֆաթիհ, «որ գութ ունէր ի վերայ Ազգին Հայոց», Պոլիս էր հրավիրում Բուսայի առաջնորդ և նախապես իրեն ծանոթ Հովակիմ եպիսկոպոսին և նրան «արքունի համակամ կացուցեալ առաջնորդ՝ փաթրիկ. այսինքն Պատրիարք. տուեալ նմա իշխանութիւն ի վերայ հայոց Նիկոյ ի Յունաստան և յԱնատոլիա» (Հ. Մ. Ջամչյան, «Պատմութիւն Հայոց», Գ. էջ 500):

Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության հաստատման առթիվ տրված արքայական հրովարտակում մայրաքաղաքի մեջ հիշատակվում են հայկական վեց եկեղեցիներ կամ համայնքներ՝ «զայրը ջոմաաթ», որի ղեկավար է նշանակվում պատրիարքը:

Սկիզբ էր առնում Թուրքիո Հայոց Պատրիարքությունը, որն անխափան շարունակվում է մինչև այսօր: Հատկանշական է արձանագրել, որ համարյա նույն ժամանակաշրջանում, 1445 թվականին, Սսում սկիզբ էր առնում Կիլիկիայի մասնավոր Կաթողիկոսական Աթոռը:

Կոստանդնուպոլսի հայ գաղութը հետզհետե բազմանում է Անատոլիայից, ներիին գավառներից և Ղրիմից եկած հայ գաղթականական նոր հոսանքներով:

1470 թվականից հիշվում է Կոստանդնուպոլսի Ս. Նիկողայոս եկեղեցին, 1480 թվականից՝ Զարխափան Ս. Աստվածածինը, իսկ 1493 թվականից՝ Ս. Գևորգ եկեղեցին:

Կոստանդնուպոլսում, «ընդ հովանեաւ Ս. Նիկողայոս եկեղեցւոյ», բացվում է առաջին հայ դպրանոցը 1567 թվականին. Աբգար դպրի և նրա որդի Սուլթանշահի ջանքերով:

«1481 թվականին հայերը իրավական կարևոր բնակչություն մը կազմած էին աղին Պոլսոյ մեջ» («Ընդարձակ օրացույց», 1901, էջ 110):

Կոստանդնուպոլսի Հայ Պատրիարքության վարչական-եկեղեցական իշխանությունը հնարքներն ընդարձակվում էր, համապատասխան սամանների մեծության:

«Կոստանդնուպոլսոյ հայ պատրիարքները սկսան հետզհետե իրենց իշխանությունը, կազմակերպել և իրավունքները կենտրոնացնել, և հնարավորության սահմանին մեջ իրենց ձեռքը ամփոփել ազգային ներքին վարչությունը: Իրենց վարչական գործունեությունը հետզհետե տարածվեցավ կայսրության բոլոր գավառներուն վրա, նույնիսկ հոգևորապես Սսո և Աղթամարա Կաթողիկոսությանց և Երուսաղեմի Պատրիարքության պատկանյալ թեմերուն վրա: Հայոց Պատրիարքության առաջին առաջնորդությունը Աբրոնեաց և թեմերու փոխարարած խնդիրներու շարքմը է, շարունակ Թաղամական խռովությունները և Թաղական շփոթությունները հետ խառնված» (Օրմանյան, «Հայոց եկեղեցին», էջ 103—104):

Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքական Աթոռը 500 տարիներից ի վեր կենտրոնը և գլուխն է արևմտահայ ժողովրդի ազգային-եկեղեցական և մշակութային կյանքի:

Օսմանյան տիրապետության տակ ապրող և Հայոց Պատրիարքարանի հովանու ներքև կազմակերպվող հայությունը միշտ վայելել է երկրի իշխանավորների վստահությունն ու բարյացակամությունը, որպես հավատարիմ և ջինարար մեծ տարրի:

Արևմտահայ ժողովրդի ծոցից առաջ են եկել պետական բարձրաստիճան պաշտոնատարներ, նախարարներ, սեղանապետներ, առևտրականներ, մշակույթի և գիտության ներկայացուցիչներ, որոնք իրենց հայրենասիրական պարտքը արդյամբ են կատարել երկրի և հովանավորող պետության հանդեպ:

Անցնող 500 տարիների ընթացքում, Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռի վրա բազմել են 80 պատրիարքներ: Նրանցից ոմանք Պատրիարքական Աթոռը ծածկել են փառքով, ժողովրդանվեր, եկեղեցաշեն գործունեությամբ: Հայ եկեղեցին և հավատացյալ հայ ժողովուրդը հարգանքով են հիշում մեծագործ պատրիարքների անունները, որոնք իրենց դրոշմը դրել են իրենց ապրած ժամանակաշրջանի և պատմության վրա. ինչպիսիք են Հովակիմ եպիսկոպոս Բուսացին, Գրիգոր Կեսարացին, Զաքարիա Վանեցին, Եղիազար Այնթապցին, Հովհաննես Մուղնեցին, Մարտիրոս Ղրիմեցին և ուրիշներ:

Հայ-կաթոլիկ վենետիկի շրջանում ԺԶ—ԺԸ դարերում, Հայ Եկեղեցու անկախության և նավատի պաշտպանության համար անմոռանալի աշխատանքներ են կատարել Եփրեմ Պավանցին, Ավետիք Եվդոկիացին և ուրիշներ:

Հովհաննես Կոլոտի պատրիարքության շրջանը, 1715—1741 թվականներին, է՛լ ավելի բարձրացնում է Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռի հեղինակությունն ու նմայրը և սկիզբ է դրվում Կոստանդնուպոլսի հայոց կրթական, գրական և մշակութային զարգացման:

Այս մեծագործ և ուսումնասեր պատրիարքի երեսնամյա պաշտոնավարության ընթացքում, Կոստանդնուպոլսում լույս են տեսնում ավելի քան 90 անուն հրատարակություններ, նվիրված Հայ եկեղեցու պատմության, աստվածաբանության, դավանության և հայ ժողովրդի և հայ մշակույթի պատմության:

Կոլոտի որով է որ հրատարակվում են «Գիրք պարապմանց»-ը, «Ցանախոսատում»-ը, Տարեացու «Գիրք նարգմանց»-ը, «Քարոզգիրքը»-ը՝ «Ամարան» և «Զմերան» նատարներով, Փավստոս Բուզանդը, Ղեոնը Դլակը և ուրիշ աշխատություններ:

ԺԹ դարի մեծագործ և արդյունաշատ պատրիարքների մեջ մասնավոր տեղ են գրավում Գեորգ Կոստանդնուպոլսեցին, Մկրտիչ Խրիմյանը, Ներսես Վարժապետյանը, Խորեն Աշրգյանը, Մատթեոս Իզմիրլյանը և Մաղաքիա Օրմանյանը, որոնցից շատերը բարձրացան նաև Ամենայն Հայոց Հայրապետական Դանի վրա:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո ստեղծված նոր իրադրության մեջ, Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռի վրա արդյունավետ գործունեություն է ծավալում մանավանդ լուսահոգի Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատրյանը 1950—1961 թվականներին:

Անցյալ տարի օգոստոսին, Վեհափառ Հայրապետը Իր պատմական այցելությամբ հանգամանորեն ծանոթանում էր Թուրքիայում ապրող Իր նավատացյալ ժողովրդի կրոնական, եկեղեցական կյանքին:

Ամենայն Հայոց Հայրապետությունը և Թուրքիո Հայոց Պատրիարքությունը միշտ կապված են եղել և կապված են այսօր ևս փոխադարձ հարգանքի և սիրո միությամբ:

Անցյալում, Կոստանդնուպոլսի պատրիարքները համարվում էին նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի փոխանորդները (վեքիլ):

Այսօր, Թուրքիայում ապրող մոտ 200 000 հայության հոգևոր պետն է հարգելի Ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարքը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանությունը և Հայաստանյայց Առաքելական եկեղեցին իրենց ստացին շնորհավորություններ են բերում Թուրքիո Հայոց Պատրիարքության հաստատման 500-ամյակի առթիվ:

«Տերը և պահպանիչը մեր և հույսը բոլոր հավատացյալց,— գրում է Վեհափառ Հայրապետը Իր սրբատառ կոնդակում, թարգմանը հանդիսանալով բովանդակ հայ հավատացյալ ժողովրդի զգացմունքների,— *թող Իր ապահով հովանին միշտ տարածյալ պահեմ* Ամենապատիվ Սրբազան Պատրիարք Հոր, հոգևորականության և հավատացյալ հայ ժողովրդի վրա:

Աղոթս Վեհափառ Հայրապետի հետ միասին, սրտեռանդն աղոթքներ.

«Թող անսասան և շեն մնա Ձեր Պատրիարքական Աթոռը, Հայաստանյայց Ս. Եկեղեցվո նվիրապետության ծոցին մեջ, լուսավորված Քրիստոսի և Աղոյի սիրով»:

«Թագաւոր երկնաւոր, զհիմնեցի քո անշարժ պահեսո»:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԴԻՄՈՒՄԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ

ԺԸՆԵՎ

Հայ Եկեղեցին և անոր կեդրոնը հանդիսացող Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ի սկզբանե հոգեկան մխիթարությամբ են հետևած Ձեր ստեղծած էկումենիկ շարժումին և ցարդ Ձեր ի գործ դրած աստվածահաճո ճիգերուն, համրապնդումն քրիստոնեական եղբայրության և գործակցության աշխարհի եկեղեցիներու միջև՝ ճշմարիտ ավետարանական ոգիով:

Մենք համոզված ենք, թե Ձեր կազմակերպության հիմնական սկզբունքները և գործելու ոգին իրոք որ համապատասխան են Քրիստոնեական Եկեղեցվո առաջադրանքներուն, առանց որևէ չափով խախտելու պատմականորեն ծնունդ առած ու կարգացած բոլոր եկեղեցիներու ինքնուրույնությունը և ինքնավարությունը:

Մենք գոհունակությամբ ծանոթացանք մանավանդ Նոր-Դելհիի Ձեր երրորդ խորհրդաժողովի 1961 դեկտեմբեր 2-ի այն որոշումին, որով իբրև Ձեր կազմակերպության հիմունք կհռչակվեր, թե Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը եկեղեցիներու եղբայրական ընկերակցություն մըն է, որ կդավանի մեր Տերը Հիսուս Քրիստոս իբրև Աստված և Փրկիչ համաձայն Սուրբ Գրությանց, և որ կաշխատի միասնական ճիգերով արդարացնել իր առաքելությունը ի փառս միակ Աստուծուն՝ Հոր և Որդվո և Հոգվույն Սրբո:

Մենք ողջունելի կգտնենք Ձեր այս որոշումը, որ առավել կհամապատասխանեն նաև Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո ավանդություններուն և աստվածաբանական մտածելակերպին:

Մենք այն համոզումն ունինք նաև, թե Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը իր ապագա գործունեության ընթացքին, հետզհետե ավելի պիտի ձգտի իր գործունեությունը կապել մարդկության ներկա կյանքի մեծ հարցերի հետ, իր բարերար նպաստը բերելու ակնիվ առաջադրությամբ, ի կենսագործումն սիրո, եղբայրության և խաղաղության աստվածառաք պատգամներուն:

Գոտեպնդված այս համոզումներով ու զգացումներով, Մենք, հանուն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո կուգանք ներկայացնել Մեր և մեր Եկեղեցվո փափագը՝ անդամակցելու Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին և գործակցելու Ձեր կազմակերպության անդամ քույր եկեղեցիներու հետ:

Ներփակ Ձեզի կներկայացնենք համառոտ հուշագիր մը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո անցյալի և ներկայի կացության մասին:

Հավարամյա Ս. Էջմիածնի սեղաններուն առաջ Մենք կմնանք միշտ աղոթող վասն հաստատության և միասնության Քրիստոսի Եկեղեցվույն:

Սիրո ողջունիվ և օրհնությամբ՝

ՎԱՉԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

26 մարիլ 1962
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՒՇԱԳԻՐԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

Ա. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՆ

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին Աստուծի հնագույն պատմական եկեղեցիներից մեկն է, հիմնված Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալների քարոզության և նահատակության վրա:

Դ դարի կեսերին Հայաստանում արդեն կար կազմակերպված եպիսկոպոսական թեմ, ըստ Եվսեբիոս Կեսարացու վկայության:

Հայաստանի ամբողջական դարձը դեպի քրիստոնեություն տեղի է ունենում Դ դարի սկզբներին, Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի (299—325) քարոզչությամբ:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն է հռչակվում 301 թվականին:

Նույն թվականին Ս. Գրիգոր Լուսավորիչը կառուցում է Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, ուր հաստատում է Հայրապետական իր Աթոռը, որպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետության գլուխ և կենտրոն:

Ս. Գրիգոր Լուսավորչից սկսած, Ս. Էջմիածնում են նստել Ամենայն Հայոց Հայրապետները:

Վազգեն Ա Ամենայն Հայոց այժմյան Հայրապետը Էջմիածնում նստած 130-րդ Գահակալն է:

Հայաստանում, Ե դարի վերջերից սկսած, քաղաքական դեպքերի դժբախտ բերումով, Հայրապետական Աթոռը թափառում է տեղից տեղ, մինչև ԺԵ դար:

485 թվականին Հայրապետական Աթոռը փոխադրվում է Դվին, 925 թվականին՝ Աղթամար, 1293 թվականին՝ Սիս (Կիլիկիա): 1441 թվականին Հայրապետական Աթոռը վերադառնում է իր նախկին կենտրոնը՝ Ս. Էջմիածին:

1441 թվականից սկսյալ, առանց ընդհատման, Ամենայն Հայոց Հայրապետները նստում են Ս. Էջմիածնում:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դավանությունը խարսխված է Ս. Գրքի, սուրբ ավանդության և Նիկիայի (325 թ.), Կոստանդնուպոլսի (381 թ.) և Եփեսոսի (431 թ.) առաջին երեք տիեզերական ժողովների կանոնների վրա:

Քրիստոսաբանական հարցերում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ընդունում է Եփեսոսյան կամ Կյուրեղյան (Աղեքսանդրացի) դավանությունը, ըստ որի Քրիստոսի մեջ աստվածային և մարդկային բնությունները միացած են անայլայլելի, անխառն, անշփոթ կերպով և կազմում են մի անձնավորության մեջ «միատարեալ մի բնութիւն»:

Ս. Էջմիածնի մեջ Ե դարի սկզբներին Ս. Մեսրոպ վարդապետը և Ս. Սահակ Հայրապետը Ս. Գիրքը թարգմանել են հայերեն լեզվով, Յոթանասնից օրինակի վրայից:

Բ. ԱՐԳԻ ՎԻՃԱԿԸ

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Եվիրապետության Գլուխն է Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որը կոչվում է Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Ամենայն Հայոց Հայրապետության ենթակա Աթոռներն ու թեմերն են հետևյալները.

1. Երուսաղեմի Պատրիարքություն (Պատրիարք՝ Եղիշե Արքեպիսկոպոս Տերտերյան):

2. Կոստանդնուպոլսի Պատրիարքություն (Պատրիարք՝ Շնորհ Արքեպիսկոպոս Գալստյան):

3. Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն (կենտրոնը՝ Լիբանան—Անթիլիաս). այս Աթոռին ենթակա թեմերն են Լիբանանը, Սիրիան և Կիպրոսը):

4. Սովետական Հայաստանում.
   ա. Արարատյան թեմ.
   բ. Շիրակի թեմ.

5. Սովետական Միության մեջ.
   ա. Վրաստանի և Իմերեթիայի թեմ.
   բ. Ադրբեջանի և Թուրքեստանի թեմ.
   գ. Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմ.
   դ. Մոսկվայի հոգևոր հովվություն.

6. Արտասահմանում.
   ա. Պարսկաստանի երեք թեմերը (Թավրիզ, Թեհրան, Իսպահան).
   բ. Հնդկաստանի և Մայրագույն Արևելքի թեմ.
   գ. Իրաքի թեմ.
   դ. Եգիպտոսի թեմ (Ներառյալ Եթովպիան և Սուդանը).
   ե. Հունաստանի թեմ.
   զ. Բուլղարիայի թեմ.
   է. Ռումինիայի թեմ.
   ը. Արևմտյան Եվրոպայի թեմ (կենտրոնը՝ Փարիզ).

բ. Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների թեմ (ներառյալ Կանադան, կենտրոնը՝ Նյու-Յորք).

ժ. Կալիֆոռնիայի թեմ (ներառյալ Մեքսիկան. կենտրոնը՝ Լոս-Անժելոս).

ժա. Հարավային Ամերիկայի թեմ (Արգենտինա. Բրազիլիա. Ուրուգվայ. Չիլի), կենտրոնը՝ Բուենոս-Այրես.

ժբ. Անգլիա, Հայրապետական պատվիրակություն, Լոնդոն.

ժգ. Միլանո, Հոգևոր ճովվություն.

ժդ. Վիեննա, Հոգևոր ճովվություն:

Հայաստանյայց Եկեղեցվո ժողովրդի թիվն է մոտավորապես 4 500 000 ամբողջ աշխարհում, որից մոտ 1 700 000-ը Սովետական Հայաստանում, 1 400 000-ը Սովետական այլ ճանապարհություններում և մնացածը, շուրջ 1 400 000, ցուրտված ամբողջ աշխարհում:

28 ապրիլ 1962

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՆԴԱՄԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական վարչությունը, սույն թվականի օգոստոսի 7—17-ին Փարիզում գումարված իր նստաշրջանում, ընդառաջելով Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիմումին, միաձայնությամբ որոշեց ընդունել Հայաստանյայց Առաքելական եկեղեցին իբրև անդամ եկեղեցիների Համաշխարհային կազմակերպության:

Այս առթիվ, եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը հանդիսավոր կերպով նշեց ու արձանագրեց, թե մեկ է և անբաժանելի Հայաստանյայց եկեղեցին իր բոլոր նվիրապետական Աթոռներով, հոգևոր վերին իշխանությանը հերթ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության:

Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի վերոհիշյալ ժողովին հանուն Հայաստանյայց Եկեղեցու Վեհափառ Հայրապետի կողմից ուղարկված պատվիրակությունը կազմված էր հետևյալ անձերից.

Գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյան, Հայրապետական պատվիրակ Արևմտյան Եվրոպայի և առաջնորդ Ֆրանսիայի հայոց:

Գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյան, առաջնորդ Վրաստանի հայոց.

Հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գևորգյան, հոգևոր հովիվ Մոսկվայի հայոց:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ



ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒՄ Է ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ

1962 թվականի ապրիլ 26 թվակիր գրությամբ, Վեհափառ Հայրապետը դիմել էր Եկեղեցիների Համաշխարհային խորհրդին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու անդամակցության խնդրանքով։

Սույն թվականի օգոստոսի 7—17-ին, Փարիզում, Սիտե Ունիվերսիտերի Միջազգային տանը գումարվում են Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի Կենտրոնական հանձնախմբի նիստերը, ի ներկայության բոլոր անդամների, պաշտոնական դիտորդների և թղթակիցների։

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, սույն ժողովին որպես դիտորդ մասնակցում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատվիրակությունը, որի կազմում էին Արևմտյան Եվրոպայի հայոց Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը, Վրաստանի թեմի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գևորգյանը։

Ժողովում լսվում են կրոնական և եկեղեցական բնույթի մի շարք բանախոսություններ և զեկույցներ։

Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի Կենտրոնական հանձնախումբը իր օգոստոսի 11-ի նիստում քննություն է առնում 7 եկեղեցիների և կրոնական համայնքների, այդ. թվում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, Վրացական Ուղղափառ Եկեղեցու, Մակրոլական Ավետարանական Քրիստոնեական Միության Եկեղեցու (ՍՍՌՄ), Էստոնական Ավետարանական Լութերական Եկեղեցու, Լատվիական Ավետարանական Լութերական Եկեղեցու և Հարավային Աֆրիկայի Ավետարանական Լութերական Եկեղեցու դիմումնագրերը։

Օգոստոսի 11-ի նիստը բացում է ընդհանուր քարտուղար դոկտ. Վիսսեր դ՝ Հուֆտը, դիմող յուրաքանչյուր եկեղեցու և համայնքի մասին պատմական ծանոթություններ տալով։

Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի Կենտրոնական հանձնախմբի օգոստոսի 11-ի նիստում միաձայն անդամ են ընդունվում վերոհիշյալ 7 եկեղեցիները և կրոնական համայնքները։

Ըստ Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի կանոնադրության, Կենտրոնական հանձնախմբի սույն որոշումը կուղարկվի Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի ան-

դամ բոլոր եկեղեցիներին ի քննություն և ի հաստատում, որից հետո 6 ամսվա ընթացքում կհաղորդվի դիմող նոր եկեղեցիներին ընդունելության մասին պաշտոնական հաղորդագրություն։

Եկեղեցիների Համաշխարհային խորհրդին անդամակցության համար դիմում էր կատարել նաև Անթիլիասի Կաթողիկոսությունը Փարիզ, ժողովին ուղարկելով իր ներկայացուցչին, հանձին հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Սարգսյանի։

Մայր Աթոռի պատվիրակները հարմար են գտնում օգոստոսի 10-ին մի հայտարարություն անել եկեղեցիների Համաշխարհային խորհրդի Փարիզի նստաշրջանի դիվանին, շեշտելով, թե Հայ եկեղեցին մեկ է ընդ հոգևոր գերագահությամբ և իշխանությամբ Ս. Էջմիածնի և նվիրապետական Աթոռները ունեն իրենց իրավասության սահմանները, պատմականորեն նվիրագործված։ Այդ հայտարարության ներքև ստորագրում է նաև Անթիլիասի ներկայացուցիչ Տ. Գարեգին վարդապետ Սարգսյանը։

Ահա օգոստոսի 11-ի այդ հայտարարության բովանդակությունը.

«Ս. Էջմիածնի Կաթողիկոսության և Կիլիկիո Կաթողիկոսության պաշտոնական դիտողները իրենց անդամակցության դիմումնագիրը ներկայացնելու պահուն կուզեն հայտնել հետևյալը.

Երկու դիմումնագիրներու ներկայացումը պետք չէ թողու այն տպավորությունը, որ երկու տարբեր, անչատ եկեղեցիներ կդիմեն անդամակցության համար Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդին։ Հայաստանյայց եկեղեցին մեկ է, ընդ հոգևոր գերակայությամբ Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսին։ Երկու Կաթողիկոսությունները ունին իրենց հատուկ եկեղեցական իրավասության սահմանները, անկախ գոյավիճակով։ Կիլիկիո Կաթողիկոսությունը կճանաչեն Էջմիածնի Կաթողիկոսությունը որպես նախամեծար Աթոռ։

Ներկայի դժվարությունները երկուքին փոխհարաբերության մեջ ժամանակավոր նկարագիր ունին և մենք կհավատանք, որ մոտավոր ապագային կչքանան։

Երկու պատվիրակությունները պիտի գործակցին իրենց մասնակցությունը բերելու միութենական շարժումին ընդհանրապես և Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի գործին մասնավորապես։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատգամավորության սույն հայտարարությունը թեև հրապարակավ ընթերցվում է Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի կենտրոնական հանձնախմբի օգոստոսի 11-ի նիստում, սակայն այնուամենայնիվ ժողովը ընդունում է նաև Անթիլիասի դիմումը, իբրև առանձին անդամ-եկեղեցու դիմում։

Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի Կենտրոնական հանձնախմբի օգոստոսի 11-ի նիստում հրավիրվում են նոր անդամ ընդունված եկեղեցիների ներկայացուցիչները իրենց ողջույնի և շնորհակալական խոսքն ասելու։

Գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը, հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու, խոսք է առնում, շնորհակալություն հայտնելու Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի Կենտրոնական հանձնախմբին Հայ եկեղեցու անդամակցության համար, շեշտելով, որ «Հայաստանյայց Առաքելական եկեղեցին քրիստոնյա ամենահին եկեղեցիներից մեկն է իր ուրույն դավանանքով, ավանդություններով և ծեսերով։ Ուրախ է Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, որ այսուհետև մաս է կազմում եկեղեցիների Համաշխարհային խորհրդի ընտանիքին, իր գործակցությունը բերելով քրիստոնեական հավատի տարածման։

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Զերդ Սրբություն.

Ինձ մեծ շնորհակություն է պատճառում Զերդ Սրբության տեղեկացնելը, որ Փարիզում գումարված նիստում եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոնական հանձնախումբը միաձայն որոշեց հանձնարարել Համաշխարհային Խորհրդի անդամ եկեղեցիներին Ձեր եկեղեցու անդամակցությունը: Սույն որոշումը հաղորդվելու է մեր անդամ եկեղեցիներին, և վեց ամսվա ընթացքում սրանց մեկ երրորդից ավելին առարկություն չունենալու դեպքում, Ձեր եկեղեցին այդ ժամանակ լինելու է լիիրավ անդամ եկեղեցիների մեր եղբայրության:

Պետք է ավելացնեմ, որ մենք մասնավորապես ուրախ էինք տեսնելով մեր նիստին ներկա եղող հայ ներկայացուցիչների այն դիրքը, որով նրանք բացատրեցին և պարզեցին երկու դիմումների ներկայացման ճարտը: Այն վստահությունը, որ Հայոց եկեղեցին ի հոգևորս մի եկեղեցի է և որ ներկա դժվարությունները ժամանակավոր բնույթ են կրում, խոր տպավորություն թողին հանձնախմբի վրա, որովհետև նրանք ապացույց տվեցին բոլորին քրիստոնեական հաստատ դիրքի մասին: Մենք միայն կարող ենք հուսալ և աղոթել, որ Համաշխարհային Խորհրդի գործունեության մասնակցությունը օգնելու է այդ մարձեցման, որ անկասկած մեր Տիրոջ կամքին համաձայն է:

Հարգալից ողջույններով Զերդ Սրբության,

Մնամ հավատարմորեն՝

Վ. Ա. ՎԻՍՍԵՐ Դ' ՀՈՒՏՍ
Ընդհանուր Քարտուղար
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի

22 օգոստոսի 1982 թ.
ԺԸՆԵՎ



ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 9-ին, կիրակի օրը, Մայր Աթոռ ժամանեց Ամերիկայի Միացյալ Նահանգների Եկեղեցիների Ազգային Խորհրդի պատվիրակությունը, որը ՍՍՌՄ-ում է գտնվում Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի հրավերով։

Պատվիրակության կազմում էին Արևմուտքյան Նյու-Յորքի թեմի Եպիսկոպոսական Եկեղեցու առաջնորդ գերաշնորհ Տ. Լորիստոն Լեվինկստոն Սքեյֆ եպիսկոպոսը, Եկեղեցիների Ազգային Խորհրդի նախագահ Իրվին Մյուլլերը, դոկտ. Ռ. Հ. Էդվին Էսբին, գերապատիվ Տ. Ռիչարդ Ս. Ռայնիսը, պրոֆ. Ջարլս Հ. Ուիստը և արժանապատիվ Տ. Ջոն Հոնդրաս քահանան։

Պատգամավորության ուղեկցում էին Ռուսաց Պատրիարքի ներկայացուցիչները, Հայր Վասիլիի գլխավորությամբ։

Երևանի օդանավակայանում հյուրերին դիմավորում են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունից գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և արժանապատիվ Տ. Մամբրե քահանա Գուգույանը, որը ԱՄՆ-ից ուխտավորարար գտնվում էր Մայր Աթոռում։

Հյուրերին դիմավորում են նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը և ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր Ռուս Օրթոդոքս Եկեղեցու գործերի խորհրդի ներկայացուցիչ Սիմյոնովը։

Ժամը 12-ին պատգամավորությունը ժամանում է Մայր Աթոռ և առաջնորդվում Վեհարան։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը բարի գալուստ է մաղթում ԱՄՆ-ի Եկեղեցիների Ազգային Խորհրդի պատվիրակության, գոհունակությամբ և սիրով հիշում 1960 թվականին ԱՄՆ կատարած հովվապետական իր այցելության օրերին Եպիսկոպոսական Եկեղեցու և հոգևորականության քրիստոնեական եղբայրական վերաբերմունքը և ԱՄՆ-ի Եկեղեցիների Ազգային Խորհրդի ներկայացուցիչների ցուցաբերած ջերմ, բացառիկ ընդունելությունը։ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, որն անջնջելի կմնա որպես հիշատակ։ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ողջույնի իր խոսքը վերջացնում է քրիստոնեական բոլոր եկեղեցիների համագործակցության, միության մաղթանքներով։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույնի և բարի գալստյան խոսքերին պատասխանում է գերաշնորհ Տ. Սքեյֆ եպիսկոպոսը, ուրախություն հայտնելով, որ ԱՄՆ-ի Եկեղեցիների Ազգային Խորհրդի պատվիրակությունը գտնվում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, շեշտելով, որ «մեծ է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին իր հավատով, մեծ է իր մարտիրոսագրությամբ, մեծ է իր կենսունակությամբ, և Արևմուտքը շատ բան ունի սովորելու այս պատմական ու հնագարյան Եկեղեցուց, իր առաքելության ճանապարհի վրա»։

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ-ի Եկեղեցիների Ազգային Խորհրդի պատվիրակությունը Վեհափառ Հայրապետի հետ Ծայրկլա դասիքում

Վեհափառ Հայրապետը Տ. Լորիստոն Լինկստոն Սքեյֆ եպիսկոպոսի և մի խումբ միաբանների հետ Վեհարանի այգում

Եկեղեցիների Ազգային Խորհրդի նախագահ Իրվին Մյուլլերը երախտագիտությամբ է հիշում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 1960 թվականի այցելությունը իրենց կենտրոնին, երբ նորին Ս. Օծությունը Եկեղեցիների Ազգային Խորհրդին նվիրել էր մի գեղեցիկ խաչքար։

— Այդ վեմքարը մեզ և Խորհրդի բոլոր անդամ եկեղեցիներին լույս է տալիս,— եզրակացնում է դոկտ. Մյուլլերը։

— Իսկ այդ լույսի աղբյուրը այստեղ է, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում,— ասում է Վեհափառ Հայրապետը։

Ապա գանգիրի ուրախ զողանջի տակ, եկեղեցական թափորը առաջնորդվում է Մայր Տաճար, ուր հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը։

Պատարագիչ սրբազանը իր քարոզում ողջունում է հյուրերի ներկայությունը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կենտրոն Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, խոսում քրիստոնեական եկեղեցիների եղբայրական սիրո, միության և համագործակցության և աշխարհում կայուն խաղաղության հաստատման մասին։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհարանում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Եկեղեցիների Ազգային Խորհրդի պատվիրակության անդամների միջև տեղի է ունենում ջերմ զրույց արտապին մթնոլորտում։

Այնուհետև հյուրերը, հոգեշնորհ Տ. Գրիգոր և Տ. Մեսրոպ վարդապետների առաջնորդությամբ, այցելում են Ս. Հռիփսիմե, Ս. Շողակաթ և Ս. Գայանե վանքերը։

Ժամը 4-ին, Վեհարանի սեղանատանը, ի պատիվ հյուրերի, տրվում է ճաշկերույթ, ուր ջերմ մթնոլորտում փոխանակվում են բաժակաճառեր։

Ընդունելությունից հետո հյուրերը այցելում են նոր Վեհարան, Մայր Տաճար և Հոգևոր Ճեմարան, որտեղ ուսանողները նրանց պատվին երգում են շարականներ և հոգևոր տաղեր։

Գերապատիվ Տ. Սքեյֆ եպիսկոպոսը, խորապես տպավորված, պատվիրակության շնորհակալությունն է հայտնում և օրհնում Ճեմարանի ուսանողության։

Ժամը 7-ին, Վեհարանում, պատվարժան հյուրերը հրաժեշտ են առնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից և մեկնում Երևան։

Սեպտեմբերի 10-ին, երկուշաբթի օրը, պատգամավորության որոշ անդամներ և հյուրեր մեկնում են դեպի Գառնի և Ս. Գեղարդի վանքը այցելության։

Գերաշնորհ Տ. Սքեյֆ եպիսկոպոսը և դոկտ. Էդվին Էորին առավոտյան ժամը 9-ին այցելում են Ս. Էջմիածնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և ժամը 12-ին լավագույն տպավորություններով հրաժեշտ են առնում և մեկնում դեպի Թբիլիսի։

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Օգոստոսի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Կիլիկյան Աթոռի օրինապահ միաբանության և ժողովրդի գլուխ ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոս Աչապահյանը։

Երևանի քաղաքային կայարանում Նորին Սրբազնությունը դիմավորվեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի կողմից, որը, հանուն Վեհափառ Հայրապետի, բարի գալուստ մաղթեց հարգելի հյուրին։

Ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոսը, Մայր Տաճարի զանգերի զողանջների ներքո, առաջնորդվեց Մայր Տաճար, իր ուխտը կատարելու և աղոթելու։

Մայր Տաճարում գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը ողջունեց Ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոսի ժամանումը։

Նորին Ամենապատվությունը, ջերմ շնորհակալություն հայտնելով սրտագին դիմավորման համար, բարձրացավ Վեհարան, Վեհափառ Հայրապետի օրհնությունն առնելու։

Հուզիչ և սրտառուչ էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի տեղապահ Ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոսի ողջագուրումը։

Խադ սրբազանը Վեհափառ Հայրապետի հյուրն է։

Ամսագրիս խմբագիրը օգոստոս ամսի 30-ին պաշտոնական այցելություն տալով, բարի գալուստ մաղթեց սրբազան հոր, որն իր այցելության առթիվ ասաց.

— Ազգիս Վեհափառ Հայրապետի մասնավոր հրավերով կուգանք մասնակցելու, որպես Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի տեղապահ, հանուն մեր միաբանության և ժողովուրդին, այս սեպտեմբերին գումարվելիք Ազգային-եկեղեցական ժողովին, որուն օրակարգին վրա կան կարևոր հարցեր։

Մեր եկեղեցական և աշխարհիկ պատգամավորները Մայր Աթոռ կժամանեն սեպտեմբերի վերջերուն։

1958 թվականի իմ վերջին այցելությենեն հետո, շատ փոխված կգտնեմ Մայր Աթոռը և սրտանց կուրախանամ։ Ամեն կողմ շինարարություն, կառուցում։

Աստված երկար և քաջառողջ կյանք պարգևե մեր սիրելի Հայրապետինս։

Բարի գալո՞ւստ ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոսին։



ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱՄՈՒՏԸ

Սեպտեմբերի 10-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 10.30-ին, տեղի ունեցավ Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի 1962—1963 ուսումնական տարեշրջանի հանդիսավոր բացումը։

Հանդիսության նախագահում էր Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի տեղապահ ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոս Աշապահյանը։

Ճեմարանի վերամտի հանդիսությունն սկսվում է «Աշակերտք Քրիստոսի» շարականով։ Այնուհետև Ճեմարանի վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը ընթերցում է Մատթեոսի Ավետարանից Սերմնացանի առակը (ԺԳ 4—9)։

Հոգևոր Ճեմարանի ուսանողական երգչախումբը, հոգեշնորհ Տ. Արսեն աբեղա Թերբերյանի ղեկավարությամբ, կատարում է Թարգմանչաց շարականը՝ «Որք զարդարեցին» և «Մանկունքդ»՝ «Նմանեալքդ»։

Վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, Ճեմարանի նոր ուսումնական տարվա սկզբնավորության բարեբաստիկ առիթով, ողջույնի և բարի գալստյան ջերմ խոսքեր է ուղղում Ճեմարանի դասախոսական մարմնին և ողջ ուսանողության.

«Ամենապատիվ Սրբազան Հայր.

Ինչքա՜ն գեղեցիկ է Հայաստանի սեպտեմբերը, գեղեցիկ իր բնությամբ, իր մրգերով և արևոտ երկնքով։

Այս գեղեցիկ ամսվան առաջին օրերուն կսկսի նաև ուսումնական նոր կյանքը մեր դպրոցներուն ու նաև Հոգևոր Ճեմարանի մեջ, երբ հազարավոր ուսանողներ, գրքերը իրենց անութներուն տակ, կդիմեն դեպի ուսումնարանները, համալսարան, ինստիտուտներ։

Կա՞ արդյոք ավելի քաղցր շրջան մը մեր կյանքին մեջ, քան ուսանողության օրերը, երբ մենք կդիմենք դեպի մեր լույսի վառարանները, մեր դասընկերներով, ողջունելու մեր ուսուցիչները։ Ուսանողական օրերու այս քաղցրությունը կզգանք մենք, ավելի տարեցներս, երբ անցուցած ենք այդ երանելի օրերը, և այսօր ամենայն քաղցրությամբ կվերհիշենք մեր մանկությունն ու պատանեկությունը։ Անցած, զացած են այդ անմեղ, քաղցր, երջանիկ օրերը և մեր սրտերուն մեջ դարձած են հուշ։

Ահա նորեն հավաքված ենք այս սրահին մեջ, ուսուցիչ և ուսանող, Ձեր օրհնությամբ դիմավորելու ուսումնական նոր տարին, և

անդամ մը ևս նորոգելու «հավերժական աշակերտության» մեր սրբազան ուխտը անոնց հիշատակին առաջ, որոնց հոգիները, կճավատանք մենք, կսավառնին միշտ այս սուրբ հարկին վրա։

Ձեր սուրբ օրհնությունները ուսուցիչներու և մեր ուսանողության վրա, որպեսզի բոլորենք ուսումնական նոր տարի մըն ալ բարի արդյունքներով։

Ուսումնական նոր տարվան այս շեմքին, կհայցեմ Աստուծո օգնությունը, Վեհափառ Հայրապետի օրհնությունը և Ձեր բարի աղոթքները Հոգևոր Ճեմարանի վրա։

Ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոսը, հանուն Վեհափառ Հայրապետի խոսք առնելով, շնորհավորում է Հոգևոր Ճեմարանի վերամուտը, օրհնում է ուսանողության և դասախոսական կազմին, խոսելով գեղեցիկ և իմաստալից մի խրատական, ուղղված ուսանողության, քրտնաջան աշխատանքով, նվիրումով և ծառայությամբ արդարացնելու Վեհափառ Հայրապետի վստահությունը և հայ հավատացյալ ժողովրդի ակնկալությունները։

Խմբովին երգված Տերունական աղոթքից հետո, ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոսի «Պահպանիչ»-ով ավարտվում է Հոգևոր Ճեմարանի վերաբացման հանդիսությունը։

Այնուհետև, գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի նախագահությամբ տակ. տեսչարանում տեղի է ունենում մանկավարժական ժողով։

Սեպտեմբերի 11-ին, երեքշաբթի օր, առավոտյան ժամը 9-ին, ուրախ և ցնծագին, հնչում է Հոգևոր Ճեմարանի ուսումնական նոր տարվա առաջին զանգը և սկսվում են կանոնավոր դասավանդությունները։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 2-ին, կիրակի. *Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Սեպտեմբերի 6-ին, հինգշաբթի, *Մայր Աթոռ ժամանեց Նյու-Ջերսիի (ԱՄՆ) հայոց հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Մամբրե քահանա Գուզոյանը։ Մայր Տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, Տ. Մամբրե քահանան ներկայացավ Վեհափառ Հայրապետին, Նրա Ս. Աչք համբուրելու համար։*

Արժանապատիվ Տ. Մամբրե քահանա Գուզոյանը իր հովվությունը վերադարձավ սեպտեմբերի 13-ին։

* * *

Սեպտեմբերի 8-ին, շաբաթ, *«Տօն ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱննայէ»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Մատենչյանը։*

* * *

Սեպտեմբերի 11-ին, երեքշաբթի. *Մայր Աթոռ ժամանեց գերաշնորհ Տ. Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյանը։*

Գերաշնորհ սրբազան հոր Երևանի քաղաքային կայարանում դիմավորեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը։

Մայր Տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, սրբազանը առաջնորդվեց Վեհարան, Վեհափառ Հայրապետի օրհնությունը ստանալու։

* * *

Սեպտեմբերի 16-ին, կիրակի, *«Խաչվերացում»։ Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյանը։*

Սրբազան պատարագիչը իր քարոզում վեր հանեց Ս. Խաչի փրկագործության խորհրդի նշանակությունը քրիստոնյա մարդու հոգևոր կյանքի աճման համար։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Երեկոյան ժամերգությունից առաջ, ավանդական հանդիսությամբ, Մայր Տաճարի շրջափակում, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվեց վերջին «Անդաստան»-ը։

Խաչվերացի տոնի առթիվ, Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողոսյանը բնաբան ունենալով «Խաչ քո երգիցի մեզ ապաւէն բոցանիշ փայլմամբ իւրով»։

* * *

Սեպտեմբերի 17-ին, երկուշաբթի, «Ցիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Գարաջյանը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց Հոգեհանգիստ ավասն համօրէն ննջեցելոց»։

* * *

Սեպտեմբերի 17-ին, երկուշաբթի, Մայր Աթոռ ժամանեց Կիլիկյան օրինապահ միաբանության երիտասարդ անդամներից հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Կարպիսյանը։

Երևանի օդանավակայանում հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետին դիմավորեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը։

Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել Տ. Գևորգ վարդապետին։

* * *

Սեպտեմբերի 18-ին, երեքշաբթի, Մայր Աթոռ ժամանեցին գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը և ճարտարապետ պր. Եդվարդ Ութուչյանը։

Հարգելի հյուրերին դիմավորեց հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետը։

Գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանը և պր. Ութուչյանը ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից։

ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1962 թվականի սեպտեմբերի 23-ին, կիրակի, Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը Մայր Տաճարում սուրբ պատարագի ընթացքում սարկավագ ձեռնադրեց Հոգևոր Ճեմարանի Գ լսարանի 1962 թվականի ուսումնական տարվա շրջանավարտ 4 ուսանողներին։

Իր անդրանիկ պատարագն էր մատուցում հոգեշնորհ Տ. Արսեն աբեղա Բերբերյանը։

Կիրակի առավոտյան ժամերգությունից հետո, վերատեսուչ սրբազանը կատարեց նորընծաների կոչման արարողությունը և Ձեռնադրության Մաշտոցի համաձայն տվեց «պաշտոն փոքր սարկաւագութեան»։

Այնուհետև պատարագը շարունակվում է մինչև «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած դոյով» աղոթքը և սկսվում է բուն ձեռնադրության արարողությունը։

Խարտավիլակ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետը դիմում է ձեռնադրող սրբազանին «Ի ձայն բարձր, զի կիսասարկաւագունս, զորս ընծայէ քեզ, ձեռնադրեսցես մեզ ի սարկաւագս»։

Ձեռնադրող սրբազանը ապա հարցեր է տալիս նորընծաների հոգևոր արժանավորության և կենցաղի սրբության մասին։

Խարտավիլակի դրական վկայությունից հետո, ձեռնադրող սրբազանն ասում է. «Կոչեմք (անունները տալով) զկիսարկաւագունս ի պաշտոն սարկաւագութեան»։ Ապա նվիրյալները ծնրադիր մոտենում են Ս. Սեղանին։

Ձեռնադրող սրբազանը «զաջն ի վերայ գլխոց նուիրելոցն» դնելով, կարդում է ձեռնադրության մեծ աղոթքը։

Գեղեցիկ է այն պահը, երբ նորընծաները, ի նշան աշխարհից հրաժարման, դառնալով «յարևմուտս», «զձեռս ի վեր ափ ի բաց» բարձրացնում են, մինչ կղերիկոսների խումբը երիցս երգում է «Աստուածային և երկնաւոր շնորհս» ձեռնադրության շարականը։

Ժողովուրդը միաբերան վկայում է՝ «Արժանի են»։

Ապա նորընծաները բոլորակի շարվում են ձեռնադրող սրբազանի աթոռի շուրջը, որը «զաջն ի վերայ գլխոյն» դնելով, յուրաքանչյուրին ասում է. «Ես դնեմ ձեռս ի վերայ սորա և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի զաստիճան սարկաւագութեան անարատ պաշտել առաջի Սրբոյ Սեղանոյս Աստուծոյ»։

Սարկավագների ձեռնադրության հուզիչ արարողությունը վերջանում է ձեռնադրող սրբազանի «Պահպանիչ»-ով։

Սարկավագների ձեռնադրությանը ներկա էին Վեհափառ Հայրապետը, ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյանը և գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը։

Սուրբ պատարագից հետո, վերատեսուչ սրբազանը նորընծա սարկավագներին առաջնորդում է Վեհարան՝ Վեհափառ Հայրապետի օրհնությունն ստանալու համար։

Նորընծա սարկավագներն են.

Բարեշնորհ Ժիրայր սարկավագ Կոնսուլյան, *ծնված 1935 թվականին Կահիրեում (Եգիպտոս), Հոգևոր Ճեմարան է ընդունվել 1957—1958 ուսումնական տարում։*

Բարեշնորհ Կարպիս սարկավագ Սերայդարյան, *ծնված 1938 թվականին Բուխարեստում (Ռումինիա), Ճեմարան է ընդունվել 1956—1957 ուսումնական տարում։*

Բարեշնորհ Արշակ սարկավագ Տերտերյան, *ծնված 1937 թվականին Սպահանի շրջանի Խոգիան գյուղում (Իրան), Ճեմարան է ընդունվել 1956—1957 ուսումնական տարում։*

Բարեշնորհ Զոնրապ սարկավագ Շամլյանը, *ծնված 1941 թվականին Հալեպում (Սիրիա), Ճեմարան է ընդունվել 1959—1960 ուսումնական տարում։*





ՄԱԼԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ

Կաթողիկոսական Աթոռին Սիսե էջմիածին փոխադրվելուն գրեթե ժամանակակից է Կոստանդնուպոլսո մեջ Պատրիարքական Աթոռի մը սկզբնավորությունը։ Մեհեմեդ Բ Ֆաթիհ, Օսմանյանց թագավորը, կայսրության մայրաքաղաքը գրավելեն ետքը պետք ունեցավ արմատական կարգադրություն մը ընել հույներուն հպատակությունը ապահովելու համար։ Օսմանյանց օրենսդրությունը ամբողջապես կրոնական կամ իսլամական էր, և բոլոր անհատական և ընտանեկան և կենցաղական իրավունքները բացառապես մահմեդական կրոնքին սկզբունքներեն ներշնչված էին։ Ասկե առաջ իսլամ պետությունները քրիստոնեական երկիրներ նվաճած ատենին, երկու պայմաններեն մեկուն հետևելու պարտավորված էին. կամ իրենց կրոնքը բռնի ընդունիլ տալ իրենց նվաճած ժողովուրդներուն, և կամ անոնց ինքնուրույն կառավարություն և հատուկ կենցաղական կացություն մը շնորհել։ Արդ, այս երկու պայմաններուն ոչ մեկը հնար էր հաստատել Կոստանդնուպոլսո մեջ, որ նորահաստատ իսլամական կայսրության մայրաքաղաքը կհռչակվեր։ Մեհեմեդ Ֆաթիհ այդ դժվարությունը լուծեց հույներուն կրոնական պետին, այսինքն է պատրիարքին թողլով այն ամեն կենցաղական և քաղաքական իշխանությունները, որոնք ներքին և սերտ կապակցություն ունեին քրիստոնեական կրոնքին վերաբերյալ կետերուն հետ։ Այս կերպով կրոնական պետին իրավասության ներքև անցան այն ամեն խնդիրներ և գործեր, որոնք կպատկանին քրիստոնյաներու ընդհանուր կյանքին, ամուսնական խնդիրներուն, ընդհանուր դաստիարակության, բարեգործական հաստատությանց, կրոնական պահանջից, եկեղեցական պաշտոնեից, կրոնապատական գործոց և այլն։ Այսպես ծագում առավ Կոստանդնուպոլսո պատրիարքներու քաղաքական իշխանության, կամ կայսերական պատրիկության նման կերպարան մը ստանալը (1453)։

Աշխարհակալ թագավորը, այս կերպով հույներուն կացությունը ճշտելեն ետքը, մտածեց անոնց դիմաց ուրիշ քրիստոնեական տարր մըն ալ կազմակերպել, տարր մը որ ավելի կապված էր իր տերության շահերուն։ Բազմաթիվ հայ գաղթականություն մը փոխադրեց Կոստանդնուպոլիս քաղաքը, և

գայն գետեղեց քաղաքին շուրջանակի թաղերուն մէջ. պարիսպներուն ներքն ու գլխավոր դուռերուն մոտ։ Միևնույն առիթով, իբրև առավել վստահության միջոց, հույները հավաքվեցան քաղաքին մեջտեղերը, աշտարակներեն և ամրություններեն հեռու։ Արդեն ալ հայերը՝ Օսման Ա Ղազի թագավորին օրեն թուրքերուն կատարյալ վստահությունը կվայելեին։ Այս առթիվ նոր հայ գաղթականությունը հույներուն համար կազմակերպված ձեին և դիրքին վերածվեցավ։ Հովակիմ եպիսկոպոս, որ Փոքր-Ասիո մեջ գտնվող հայ գաղթականներուն առաջնորդն էր, և Կուտինայի Բրուսա անցած էր, Բրուսայի Կոստանդնուպոլիս փոխադրվեցավ, և ստացավ միևնույն ատիճանն ու պատվանունը, իշխանությունն ու իրավասությունը (1461), որոնք հույներուն պատրիարքին տրված էին։

Այս կերպով կառավարության ճանչցած, հույն և հայ, երկու պատրիարքները նկատվեցան արևելյան քրիստոնեության երկու մեծ հատվածներուն գլխավոր պետերը։ Այդ բաժանումը հիմնվեցավ պարզապես հավատոդավանության տարբերության վրա, տոհմային և ազգային տարբերությանց տեսակետեն անկախաբար։ Որչափ երկարնակ օրթոդոքսներ կային, հույն, բուլղար, սերպ, առնաուտ, ալպան, բուլղան, ռուտեն, խրվաթ, գարամանցի, ասորի, մելքիդ, արաբացի, ամենքն ալ իրենց ժողովուրդներով ու պետերով հույն պատրիարքին ներքև դրվեցան։ Մյուս կողմեն ալ երբեմն միաբնակ ուղղափառներ կային, հայ, վրացի, աղվան, ասորի, քալդեացի, զատի, հաբեշ, ամենքն ալ իրենց ժողովուրդներով և պետերով ենթարկվեցան Հայ Պատրիարքարանի իրավասության։

Հրեաներ այն աստեն օրինավորապես և պաշտոնապես ճանչված մարմին մը չէին կազմեր, իսկ հռոմեադավան կաթոլիկներ, որք էին լեվանտիեն կոչվող արևելյի լատիններ, պարզապես իբր օտարազգիներ կնկատվեին։ Իսկ բնիկ արևելյիներեն անոնք, որ հռոմեական կաթոլիկության կանցնեին, իրենց դավանափոխությամբ տարբեր հասարակության կերպարան կամ կացություն չէին ստանար, և նույնիսկ կրոնքի արտաքին գործողությանց համար, ինչպես են կնունք, պսակ, թաղում և այլն, իրենց պատկանած պատրիարքության պաշտոնյաներուն դիմելու ստիպված էին։ Այդ կազմակերպությունը անփոփոխ մնաց հայորդ դարերու մեջ, և միայն նոր վերջացող դարուն կեսին մոտերը կաթոլիկ միլլեթ մը կազմվեցավ ինքնուրույն Պատրիարքությամբ (1830), և անկե ետք սկսան հասարակություններ հետզհետե բաժնվիլ ու շատնալ դավանություններու և ծեսերու տարբերությանց համեմատ։

Կոստանդնուպոլսո հայ պատրիարքները սկսան հետզհետե իրենց իշխանությունը կազմակերպել և իրավասությունները կեդրոնացնել, և հնարավորության սահմանին մեջ, իրենց ձեռքը ամփոփել ազգային ներքին վարչությունը։ Իրենց վարչական գործունեությունը հետզհետե տարածվեցավ բոլոր գավառներուն վրա, նույնիսկ հոգևորապես Սսո և Աղթամարա Կաթողիկոսությանց և Երուսաղեմի Պատրիարքության պատկանյալ թեմերուն վրա։ Հայոց Պատրիարքության առաջին ատեններուն պատմությունը, Աթոռներու և թեմերու փոխադարձ խնդիրներու շարք մըն է, շարունակ խռովություններու և պատերազմական շփոթություններու հետ խառնված։

(«Հայոց եկեղեցին», Կոստանդնուպոլիս, 1911, էջ 101—104)։

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ

(ԸՆՈՒԹԻՆ ԱՆՑՆԵԼԵ ԱՌԱՋ)

Ա

ԽՂՃԻ ԵՎ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔ

1. ՄՈՌՅՎԱԾ ՊՈԼԻՍԸ

Այր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի խմբագրության հեռագիրը զիս շվարեցուց։ Պահ մը խանդավառեց զիս անշուշտ։ Հաճելի էր ինձ համար լսել, որ պիտի նշվի Պոլսո Հայ Պատրիարքության հինգհարյուրամյակը, և որ հետևաբար պիտի ոգեկոչվի այդ առթիվ հինգ դարու պատմություն մը, որ այնքան մոտ է մեզի և այնքան հեռու։ Այդ հինգ դարերը որքա՜ն շահեկան քաներ ունին մեզի պատմելու։

Այդ հինգ դարերը պետք է որ պատմվեին, ու պետք էր որ նշվեր անոնց բացառիկ դերը հայ ժողովուրդի կյանքին մեջ։ Որքա՜ն տեղին էր ուրեմն նախաձեռնությունը ոչ միայն դեպք մը ոգեկոչելու, այլ նաև առիթ դառնալու համար, որ քրքրենք մեր նորագույն պատմության քանի մը մոռցված էջերը։

Կխոստովանիմ, որ վաղուց է կուզեի գրել Պոլսո և իր դերին մասին։ Ու հիմա որ առիթն է ահա, շփոթեցա մեկեն։ Ուրկե՞ սկսիլ և ի՞նչպես սկսիլ։ Հատակագիծը պատրաստ կեցեր է առջևս, գրքի ու թուղթի դեզերը կուտակվիլ կսկսին սեղանիս վրա, բայց ես դեռ կտատամսիմ։ Հույսերով ու կսկիծներով, ալեկոծությամբ ու մաքառումներով լեցուն դաշտ մըն է առջիդ, զոր պետք է պրպտես ուշադիր և պաղարյուն։ Պետք է անգամ մըն ալ վերապրիս հին օրերու այդ հուզումները, փորձես բացատրել, ամփոփել զանոնք ու հետո միայն հանձնել թուղթին։

Շատ բան գրված է անշուշտ Պոլսո հայ գաղութին մասին, բայց գրեթե բան մը ըսված չէ։ Այո՛, գրքեր կան գրված Պոլսո պատրիարքներուն մասին և անոնցմե շատերուն վրա դատ-զատ։ Զանազան երկերու մեջ էջեր նվիրված են Պոլսո պատրիարքներուն և անոնց ժամանակակից դեպքերուն։ Առանձին ուսումնասիրությանց նյութ եղած է նույնպես Պոլսո հայ կյանքը, ինչպես և խոսված է շատերուն մասին հայ գաղութին մեջ դեր կատարած դեմքերեն։

Բայց դեռ չունինք ամբողջական ակնարկ մը այն հինգ դարերուն վրա, որ հայը անցուց սուլթաններու մայրաքաղաքին մեջ, և մանավանդ անոր կատարած դերին հայ ժողովուրդի պատմության մեջ։

Հայկական Պոլիսը իր մենագրությունը չունեցավ ցարդ, ինչպես ունեցան այնքան հայ շրջաններ, և այսպիսով առավել կամ նվազ պատկառելի ուսումնասիրությանց մեջ շատ բան փրկվեցավ հին օջախներե, որոնք ոչ ես են։ Մինչդեռ Պոլիսը դեռ իր պատմագրին կսպասե, որ, ավա՜ղ, միշտ կուշանա, և քանի կուշանա, դեպքերը կհեռանան մեզմե ու կկլլանան այնքան թանկագին աղբյուրներ։

Ձենք գիտեր, պիտի գտնվի՞ սակայն այդ բարի ձեռքը, որ վաղվան սերունդներուն ճանչցնե գաղութ մը, որ բացառիկ դեր կատարեց հայ նոր վերածնության մեջ և թոզուց լույսի հետքեր։

Ով որ պիտի գրե այդ մենագրությունը, պետք է լայն սիրտ ու տենդուն ջիղեր ունենա, ոչ խանդավառվելու համար մեծ գաղութի մը փայլուն պահերեն, ոչ ալ տարվելու համար նախապաշարումներեն, որոնք անոր անվան հյուսված են գուրսը։ Պոլսո գաղութը այն չէ, ինչպես պահ մը ան երևակայեր էր ինքզինքը իր փառքի օրերուն մեջ, ոչ ալ ան, ինչպես հեռվեն ճանչցված ու դատած են զայն։

Այդ գաղութը պետք է ղննել այն պայմաններուն մեջ, որոնք զայն ստեղծեցին ու դիմացուցին հինգ դար, ու դերին մեջ, որ ան կատարեց հինգ դար շարունակ։

Մերը համեստ փորձ մըն է միայն, գրեթե ուրվանկար մը։ Սպասելով որ Պոլսո հայ գաղութին մենագրությունը գրվի օր մը, սույն տողերը գրողը այստեղ պիտի փորձե գիծերը տալ դեպքերով ու դեմքերով այնքան հարուստ հայ գաղութի մը, որ ավելի քան հինգ դար տրոփեց, և կուզե ինքն ալ տոնել իր հինգ դարերը։

Թող այս տոնը առիթ մը ըլլա վերհիշելու մոռցված Պոլիսը։

2. ԴԱՏԱՐԿ ՄԱԽԱՂՈՎ

Պետք է երթալ Պոլիսը փնտռել նախ, զայն տոնել փորձելե առաջ։ Ու դայն դտնելը այնքան ալ դյուրին չէ հիմա։

Ցճանչցանք Պոլիսը, երբ անոր ծոցն էինք, և երբ իր ափերեն հեռացանք, մշուշի մեջ թողուցինք մենք զայն։ Ու քանի տարիները կանցնին, կխտանա մշուշը, ու մեզմե կհեռանա Պոլիսը։

Մշուշի մեջ է անոր անցյալը նախ։ Մեր պամության մեջ չկա ավելի մութ շրջան, քան այն դարերը, երբ հայերն ու Թուրքերը առաջին անգամ շփման մեջ մտան։ Շրջան մըն է, որուն մասին այնքան ժլատ են հայ աղբյուրները, իսկ Թուրք աղբյուրները՝ շփոթ։

Աղբյուրներ մեզ կպակսին նախ հայերուն մասին, որ Պոլիս էին Ցաթիհեն առաջ։ Ապացուցված է, որ հոծ թիվով հայեր կային Պոլսո մեջ Թուրքը դեռ հոն չմտած։ Պետք է շողի թելերու կառչիլ քանի մը նոթ քաղելու համար այդ հին հայերուն վրա։ Եվ ի՛նչ ուժ կունենա շողի այդ վտիտ թելը, երբ քեզ կձգե կես ճամբան, առանց հայտնելու փարատել մառախուղը, որ շուրջդ է։

Ցաթիհի շրջանեն ևս հայ աղբյուրներ գրեթե չունինք։ Երկու հայ տաղասացներ, որոնք երգած են Պոլսո առումը Թուրքերու կողմե զույդ ողբերու մեջ, ոչինչ կըսեն հայերուն մասին, որոնք անշուշտ կային հոն ճակատագրական այդ օրերուն։ Ըլլա Աբրահամ Անկյուրացին, ըլլա Առաքել Բաղիշեցին, աղետը սգալով տարված, բան մը չեն ըսեր մեզի իրենց տեսած հայերուն վրա։

Թուրք աղբյուրներուն գալով, անոնք շատ ալ պրպտված չեն։ Նոր է որ Թուրք և հայ բանասերները կթոթվեն հին նախապաշարումները։ Ով սակայն ցանցառ են նյութերը, զորս Թուրք հին հեղինակները կրնան մեզ հայթայթել Պոլսո հայ գաղութի անցյալին մասին։ Թուրք հին պատմիչներեն շատերը ուրիշ բան չեն ըրած հաճախ, բայց եթե ճոռոմ նկարագրությանց, արտեղյան չափազանցություններու և տարտամ ակնարկությանց մեջ կարծես թե սքողել բուն դեպքերը, լուռ անցնելով հիմնական դրվագներու վրայեն, ու հետևաբար մեծ ճիգերու պետք ունինք, անոնցմե քանի մը ստույգ տվյալներ քաղելու համար։ Որքան թանկագին պիտի ըլլար մեզ համար, օրինակ, Էվլիա Ցելեբին, եթե ֆանթեզին չխառներ իր տեսածներուն և լսածներուն, այն ընդարձակ տեղեկությանց առթիվ, որ կուտա իր ուղեգրության մեջ հայկական շրջաններուն մասին։ Պոլսո հայերուն վրա շատ քիչ ծանոթություն կուտա սակայն ան, և ան ալ իր Ուղեգրության առաջին հատորին մեջ, որ նվիրված է Սուլթաններու մայրաքաղաքին։

Պաշտոնական Թուրք պատմիչները, այսինքն անոնք, որ պարտականություն ունեին արձանագրելու օրը-օրին Թուրք սուլթաններու սխրագործությունները, ոչինչ կրսեն հայերու մասին։

Վակաս-նյուվիսներու շարանը, որ Հիջրեթի ԺԱ դարեն կսկսի Նայիմայով և մինչև 1264 (1847) կհասնի, վերջ գտնելու համար Ահմեդ Լութֆիի հետ, դժբախտաբար շատ քիչ բան կպատմե մեզի Պոլսո հայության մասին։ Անոնց երկու վերջիններն են առավելապես, Ահմեդ Ջեվդեթ փաշան և Ահմեդ Լութֆին, որոնք պատմագրած են շուրջ երեք քառորդ դարու շրջան մը 1188-են մինչև 1264 (1774—1847), և որոնք փաստաթղթեր ալ կուտան Պոլսո հայ կյանքը խոռվող դեպքերուն հետ կապված, առաջինը իր պատմության Ա և ԺԱ հատորներուն, իսկ երկրորդը՝ Ա-ին և Է-ին մեջ։

Փոխարեն, հայ և Թուրք հարաբերությունները հեազոտողներուն համար անակնկալներ գուցե վերապահեն Թրքական դիվանական նյութերը։ Իսկ անոնք լույսին հանված չեն լրիվ, գոնե ինչ կվերաբերի մեզ շահագրգռող հարցերուն։ Թուրք նոր պատմաբաններուն համար, որոնք Օսմանյան կայսրության անցյալը հետազոտելով կդրաղին ներկայիս, թանկագին աղբյուրներ եղան ու կըլլան դիվանական այդ նյութերը. «Մաեոենամե»-ները, «Վամբֆնամե»-ները, «Ռուզնամե»-ները, որոնք հետզհետե երևան կուգան

կայսրության հին դիվաններուն մեջ, շատ բան փոխեցին արդարև ցարդ գիտցվածներեն։ Ու դեռ որքա՞ն նյութեր կան չպրպտված անոնց մեջ։ Ֆայիք Ռաշիդ Ունաթ, թուրք պատմության կաճառի նախագահը, բալկանագետներու միջազգային հանդիպումին առթիվ, որ այս հուլիսին տեղի ունեցավ Սինայայի մեջ, քառասուն միլիոնի կհասցներ թուրք դիվաններու մեջ կուտակված փաստաթղթերու թիվը։ Ավելի քան հավանական է, որ շատ բան լուսաբանեն այդ վավերագրերը նաև մեր մասին։

Բարեբախտաբար թուրքերուն մեջ ևս պատմաբաններու սերունդ մը հասունցավ և գիտական մեթոդով մտավ անոնց ուսումնասիրության մեջ։ Արդուլռահման Շերիֆեն հետո, որ հին պատմիչներուն շրջանը փակեց, ավելի ճիշտ, նորերուն շարքը բացավ, արդեն գիտական մտահոգությունը սկսավ ուղեցույց դառնալ թուրք պատմաբաններուն համար ալ։

Եվրոպական աղբյուրներն ալ վստահելի չեն կարծված չափով։ Նախ քիչերն են միայն անոնցմե անկողմնակալ Արևելքը Եվրոպային պատմելու ժամանակ։ Իսկ ինչ կվերաբերի մեզի, եվրոպացի հեղինակները կամ լուռ են, և կամ թերի կճանչնան հայը։ Պետք է շատ շարշարվիս քանի մը ափհափ նոթեր գտնելու համար հայերու մասին, նույնիսկ այնպիսի հեղինակներու մոտ, որոնք Օսմանյան կայսրության ամբողջական պատմությունը շարադրած են։ Ստույգ շատ քիչ բան ըսած են մեր մասին՝ Թուրքիան իբրև թե լրիվ պատմող օտար այդ հեղինակները, և ստիպված ենք ապավինիլ առավելապես ճանապարհորդներու նոթերուն։

Եվ այնուամենայնիվ եվրոպացի ճամբորդներու ուղևորական նոթերն իսկ լրիվ չունինք Պոլսո մասին, ինչպես չունինք առհասարակ մեզ հետ կապված ուղեգրություններեն շատ-շատերը։ Փորձը, որ ըրավ Հովհաննես Հակոբյանը Երևանի մեջ այդ ուղեգրությունները հայերենի վերածելու, կանգ առավ դժբախտաբար։ Հարություն Քուրտյան առիթե առիթ արտասահմանի հայ պարբերականներուն մեջ շարունակեց տալ մոռցվածներեն ոմանք։ Օտար աղբյուրներ պրպտելու այդ աղվոր կիրքը Հայկ Պերպերյանն ալ ունի տարիներե ի վեր, մանավանդ ինչ կվերաբերի անոնց, որոնք Պոլսո մասին ևս կխոսին։ Եվ սակայն այդ աղբյուրներուն մեջ դեռ որքա՞ն անտեսվածներ, չգիտցվածներ կան, որոնք պիտի կրնային արժեքավոր նոթեր տալ մեզի, թեև այդ նոթերը շարադրված ըլլան չատ հաճախ հապճեպ և ափհափ, քաղված երբեմն ալ պղտոր աղբյուրե։ Բացառություններ անշուշտ ասոնց մեջ ալ կան, և կրնան երբեմն որոշ չափով հագեցնել մեր հետաքրքրությունը։ Ո՞վ մեզ այնքան շահեկան նոթեր պիտի տար ԺԶ դարու հայկական Պոլսո մասին, եթե չըլլար, օրինակ, Գերլախը։

Շատ ավելի մեծ չափով զգուշություն և վերապահություն կհարկադրեն մեզ մարդորներու գրչեն ելած էջերը։ Արդեն սարսափ կուգա վրադ, երբ կկարդաս անոնց խեղաթյուրումներն ու սուտերը։ Բավ է հիշել Կղեմես Գալանոսը, որ ոչ միայն շարաշուք դեր ունեցավ ինք անձամբ դավանական այն վեճերուն մեջ, որոնք հուզեցին Պոլսո հայ կյանքը ԺԵ դարուն և որ Պոլսեն հետո գնաց խռովել լեհահայոց գաղութը ևս, այլև լրբաբեց հայ պատմությունը եռահատոր իր գործին մեջ, որ Հռոմ տպվեցավ 1650—1661, «Միաբանութիւն Հայոց Սուրբ Եկեղեցւոյն ընդ Մեծի Սուրբ Եկեղեցւոյն Հռոմայ» խորագրին ներքև։

Նոր օրերուն է, որ եվրոպացի հեղինակները այնքան ալ չեն արհամարհեր փոքրիկ այս ժողովուրդը, որ քրտինք թափեց Արևելքի և Արևմուտքի հանդիպման այս կետին վրա։ Հայկական դատը, որ պահ մը պիտի փորձեր արթնցնել մարդկության թմրած խղճմտանքը, մեզմով պիտի հետաքրքրեր պատմությամբ զբաղողներն ալ։ Ու մեր դատը կազմեց տակավ մեծ գրադարան մը։ Բայց երբ դատը իր հունը փոխեց, լռեց նաև Եվրոպան, թեև գիտական շահագրգռություն մը միշտ ալ մնաց։ Պոլսո հայ անցյալը ևս այս հետաքրքրության ճանկը կիյնա երբեմն։ Եվ այդ շահագրգռության չե՞նք պարտիր մինթե բացառիկ այն փաստաթուղթը, զոր մեջտեղ հանեց դեռ նոր Ֆրանց Բարինգեր գերման արևելագետը։ Ֆաթիհի օրեն մնացած միակ հրովարտակն է, որ մեզ կվերաբերի և որուն պիտի անդրադառնանք մենք ալ իր տեղին։

ԺԷ դարու սկիզբեն է, որ կհայտնվին ժամանակակից հայ աղբյուրները։ Երկու թանկագին երկեր մեզ հասած են այդ օրերեն։ Սիմեոն Լեհացիի ուղեգրությունը նախ, որ քանի մը տասնյակ տարի առաջ միայն հայտնաբերվեցավ և որ թանկագին լուրեր կուտա մեզի Պոլսո մասին ալ։ Սիմեոն Լեհացիի սույն ուղեգրությունը, որ լույս տեսավ 1936-ին Հ. Ներսես Ակինյանի կողմե, ամենեն վստահելի աղբյուրներեն մեկն է, զորս երբևիցե ունեցած է մեր պատմությունը ԺԷ դարու անցքերուն մասին։

Պոլսո այդ շրջանի անցքերը շատ ավելի հասկնալի կընե մեզ սակայն Գրիգոր Դարանեղեցին, որուն ժամանակագրությունը, լույս տեսած 1915-ին Երուսաղեմի մեջ Մեսրոպ եպիսկոպոս Նշանյանի ջանքերով, շատ բան մեզ գիտցուց ԺԷ դարու Պոլսո անցուդարձերուն վրա, որոնց մեջ գործոն դեր կատարեր էր Դարանաղեցին ինք ևս։

Այս երկու հեղինակները անով ավելի թանկագին կդառնան այսօր մեզի, որովհետև այնպիսի նյութեր մեզ կուտան, որոնք մատչելի չէին եղած Պոլսո գաղութով երբեմն գրաղողներուն։ Օրմանյան, օրինակ, անոնց ծանոթ չէր մէ դարու դեպքերը շարադրած ատեն, ինչպես որ ծանոթ եղած չէին և բոլոր անոնք, որոնք իրմե առաջ գրաղած էին նույն այդ մէ դարով։

Մէ դարու դեպքերուն ամենեն վավերական շտեմարանը, որ Առաքել Դավրիժեցին է, դժբախտաբար շատ քիչ բան ունի Պոլսո մասին, ան ալ ժամանակակից կաթողիկոսներու Պոլիս այցը պատմելու ատեն։

Մէ դարու կեսերեն հետո բացառիկ դեմք մը կհայտնվի հանկարծ հայ հորիզոնին վրա։ Երեմիա Չելեպի Քյոմյուրճյանն է։ Համբավված իր իսկ գարուն մեջ և մինչև մեր օրերուն, նոր է միայն, որ տակավ երևան կուգան իր ձեռագիր երկերը, որոնցմե ոմանք, ինչպես «Ստամպոլայ պատմութիւն»-ը, սերտ կապ ունին Պոլսո հայ անցյալին հետ։ Ոչ ոք պիտի կրնար այնքան անաչառ և անկողմնակալ ըլլալ իր օրերու մարդիկը ու պատահարները դատելու ատեն, որքան եղած է Երեմիա հակառակ իր ունեցած մոտեն շփումին անոնց հետ, և ավելի քան ցանկալի է, որ մեր բանասիրության սեփականություն դառնան ինչ որ ան անտիպ ունի զանազան մատենադարաններու մեջ։

Ինքնակենսագրությունը, զոր մեզ թողած է մէ դարեն Ավետիք Եվդոկիացին, պետք է նույնպես դասել սկզբնաղբյուրներու շարքին, թեև ան շարադրված ըլլա «գերության» պայմաններու մեջ, այսինքն փարիզյան բանտի մը խուցը, ուր տարած թիմած էին զայն Հռոմի գործակալները Պոլսո Պատրիարքական Աթոռեն զայն առևանգելե և կաթոլիկ դարձնելե հետո եղերական պարագաներու մեջ։ Այդ ինքնակենսագրությունը, այնուամենայնիվ, մեզ կպարզե մեթոդը, զոր կիրարկեց Հռոմ, Պոլսո հայությունը իր ճանկը ձգելու համար, «սասպետական» Ֆրանսայի և իր Պոլսո ներկայացուցիչ Ֆերիոլի փոքրոգի մեղսակցությամբ։

Մէ դարը այլապես ալ քանի մը վստահելի աղբյուրներ կուտա։ Ադոնցմե մեկը Սարգիս դպիր Հովհաննիսյանն է, որուն ժամանակագրությունը թեև դեռ անտիպ, բայց աղբյուր ծառայած է դարու դեպքերը պատմել փորձողներուն, Հրանտ Ասատուրին, Օրմանյանին և մանավանդ բժիշկ Թորգոմյանին, որուն սեփականությունն էր արդեն հիշյալ ձեռագիրը։

Մեր մոտավոր անցյալը շատ ավելի մութ պիտի մնար մեզ, եթե չըլլային սակայն ձեռադրելու հիշատակարանները, քիչ մը ավելի լույս սփռելու համար դարերու վրա, որոնք այնքան մոտիկ են մեզ և սակայն այնքան անծանոթ։ «Ձեռագրաց ցուցակներեն հետո, որոնց դիտական ուղին Տաշյանը բացավ» և որոնք հետզհետե սկսան կազմվիլ ու տպվիլ, մեր բանասիրությունը շատ մեծ բան դիտցավ արդարև շրջաններու մասին, որոնք դժբախտաբար իրենց պատմիչը ունեցած չէին։ Այնպես որ հիշատակարանները, որոնք ներմուծվեցան «Ձեռագրաց ցուցակ»-ներու մեջ, կուգային դարմանել մասամբ պատմական աղբյուրներու այդ սովը։

Այս մասին մեջ շատ բան կպարտինք, օրինակ, Ամիրդովլաթ Ամասիացիին։ Մէ դարու համբավավոր այդ հայ բժիշկը, որ հորինեց շարք մը բժշկական արժեքավոր երկեր, որոնցմե ոմանք կմնան իրենց բնագրով և ուրիշներ իրենց ընդօրինակությանց մեջ, իր աշխատությանց կցեց նոթեր ալ, որոնք ամենեն ճշգրիտ թվականներն ու անունները կուտան Պոլսո գաղութին կազմության շրջանեն։

Ձեռագրերու հիշատակարաններեն է, որ նոթեր կքաղենք հետագա շրջաններու մասին ալ, և այս տեսակետով, գաղութներու կյանքը ուսումնասիրողներուն համար թանկագին օժանդակ մը ըլլալ կոչված են հիշատակարանների համադրական ժողովածուները, զորս նախաձեռնեցին գրեթե միևնույն ատեն Գարեգին Կաթողիկոս Հովսեփյան Անթիլիասի և Լևոն Խալիկյան Երևանի մեջ, նախաձեռնություն, զոր այս վերջինը կշարունակե լրման հասցնել հայրդական հատորներու մեջ լույս ընծայելով մեզ հասած բոլոր հիշատակարանները։

Թանկագին նպաստ մը մեզ կրնային բերել նաև վիմական արձանագրությունները։ Դժբախտաբար Պոլիսը այնքան հարուստ չէ եկեղեցիներու հին հիշատակարաններով։ Ամենահինն անոնցմե 1437 թվականեն մնացած խաչքար մըն էր, որ կգտնվեր Ղալաթիո եկեղեցին, և պետք էր ավելի նոր ժամանակներու գալ, ուրիշ արձանագրությանց հանդիպելու համար։

Գալով տապանաքարերուն, ԺԸ դարու սկիզբեն միայն կթվագրվին անոնց հնագույնները, և անոնց նպաստը ևս շատ դույզն է դժբախտաբար։

Ըստ Ինճիճյանի, Պոլսո հնագույն գերեզմանատան՝ Պալըքլըի մեջ, «տապանագիրք որք երևին՝ ոչ յառաջ են քան զՌ (1551) թուական մեր, իսկ նախնագոյնք, կամ են անգիր, և կամ թաղեալք ի խորս»[1]։ Եվ սակայն ադոնք ալ չկան այսօր։

[1] Հ. Ղուկաս Ինճիճյան. «Աշխարհագրութիւն.... Եւրոպա», հատոր Ե, էջ 118։

. . . Այսքաներ սակայն բավական չէ մշուշին ետին տեսնելու և ճանչնալու համար հայկական հին Պոլիսը։

Եվ դժբախտ բան է երբ ճամբա կելլես դատարկ մախաղով։

3. ԱՂԲՅՈՒՐ ԳՏՆԵԼՈՒ ՀՈՒՅՍՈՎ

Եվ սակայն պետք է ճամբա փնտռել նույնիսկ մութին մեջ։ Եվ ստիպված ես արդեն ապավինիլ ուրիշներու փորձերուն մշուշին մեջեն ճամբա բանալու։

Բարեբախտաբար հայ բանասերներու պատկառելի թիվ մը զբաղած է Պոլիսով։ Ունինք արդեն գրքերու դեզ մը, որ կրնա ատաղձ ծառայել Պոլսո անցյալով հետաքրքրվողին։ Ավելի մեծ քանակությամբ նյութեր ցրված են թերթերու և պարբերականներու մեջ, թեև անոնցմե շատերը մարդոց անմատչելի ըլլան ներկայիս։ Եվ սակայն բոլոր ադոնք դեռ բավական չեն Պոլիսը լրիվ ճանչնալու համար, քանի դեռ պրպտված չեն օտար բոլոր հեղինակները Պոլսո հայության մասին իրենց ձգած նոթերով, և լույս աշխարհ եկած չեն դիվանական բոլոր նյութերը, հայ թե օտար։

Պոլիսը բանասերներու նյութ կսկսեր դառնալ ԺԹ դարուն հետ միայն։ Եվ սակայն ԺԸ դարն իսկ մեծ երկ մը թողուցեր էր մեզ մեռնելե առաջ։ Վենետիկի մեջ 1784—1785 թվականներուն լույս կտեսներ Ջամչյանի վիթխարի գործը՝ երեք հատորները անոր «Հայոց պատմության»։ Երրորդ հատորին մեջ Ջամչյան առաջինը կըլլար, որ մեզ կպատմեր Պոլսո հայ գաղութին ծագումը, որքան թույլ կուտային առձեռն աղբյուրները այն ատեն։ Հետագա գլուխներուն մեջ ևս ան հաճախ զբաղած է Պոլիսով։ Դավանական վեճերու շրջանը կոխելե հետո, ան կստիպվի հաճախ տուրք տալ այլուր քան ճշմարտության։

Մխիթարյանները հետագային մեզ ոգնության չհասան Պոլիսը լրիվ ճանչնալու մեր փորձերուն մեջ։ Եթե անոնց բան մը կպարտինք, Ինճիճյանի շնորհիվ է։ Ստեփանոս Ագոնցի նախաձեռնությամբ լույս տեսած հատորներու շարքին մեջ երեք հատորը Ինճիճյանինն է, այսինքն անոնք, որ կխոսին Հայաստանի, Եվրոպական Թուրքիո և Պոլսո մասին։ Պոլսո նվիրված հատորին մեջ (1804) է, որ ան կպտտցնե մեզ Պոլսո թաղերը, ու ամեն թաղե բան մը կպատմե մեզի։ «Եղանակ Բիւզանդեանց»-ի մեջ (1794) ան դարձյալ Պոլսո թաղերը կպտտցներ մեզ. բայց հոս արդեն պատմիչը չկար. ան փորձած էր, ավա՜ղ, քերթող դառնալ հոս, ու տող մը լուր չէր տար մեզ օրվան կյանքեն։

«Հայոց պատմության»-ը, զոր 1871-ին Պոլսո մեջ լույս ընծայեց Ավետիս Պերպերյան, փորձ մըն էր մեր պատմությունը շարունակելու Ջամչյանեն ասդին։ Իրականին մեջ Պերպերյանի այս գործը չափով մը միայն կարդարացնե իր խորագիրը. ան պատմությունն է առավելապես դեպքերուն, որոնք հուզեցին Պոլսո հայ կյանքը ԺԹ դարու առաջին կիսուն, մասնավորաբար դավանական վեճերուն, համերաշխության փորձերուն և եղերական դրվագներուն, որոնց թատր եղավ Պոլսո ազգային կյանքը, անցատ հայ կաթոլիկ պատրիարքության մը ստեղծմամբ պահ մը մարելու և նոր պայքարներու առիթ դառնալու համար այս անգամ հայ կաթոլիկ հասարակության ծոցին մեջ, ինչպես նաև Հայոց Պատրիարքարանի շուրջ տեղի ունեցած այն աղմկալի վեճերուն, որոնք պիտի հանդեին 1860-ի Ազգային Սահմանադրության։ ԺԹ դարուն Պոլսո հայ կյանքը ուսումնասիրողին համար փաստերու շտեմարան մըն է անշուշտ այս գիրքը, որ սակայն հնարավորություն չի տար Պատրիարքարանի շրջանակեն շատ հեռանալու և Պոլիսը լրիվ ճանչնալու։

Պոլսո անցյալը ճանչնալու համար մեր առաջին կովանը անշուշտ Օրմանյանն է, որ իր «Ազգապատում»-ի վերջին երկու հատորներուն (1914 և 1927) մեջ հսկա նյութ կուտա Պոլսո անցյալին մասին։ Եվ սակայն իր տվածը բավական չէ գաղութի մը հինգ դարերը ամբողջապես ճանչնալու համար։ Տարբեր մտահոգություններ ունեցած է ան «Ազգապատում»-ը շարադրած ատեն, ձգտելով առավելապես Հայ Եկեղեցվո պատմությունը դրել հայ ժողովուրդի պատմության հետ անոր առնչության մեջ, և հետևարար Հայ Եկեղեցվո պատմության սահմաններեն շատ չհեռանալ հայ կյանքի զանազան հանգրվանները և դրվագները շոշափած ատեն։ Եվ հետո, սիստեմը, որով Օրմանյան մշակած է իր «Ազգապատում»-ը, կաթողիկոսներուն հետ ընթանալով քայլ առ քայլ և անոնց շրջանին ու գործունեության կապելով հայ կյանքի բոլոր երևույթները, կստիպե ընթերցողը, որ գլուխե գլուխ թափառի այս կամ այն նյութն ու երևույթը քաղելու համար։ Եվ այնուամենայնիվ անոր երկը անսպառ շտեմարան մըն է ծանոթությանց, վերլուծումներու և եզրակացությանց, և ընթերցողին համար մեծապես թելադրական և հրահանգիչ են իր դատաստանները, եթե նույնիսկ համաձայն չմրնաս անոնց ի վերջու։ Պոլսո Պատրիարքության դարավոր կյանքը պատմության հանձնելու համար ավելին կսպասվեր անշուշտ նախկին պատրիարքե մը, որ տպված աղբյուրներով գոհացած է ավելի և իր սեփա-

կան հետևություններով. դիվանագիտական նյութերը, եթե հնարավորություն ունեցած ըլլար զանոնք ևս գտնելու, ավելի պիտի արժեքավորեին իր երկը, ու պիտի հանդիսացնեին զայն հուսքի ամբար մը բոլոր ժամանակներուն համար։ Երախտապարտ ենք սակայն մեզ տվածին համար ալ, որովհետև թանկագին ուղեցույց մը պիտի մնա ան մեզի։

Ուսումնասիրությունը, զոր Հրանտ Ասատուր հրատարակեց 1901-ին Ազգային հիվանդանոցի Ընդարձակ օրացույցին մեջ (էջ 77—258) Կոստանդնուպոլսո հայոց և իրենց պատրիարքներուն վրա, շոր կմախք մըն է միայն Պոլսո անցյալին մասին նոթերու հավաքածո մըն է պարզապես, որոնք չեն կրնար ճանչցնել երբեմնի Պոլիսը այնպես ինչպես որ էր։ Աղբյուրներու հիշատակություն գրեթե չունի։ Շարադրված Համիդի ամենեն մոայլ շրջանին, շատ մը դեպքեր ու դեմքեր չեն երևար հոն իրենց հարազատ գիծերով, ու կանդ կառնեն Սերոբյան Հակոբ պատրիարքին հետ, որպեսզի երբեք չխոսվի Ազգային Սահմանդրության փոքր շրջանին վրա։ Եվ սակայն հարևանցի այդ նոթերն անգամ կրնան երբեմն ուղեկցիլ ուսումնասիրողին իր պրպտումներուն մեջ։ Հրանտ Ասատուր այլապես ալ երախտապարտ կրնա իր ընթերցողը Պոլսո ինչ-ինչ դեմքերուն մասին իր այնքան շահեկան «Դիմաստվեր»-ներով, ինչպես նաև պոլսահայ բեմին պատմության նվիրված իր հոդվածներով։

Պոլսո անցյալը զբաղեցուց նաև բժիշկ Վ. Թորգոմյանը։ Բացի Պոլսո հին դեմքերուն և հայ եկեղեցիներուն մասին իր գրած բազմաթիվ հոդվածներեն ու ճշտումներեն, հրատարակելու առթիվ Երեմիա Չելեպիի «Ստամպոլայ պատմութիւն»-ը, ծանոթագրությանց ձևով հարուստ նյութ կուտա Պոլսո թաղերուն և իրենց անցյալին մասին, երեք հատորներու մեջ (1913, 1933, 1938, Վիեննա)։ Պրպտումներու կիրքը, որով ոգևորված էր Թորգոմյան իր գրեթե բոլոր ուսումնասիրությանց մեջ, դժբախտաբար միշտ ընկերացած չէր գիտական լրջության. այնպես որ ծանոթագրություններուն մեջ, որոնք կցված են Երեմիա Չելեպիի գործին, թանկագին տեղեկությանց կողքին դյուրին է գտնել անտեղի շեղումներ, շռայլություն գովեստներու և գերագրականներու, և պոռթկում սեփական հուզումներու ալ։ Թորգոմյան Պոլսո մենագրության վաղվան հեղինակին կաչակցի նաև իր հրատարակած բազմաթիվ հոդվածներով հին հայ բժիշկներու մասին, որոնցմե շատերը ապրած և գործած են Պոլսո մեջ, մաս առնելով նաև հանրային կյանքին, ինչպես էին, օրինակ, Սերվիչեն, Ռուսինյան, Ստեփան փաշա Ասլանյան և այլն։

Բարգեն վարդապետ, հետագային եպիսկոպոս և աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, քանիցս զբաղեցավ Պոլսո անցյալով, մանավանդ անոր ծագման շրջանով։ Հովհաննես Կոլոտ (1904, Վիեննա) և Գրիգոր Պասմաճյան (1908, Փարիզ) պատրիարքներուն նվիրած իր մենագրություններեն զատ, որոնք նույնպես արժեքավոր նպաստ են Պոլսո գաղութի պատմության համար, Բարգեն բազմաթիվ հոդվածներ սփռեց պարբերականներու և տարեգրքերու մեջ, որոնք կլուսաբանեն այդ պատմության ինչ-ինչ պահերը։ Պոլսո Ազգային մատենադարան վարած իր տարիները հարմար առիթ էին նվիրվելու ավելի խոր պրպտումներու. լրջությամբ և հմտությամբ օժտված բանասեր, արժեքավոր նյութեր պիտի կրնար թողուլ ան մեզի Պոլսո մասին ալ, ինչպես եղան, օրինակ, Կիլիկիո Կաթողիկոսության պավազանագիրքը, Գաղատիո Կարմիր վանքին և Ղալաթիո Ազգային մատենադարանի ձեռագրաց ցուցակները, որոնք լույս տեսան հետ մահու։

Պատկառելի է նպաստը, զոր Արշակ Ալպոյաճյան բերավ Պոլսո անցյալին լուսաբանության համար։ Բազմաթիվ հոդվածներե զատ, զորս ան շուրջ վաթսուն տարի ցրվեց թերթերու և պարբերականներու մեջ, իր զանազան մենագրությանց մեջ ևս շոշափած է Պոլսո անցյալը։ Հայ պատմագրությունը ավելի լայն չափով երախտապարտ պիտի մնար սակայն իրեն, եթե այդ անցյալը ան մեզ տված ըլլար ուրույն մենագրության մը մեջ, այնքան մանրամասն որքան խղճամիտ, ինչպես եղան, օրինակ, մենագրությունները, զորս ան նվիրեց Կեսարիո, Եվդոկիո և Եդեսիոյի հայ գաղութներու պատմության։ Ալպոյաճյան լրիվ պիտի կրնար մեզ պատմել Պոլսո անցյալը քան վերապրողներեն որևէ մեկը, հոգ չէ թե ան չկրնար իր նյութը հասցրնել մեր օրերուն, ինչ որ ինքնին փշոտ կալված մըն է մենագրության մը հեղինակին համար։ Արդարև, որքան ալ մարդ խղճամիտ եղած ըլլա հին շրջանները պատմելու առթիվ, չի կրնար պաղարյուն և անաչառ մնալ, երբ իր օրերը կփորձե պատմել, թեև այդ օրերը, պատմած մենագրութենեն անկախ, թանկագին նյութ են միշտ ալ վաղվան պատմագրին համար։ Մենագրությունը շատ ավելի խստապահանջ ճյուղ է քան որևէ կենսագրական կամ տեղագրական աշխատանք, քան որևէ հուշագրություն կամ նկարագրություն, ուր ներելի կմնան անձնական տպավորություններն ու մտածումները, թեև չափի զգացումը պայման ըլլա միշտ։

Մխիթարյան բանասերները մեր օրերուն ալ իրենք գիրենք չարդարացուցին, սկսելով

բուն պոլսեցիներեն։ Եթե չհաշվենք Հ. Գարրիել Մեսնիշյանի Պոլսո հին գերդաստաններեն մեկուն՝ Տյուզյանց նվիրած գրքույկը, և Հ. Գրիգորիս Գալեմքյարյանի լույս ընծայած հատորը կարգ մը պատրիարքներու մասին կամ անոր զանազան հոդվածները ինչ-ինչ պատրիարքներու կամ Բերայի գերեզմանատան շուրջ, «Հանգես ամսօրյա»-ի առաջին սերունդը մեզ չթողուց լուրջ բան մը, իսկ լույս տեսածներն ալ թաթավուն էին հաճախ դավանական կրքով։ Պետք է ավելի ևս մեր օրերուն գալ, որպեսզի Պոլիսը նյութ դառնա դարձյալ Մխիթարյաններուն։ Հ. Եփրեմ Պողոսյան ճյուղագրական ուսումնասիրություններ գրեց, օրինակ, երկու կաթոլիկ տուհմերու՝ Կյոլեօղլու և Ալլահվերտեան գերդաստաններուն մասին, զորս շեշնչնալով ալ մեր պատմությունը կորուստ չէր ըներ, և ուրիշ ավելի մանրակրկիտ գործ մը Պոլսո Կրբեմնի հայ մշակութային ընկերությանց մասին, գործ, որ թեև ինքնին հետու է պատկերացնել Պոլսո մշակութային կյանքը իր ճիգերուն և հագթանակներուն մեջ, կրնա սակայն ուղեցույց դառնալ այդ կյանքը պրպտողին։ Խոսքը չենք ըներ այն գրություններուն, որոնց մեջ Հ. Ներսես Ակինյան շոշափած է ժամանակ առ ժամանակ Պոլսո անցյալը ևս, ինչպես էր, օրինակ, անոր գիրքը Եբեմիա Չելեպիի մասին, և որոնց մեջ, ըսենք ի պասիվ իրեն, դրեթե միշտ վեր մնաց ան դավանական կիրքն։

Հ. Գ. Մրմրյան որքան հաճելի իր ինքնատիպ ոճին և իմաստասիրական վերացումներու մեջ, նույնքան խոցելի է, երբ կփորձե զբաղիլ պատմական հետազոտություններով։ Գիտական արժեքն զուրկ եղան հետևաբար անոր հրատարակած գրքերը պոետ Խաչատուր Միսաքյանի, Հովհաննես Բրուսացի Տերոյենցի, Թրքահայոց վաճառականության, ինչպես և անոր «Ստվերք հին դեմքերուն»-ն, որոնք շատ-շատ նոթեր կրնան հայթայթել Պոլսո անցյալ դարը պրպտողներուն։

Դժբախտաբար զուլզն եղած է նաև նպաստը, զոր բերավ Կարապետ Բասմաջյան Պոլսո հայ անցյալին ուսումնասիրության, և այն ալ ճշտելու առթիվ լուսաբանության կարոտ ինչ-ինչ դեպքեր և դեմքեր, և նաև խոսելու առթիվ հին հայ բժիշկներու վրա, որոնք կապ ունեցած են Պոլսո հետ։

Որքա՜ն շահեկան գլուխ մը պիտի ըլլար Պոլսո երկերը գննողին համար դերը, զոր հայ արվեստագետն ու արհեստավորը ունեցան Վոսփորի ափերուն վրա, դեր, որ նույնքան փառավոր էջ մը պիտի կազմեր ինքնին հայ արվեստներու պատմության մեջ։ Մանավանդ ինչ կվերաբերի մեզմե արդեն հեռացող դարերուն, գրեթե ոչինչ գիտենք, և հետևաբար հաճելի պիտի ըլլար գիտնալ այն հայերուն մասին, որոնք շենքերով ողողեցին Պոլիսը, քյոշկեր և պալատներ ծաղկեցին, նկարներով զարդարեցին անոնց պատերը և հոչակեցին հայ ոսկերչությունը։ Ոչ ոք պիտի կարենար այնքան հեղինակորեն օգնության հասնիլ այդ առթիվ հայ բանասիրության քան Արմենակ Սագրզը, որ էվզաֆի թանգարանին նախկին տնօրենի իր հանգամանքով և մանավանդ իրեն ճանաչող, իր ֆրանսերեն ուսումնասիրություններով հնարավոր նպաստը բերավ անտեսված մարզ մը լույսին հանելու համար։

Պոլսո երեկը մեզ ճանչցնելու համար ոչ նվազ ճիգ թափեց, նոր օրերու մեջ, ստվերը քաշված հայ բանասեր մը, որ Գ. Հնասեր կստորագրե և որուն քաղած տեղեկություններուն համար չի կրնար շնորհակալ չըլլալ Պոլսո հայ անցյալով որևէ զբաղող։ Անոր կպարտինք ինչ-ինչ շահեկան նյութեր, ինչպես հայ արհեստավորներու և առևտրականներու, թուրք բանակին և նավատորմին մեջ հայ հին ծառայողներու, նույնպես և Պոլսո հին հայ կենցաղին մասին։

Պետք չէ՞ր որ քիչ մը ավելի բան գիտնայինք այն կյանքին վրա, որ Պոլսո ամիրաներուն եղավ։ Ամբողջ երեք դար իշխեցին անոնք Պոլսո հայ կյանքին, բայց ո՞վ գիտե անոնց մասին լուրջ բան մը։ Դժգույն փորձերը, զորս բրին Առաքել Քեչյան և Թորոս Ագատյան՝ փառապակ հյուսելու համար ակնցի ամիրաներուն, գոնե անոնցմե ոմանց, հեռու են պատկերը տալե անփառունակ տիրապետության մը։ Շատ տարտամ կերպով խոսված է նաև ամիրայական երեք տոհմերու վրա, որոնք հայ ժողովուրդին բարիք ալ բերին, և որոնք էին Նալյան, Տատյան և Տյուզյան ընտանիքները։ Իսկ ամիրաներուն մեջեն ան, որուն նմանով հպարտ կրնա ըլլալ որևէ ժողովուրդ՝ Գազազ Արթինը, հեքիաթներու մեջեն միայն կերևա մեզի, թեև անոր կյանքին դրքեր ալ նվիրված ըլլան, ինչպես Ստեփան Փափազյանի և դոկտ. Մանվել Ութուճյանի հորինած կենսագրությունները։

Պատմությունը թերացած պիտի ըլլար իր պարտականության մեջ, եթե այնքան թեթև անցներ ոգևորության վրայեն, որ խանդավառեր էր Պոլիսը ասկե ճիշտ դար մը առաջ։ Ազգային Սահմանագրությունը, որուն հարյուրամյակը լրացավ դեռ նոր, այդ ոգևորությունը կխորհրդանշեր։ Մարմին առած ծափերու և երգերու մեջ և խծբծված ամբողջ դար մը, կարժեր որ ան ավելի պաղարյուն նժարը դրվեր, իր սնովն ու ճերմակովը։ Այդ աշխատանքը կատարողին համար անշուշտ որ պիտանի են ուսումնասիրությունները, որոնք նվիրվեցան անոր, ինչպես են Առաքել

Սարուխանի դիրքը։ Արշակ Ալպոյաճյանի երկարաշունչ հոդվածը 1909-ի «Ընդարձակ Օրացույց»-ին մեջ, և բժիշկ Թորգոմյանի գրած զանազան հոդվածները անոր հիմնադիրներեն ոմանց մասին։ Եվ այնուամենայնիվ գայն պետք է կրկին քննել հարյուրամյա իր կյանքին անաչառ վերլուծումովը։

Եվ ի՞նչ գաղտնիքներ պիտի առնե հետը տանի Պոլիսը։ Վաղը ո՞վ պիտի գիտնա պուտ մը բան խորհրդավոր այն աշխատանքներուն մասին, զորս Ազատ-որմնադրությունը կատարած է Պոլսո մեջ անցյալ դարու կեսերեն սկսյալ։ Մեզմե ո՞վ կրնա կռահել հիմա դերը, զոր հայ ազատ որմնադիրները ունեցան Պոլսո շարժումներուն մեջ, և տեղեն վեր պիտի չցատկե, երբոր իմանա անունները կարկառուն հայ դեմքերու, որոնք պատկանած են որմնադրական օթյակներուն։ Անոնք ստվերին մեջ պահեցին իրենք զիրենք, և գուցե իրենց մասին բնավ բան մը չգիտնայինք, եթե մեր որերու ազատ-որմնադիրներեն ոմանք գգրոգներեն քանի մը նյութ դուրս չհանեին, ինչպես զրին Արմենակ Ֆեներճյան և Ռուբեն Բերբերյան, անպատեհություն մը չտեսնելով այլեւ խորհրդավոր դուռը կիսով մը բանալ։

Պատմությունը շատ բան գիտե նույնպես Պոլսո մասնակցության վրա այն մեծ ճիգին մեջ, որուն հանձնառու եղավ հայ ժողովուրդը իր դատին համար։ Ժամանակակիցներու հարևանցի նոթերեն զատ որոշ բան չենք դիտեր Սան-Ստեֆանոյի որերուն Պատրիարքարանի գործունեության մասին, ոչ ալ անոր իսկական աշխատանքներուն վրա Բերլինի մեջ քանի մը ամիս հետու իր պատվիրակները, Բերլինեն դառնալե հետո, հայ ժողովուրդին չպատմեցին ամեն բան։ Խրիմյան բառախաղեր միայն ընրավ Եվրոպայեն, նարպել իշխանական իր փառքը, Ցերազ փորձեց հայ ժողովուրդը համոզել, թե «ինչ շահեցանք Բերլինի վեհաժողովենն», իսկ Ստեփանոս Փափազյան իր հուշատետրին մեջ, զոր հետո «Անահիտ» տպեց, առավելապես արձանագրեր էր պատվիրակության ներքին էնտրիգները։ Ցերազի բացատրությունները «Ազգային խնդիրներ»-ուն մեջ Բերլինեն կես դար հետո՝ շատ համով կկարդացվին, բայց այդքան միայն։ և Ալպոյաճյան մասամբ իրավունք ուներ համարատվություն պահանջելու անեկտոդներու տեղ։

Պոլսո հայ բեմը ինչո՞ւ մնար ցարդ առանց պատմության, ու հայ թատրոնին մենագրություն գրելու փորձերը դժվարության բախեին հիմա։ Շարասանի (Սարգիս Թութունճյան) գիրքը թրքահայ բեմի գործիչներուն մասին համակրելի համեստ փորձ մըն էր միայն։ Ու հետո երկա՞ր լռություն մը, մինչև որ Հրանտ Ասատուր քանի մը լուրջ հոդվածներ նվիրեց Պոլսո հայ բեմին զանազան շրջաններուն Ազգային հիվանդանոցի «Ընդարձակ տարեցույց»-ներուն մեջ, ինչպես Սմբատ Դավթյան Բուքրեշի «Նավասարդ»-ին և «Ամենուն տարեցույց»-ներուն մեջ։ Պետք է թափառիլ թերթերու հավաքածուներուն մեջ քիչ մը ավելի լույս կորզելու համար, և դիմում բնել զանազաններու հուշերուն ալ, ինչպես, օրինակ, տիկին Հրաչյայի պատմածներուն հին «Անահիտ»-ներուն մեջ. իսկ Վահրամ Փափազյանի հուշերը, որոնք այլապես այնքան համով կկարդացվին, չեն կրնար լրիվ տալ փորձերը, որոնք Պոլսո մեջ եղան հայ բեմը վերստեղծելու թուրք «Հուրրիեթ»-են հետո և զինադադարին։

Պոլիսը ճիգեր ըրավ երաժշտության մարդին մեջ ալ։ Ի՞նչ է սակայն մեր գիտցածը այդ մասին։ Առաջին Պապա Համբարձումեն մինչև երկրորդ Պապա Համբարձումը ի՞նչ երաժշտագետներ և անոնց կողքին ի՞նչ հասարակ տիրացուներ ալ մեզի տվավ Պոլիսը։ Ո՞վ դիտե սակայն լրիվ բան մը անոնց բոլորին մասին։ Պոլիսը Գաբրիել Երանյաններ, Եղիա Տնտեսյաններ, Նիկողոս Թաշճյաններ, և ի լրումն բոլորին Տիգրան Ջուխաճյան մը տվավ։ Ջուխաճյան, շնորհիվ Երևանի, հայ արվեստներու պատմության մեջ դրավեց արդեն պատվո իր տեղը։ Բայց ո՞վ բան մը պիտի փրկե համեստ մյուս անուններեն, որոնք փորձեցին լմոռցնել հայերեն երգը, թեև չկրցան անոր ակունքը գտնել, մինչև Կոմիտաս մը չհասավ։ Ամբողջ դար մը տևած է Պոլսո խարխափը, և այդ դարուն մասին վտիտ հատոր մը միայն ունինք՝ Հիսարլյան Արիստակես քահանայի ուսումնասիրությունը Պոլսո հին հայ երաժիշտներուն մասին։

Կարկառուն դեմքերու և բացառիկ երևույթներու և դրվագներու ետեն վազեցին առավելապես մեր բանասերները, ու փույթ լրրին պեղելու նաև Պոլսո բնդերքը։ Շատ քիչ գործեր նվիրված են Պոլսո բարքերուն և սովորություններուն, անոր ֆոլկլորին ու ոսմկորենին։ Հինգ դար հողին հանձնեցինք, առանց ճանչցած ըլլալու նաև խոնարհ խավերը իրենց օրվան կյանքին մեջ, իրենց տնտեսական հոգերուն և կյանքի համար իրենց մղած պայքարին մեջ։

Ինչո՞ւ «Տարեցույց»-ներ հանելով Թեոդիկ պիտի վատներ իր կյանքը։ Զիրենք թղթատողներուն հաճելի ժամանցներ անշուշտ տվին Թեոդիկի հանած այդ «Ամենուն տարեցույց»-ները ամբողջ 17 տարի և գուցե շահեկան նյութեր ալ տան որ մը զիրենք պրպտողներուն։ Բայց անոնք Թեոդիկը իր բուն կոչումեն խլեցին։ Ոչ ոք իրեն չափ Պոլիսը փրնտռած էր իր բնդերքին մեջ, սիրած էր անոր

բարբառը, գիտեր շատ բան անոր ֆոլկլորեն։ Ան պիտի կրնար շատ բան փրկել մեռնող Պոլսեն։ Վկա «Պոլսո հայեվարը», Պոլսո բարբառին զմայլելի բառագիրքը, զոր կազմեց իր կնոջ՝ Արշակուհի Թեոդիկի հետ մեկտեղ, և որուն համար մրցանակ ալ առավ Իզմիրյանցեն, չտպած մեռնելու համար։ Վկա Պոլսո կյանքեն իր գրած այնքան համով էջերը, վկա իր «Ճանչվոր դեմքեր»-ը, վկա ատեն-ատեն Պոլիսը հիշած պահերը, և արդեն կհամոզվիք, որ ան իրապես դավեց իր բուն կոչումին։

Պոլիսը ճանչնալու որքա՞ն կարիք ունինք նաև մեր երգիծաբաններուն։ Անոնց գրածներուն մեջ է, որ երբեմն Պոլիսը իր իսկական դիմագիծը ցույց կուտա մարգոց։ Որքան ալ խտացուցած ըլլան անոնք գույները բարքերը նկարագրելու ատեն և ծաղրանկարի վերածած իրենց հերոսները անոնց ծիծաղելի կողմերը մեզ ցուցնելու համար առավելապես, միշտ ճշմարտության հետք մը կա սակայն, որ Պոլիսը մեզ կնկարե իր բացասական գիծերուն մեջ ալ։ Տարբեր խնդիր, որ մոլորություն է լոկ իր խոցելի կողմերեն դատել երեկվան Պոլիսը, և ազգային ջոջերեն ու մեծապատիվ մուրացկաններեն, թագականներու կնիկներեն և միջնորդ տերպաններեն դուրս հայ լգտնել Պոլսո մեջ։ Պոլսո անցյալեն շատ բան փրկած են արդարև Սվաճյանն ու Պարոնյանը, Հաճյանն ու Այվազյանը, Օտյանն ու մինչև իսկ Լիլան ու Ալփիարը։ Ասկե զատ, ստիպված ենք հաճախ երգիծաբերթերուն ալ դիմել՝ ճանչնալու համար Պոլիսը իր ռամկորենին մեջ։ Եթե Աճառյանը ուղեցույց ալ առնենք Պոլսո բարբառը ուսումնասիրելու համար, պետք է թղթատել նաև Պոլսո «Մեղու»-ն և «Մեծաղջ»-ը, «Թատրոն»-ն ու «Խիկար»-ը, «Մամուլ»-ն ու «Միմոս»-ը, մինչև մեր օրերու «Կավռոշ»-ն ու «Կիկոս»-ն։

Համիդի շրջանը մանավանդ խորհրդավոր էջ մը պիտի մնա պատմության համար։ Քիչեր միայն մեզ ատաղձ տվին մեր օրերու հայկական Պոլիսին մասին, և ստիպված ենք ապավինել առավելապես մեր գիտցածներուն ու մեր պրպտումներուն։ Ոչ կարելի է կոթնել Պոլսո այն օրվան մամուլին վրա, ոչ ալ շատ լուրջի առնել մեր մասին գրվածները արտասահմանի մեջ։

Ինչե՞ր կրնային մեզ պատմել երբեմնի մեր լրագրողներեն շատերը, և որքան քիչ բան պատմեցին։ Անոնց «մեկ ոտքը խմբագրատունն էր, մեկ ոտքն ալ Պատրիարքարանը», ու տեղյակ էին շատ մը բաներու, զորս հասարակ մարդիկ չէին կրնար գիտնալ կամ լսել։ Ինչ-ինչ բաներ պատմեցին իրենց տեսածներեն և լսածներեն անոնցմե ոմանք։ Կարապետ Ութուճյանի կամ Տիգրան Արփիարյանի տպած հուշերը բաներ մը կըսեն, բայց ինչ կրնային ըսել, երբ Համիդի գրաքննությունը իրենց վրա կհսկեր։ Սուտը իրավին խառնած, իր «Շար հայ կենսագրությանց»-ը գրեց Աբրահամ Այվազյան, բան մը ուզելով փրկել ինքն ալ իր կարգին։ Գաղտնիքի տոպրակ մըն էր Աբիկ Մուսպահյանը ու կրնար բոլորեն ավելի լավ գիտնալ շատ բան. բայց հազիվ քանի մը նոթ ցանցնեց թերթերու սյունակներուն մեջ։ Արամ Անտոնյան պահեց ու պահեց իր գիտցածները, բայց երբ ատեներ հասած կարծեց զանոնք թուղթին հանձնելու, ալ շատ ատեն չունեցավ։ Պարույր Քեչյան Թուրքիո նոր վարչակարգին օրով Պոլսո հայ թերթերուն մեջ շատ բան պատմեց Համիդի շրջանին մասին իր գիտցածներեն, ու շատ լավ ըրավ։

Գիտական մտահոգություններե հեռու, և հետևաբար խմբագրված առանց սիստեմի ու մեթոդի, և այնուամենայնիվ թանկագին ատաղձ կուտան Պոլսո մոտավոր անցյալը պրպտողին «Հիշատակարան»-ի պրակները, զորս Վահան Զարդարյան լույս ընծայեց նախ Պոլսո և հետո Եգիպտոսի մեջ, և անոր կողքին, նույնպես առանց բացառիկ հավակնություններու, վերջին տասնամյակներուն Պոլսո անցյալի լուսաբանության համար իրենց որոշ նպաստը բերին Հովհան Փալագաշյան, Պիմեն Զարդարյան, Երվանդ Ալյանաք, Գրիգոր Մարգարյան և հավանաբար դեռ շատ ուրիշներ, որոնք վրիպած են մեր ուշադրությենեն։

Եվ վերջապես, բարեբախտություն մըն էր, որ Պոլսո եկեղեցիներեն ոմանք վերջերս տոնեցին իրենց հոբելյանները և այդ առթիվ լույս տեսան քանի մը մենագրություններ։ Այդ եկեղեցիներուն մեջ էին Պալաթի Ս. Հրեշտակապետը, Սկյուտարի Ս. Խաչը, Բերայի Ս. Երրորդությունը, Խասգյուղի Ս. Ստեփանոսը, Գուրուչեշմեի Երեսան Ս. Խաչը, Պաքրքոյի Ս. Աստվածածինը, Նաուլրգափուի Ս. Հովհաննեսը, Թոփգափուի Ս. Նիկողոսը, Գումգափուի Դրսի Ս. Հարությունը։ Հոբելյաններ տոնեցին նաև Պեզճյան մայր վարժարանը, Գումգափուի Պողոսյան-Վառվառյան վարժարանը, Պաքրքոյի Տատյան վարժարանը, Բերայի Եսայան վարժարանը, հավանաբար և ուրիշ դպրոցներ ալ։ Կարժե որ շնորհակալ ըլլանք համեստ այն անուններուն, որոնք խմբագրեր էին այդ մենագրությունները, հավաքելով և տալով մեզի ինչ որ կրցեր էին, ինչպես այդ ըրին Մելքոն Ասատուր, Մարտիրոս Հանեսյան, Թորոս Ազատյան, Պետրոս Կարապետյան, Հմայակ քահանա Էքսերճյան, Հակոբ Վարժապետյան և Արիստակես քահանա Հիսարլյան։

... Ավա՜ղ, շատ ուշ մնաց Պոլիսը, արձանանալու համար ընդարձակ մենագրության մը մեջ։

Եվ ամեն օր որ կանցնի, կառնե կտանի հետը փաստ մը, աղբյուր մը, նյութ մը։

Գոնե երախտապարտ մնանք անոնց, որոնք անցյալին փրկեցին բան մը, և գոհանանք իրենց թողած լույսովը, ճամբա գըտնելու համար մութին մեջ։

Բայց մեր հույսը դնենք բախտին վրա ալ։

Մեր ունեցած աղբյուրները կօգնեն երբեմն ճամբա գտնելու համար։ Բայց և հաճախ կմոլորեցնեն մեզ։ Անոնք լեցուն են շատ անդամ այնպիսի շփոթություններով, որոնք մեզ կկեցնեն ճամբան շվարած։ Կտեսնենք, որ աղբյուրները, զորս կովան կկարծենք, կըսկըսին հակասել մեկը մյուսին ու հերքել զիրար։

Բա՜խտ ունիս, եթե դիպվածը օգնության հասնի հանկարծ քեզ։ Ու հաճախ ան կհասնի իսկապես։ Գիտությունը քի՜չ բան կպարտի դիպվածին, և նաև պատմությունը։ Ինչո՞ւ բացատրություն ըլլա Պոլիսը, ու դիպվածը անակնկալներու առչև չդնե մեզ ալ, Պոլսո հին դարերը իրենց մթութենեն դուրս հանելու մեր ճիգերուն մեջ։

Ընթերցողները պիտի տեսնեն, թե բախտը հաճախ. ժպտած է մեզի։

Դ. ՊԱՐՏՔ ՄԸ ՀԱՏՈՒՑԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Պոլսո հանդեպ պարտք մը ունիմ հատուցանելիք, խղճի պարտք մը։ Գավառը մեծցած տղաքս Պոլիսը շատ չէինք սիրեր։ Ու քանի Պոլիս էինք, երբեք լտաքցանք անոր. զայն արհամարհեցինք, ու ծաղրեցինք ալ։ Պետք եղավ, որ հեռանանք օր մը Պոլսեն, ճանչնանք դուրսի աշխարհը, որպեսզի ճանչնանք Պոլիսն ալ ինչպես ան եղեր էր։ Որպեսզի սիրենք ու կարոտնանք զայն։ Որպեսզի հասկրնանք, թե մեր հեգնած այդ քաղաքը ազվոր պահեր հաճախ էր ունեցեր իր պատմության մեջ, թե աղաներ, տիրացուներ, հոսհոսներ դուրսն ալ եղած են ու կան, եղած են ու կան ամեն տեղ։

Անդրադառնալ ադոնց՝ խղճի պարտք մըն էր ինձի։

Հայոց պատմությունը ևս հատուցանելիք պարտք մը ունի Պոլսո, այս անգամ երախտագիտության պարտք մը։ Պոլիսը ցարդ անգիտացան։ Ամեն անգամ որ զայն հիշեցին, Պարոնյանը իրենց միտքն ինկավ։ Նոր է որ Պոլիսը կստանա իր հարազատ դիմագիծը մարդոց մտածումին մեջ։ Մարդիկ հիմա կգդան, որ աղաներուն և լիվանտեներուն քաղաքը չէր ան լոկ, այլև օրրանը շատ մը սերունդներու, որոնք դեր կատարեցին հայ նոր վերածնության մեջ։

Կուզեմ, հետագա էջերուն մեջ, այդ գույդ մը պարտքը հատուցանել մեկեն։ Ուրվանկարել զայն այնպես, ինչպես որ էր, իր բիծերուն, բայց և իր լուսավոր պահերուն մեջ։ Մարդիկ կըմբռնվին իրենց վրեպներով և ձիրքերով, ու պատմության շրջանները իրենց սայթաքումներուն ու ճիգերուն մեջ հավասարապես։ Ինչպես որ սխալ է մարդիկը դատել միմիայն իրենց առաքինության մեջ, անտեսելով անոնց մեղքերը, նույնպես սխալ է զանոնք նժարը գնել իրենց բացասական դիծերուն հետ միայն։ Նույնն է պատմության հանգրվաններուն համար. զանոնք պետք է գնել նույն օրերու պայմաններուն մեջ, իրարմով բացատրել այդ օրերու սեն ու ճերմակը. գեպքերը չդատել իրենց հետեանքներեն, և մարդոց փորձած ճիգերը՝ ձախողություններեն ու աղետներեն։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը պիտի ներե ինձ անշուշտ, եթե հուսախաբ ըրած եմ զինքը։ Հանցանքը իրն է եթե պատմարանի, բանասերի տեղ է դրած զիս, ու կարծած է, թե պիտի կարենամ Պոլիսը ներկայացնել այնպես ինչպես ան եղած է իրականին մեջ։ Վիթխարի այն մենագրությանց քով, որոնք գրվեցան ու կգրվին մոռացման վիհեն դուրս հանելով մեկ քանին երբեմնի հայ ոստաններեն, իմս համեստ փորձ մըն է միայն քանի մը շահեկան պահեր տալու Պոլսո դարավոր կյանքեն և ուրվագծելու դերը, զոր այդ գաղութին մեջ կատարեց քանի մը սերունդ ետևե ետև։

Հեղինակներ կան, որոնք աղբյուրներուն կկառչին, թիվերուն ու թվականներուն. մարդոց ու վայրերու անուններուն, փաստաթուղթերուն և վիճակագրություններուն։ Այդ տեսակետով աղքատ է այս աշխատությունը, ու պիտի չկրնա թերևս ընթերցողը համոզել։

Առձեռն փաստերեն լույս կորզելու ճիգ մըն է միայն մերը, և այդ լույսը մարդ միշտ կրնա կորզել, եթե դեպքերը հայելի դատել պաղարյուն, ու չվախնա նախապաշարումներեն, որոնք միշտ ալ կկաշկանդեն մեզ, ամեն անգամ որ փորձեն ետև նայիլ։ Այս ճիգը վաղվան սերունդին ձգելու համար է, որ թուղթին կհանձնենք քանի մը տող մեր տպավորություններեն երեկվան մարդոց մասին, ու մեր իսկ ապրածներեն։

Թող ա՛յս ըլլա մեր խղճի տուրքը։

(Շարունակելի)

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՅԱՆ

(Փոխտեսուչ Արտաքին գործերի)

ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԵՐԵՎԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բ. Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼ ԿԱՄ Ս. ՋՈՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ

Երևան քաղաքի հնագույն եկեղեցիներից մեկն է Ս. Անանիա առաքյալ կամ Ս. Ջորավոր եկեղեցին։ Եկեղեցին կառուցվել է Երևանի խանական շրջանի Խանբաղ կամ Խանլըբաղ թաղամասում, այժմյան Թումանյանի փողոցի նրբանցքում։ Սկզբնական շրջանի այս եկեղեցու մասին կա հետևյալ վկայությունը. «Յայս տեղի եղեալ է յառաջագույն փոքրիկ մատուռ մի քայքայեալ յանուն Անանիա առաքելոյ միոյն յեռթանասնից»[1]։

Եկեղեցին մեր պատմության մեջ կոչվել է նաև Անապատ։

Անանիա անապատի վերաշինությունը և ծաղկումը կապվում է Մովսես վարդապետ Տաթևացու անվան հետ, ժէ դարի սկիզբներին։

Այնույնց Մեծ Անապատի վերանորոգիչ Մովսես վարդապետ Տաթևացին, իր քարոզչության և գործունեության առաջին շրջանում խոյընդոտի է հանդիպում Մելքիսեթ կաթողիկոսի և նրա եղբորորդի աթոռակից Սահակ կաթողիկոսի կողմից, որոնք իրենց կաթողիկոսական իշխանությունը, ըստ Դավրիժեցու վկայության, «զարալաիւ և հարկիւ»[2] էին առել պարսից շահերից և իրենց արծաթասեր գործունեությամբ դժգոհություն առաջացրել հայ ժողովրդի մեջ։

Մովսես Տաթևացին իր ընկերոջ՝ Պողոս վարդապետի հետ, համարվում էին ժամանակի լուսավորիչներից. «Երկոքին վարդապետքն Մովսէս և Պողոս եղեն իրերաց ընկերք իրրև զսուրբ առաքեալսն Պետրոս և Պողոս, լեալք ամոլք հաւատոյ՝ շրջեցան յամենայն զաւառս արևելեայ աշխարհիս, քարոզէին ամենեցուն զճշմարտութիւն, շինէին զեկեղեցիս, հաստատէին դպրոց, ուսուցանէին մանկունս, վասն զի առաքելաբար շրջէին հետիոտն գնալովք»[3]։ Այսպիսով, այս երկու վարդապետները «ի մի խորհուրդ միաբանեալ եղեն երկու ջահք ուղիղ վարդապետութեան յաշխարհին Հայոց»[4]։

---

[1] Շահխաթունյանց. «Մատենագրութիւն...», Բ, էջ 143։

[2] Դավրիժեցի, էջ 292։

[3] Նույն տեղում, էջ 291։

[4] Հ. Մ. Ջամչյան. «Պատմութիւն Հայոց», Գ, էջ 567։

Հակառակ այսպիսի փայլուն գործունեության, երկու վարդապետները հալածվում են Մելքիսեթ կաթողիկոսից։ Մովսես Տաթևացին որոշում է գտնել մի խաղաղ անկյուն իր գործունեության համար և գնալ Կարին։

Սակայն, Երևանի ժողովուրդը չի ուզում բաժանվել իր սիրելի վարդապետից, և դիմելով Ամիրգունա խանին, խնդրում է վարդապետին առնել իր պաշտպանության տակ։

Ամիրգունա խանը, ծանոթանալուց հետո Մովսես Տաթևացու հետ, համակրում է նրան և հանձնում Անանիա անապատի վերաշինություններ և հովվություններ։ Այս մասին հետևյալն է գրում Դավրիժեցին. «Կայր ի վաղեմի ժամանակաց վայելուչ մատուռ մի շինեալ ի վերայ դամբարանի սրբոյ առաքելոյն Անանիայի, որ էր ի հիւսիսային կողմանէ քաղաքին Երևանայ ի մէջ այգեստանեայցն, և էր աւերակ և անմարդաբնակ, որոյ վասն ասաց խանն առ վարդապետ. Տեսանե՞ս զայս եկեղեցիս, որ ամայի կա. արդ՝ լուր ինձ, և մի՛ գնար յայլ աշխարհ, այլ արա զսա քեզ բնակութիւն՝ և դադարեա աստէն, դի իրերաց մերձակայութեամբ և տեսութեամբ մխիթարեսցուք։ Այլև ամենայն ժողովուրդք քաղաքականք և վաճառականք ազաչելով զնոյն խնդրէին ի վարդապետէն։ Յորոց բանս հաճեալ սրբոյ վարդապետին՝ ձեռն ի գործ էարկ շինել զտեղին, արդեամբք և ձեռնտուութեամբ քրիստոնէից տեղականաց և վաճառականաց, որք յօժարութեամբ տային տուրս ողորմութեան ի շինումն տեղւոյն, վասն սիրոյ վարդապետին, կի ընակեսցէ ի մէջ իւրեանց, վասն որոյ փութանակի շինեցին, շուրջանակի պարիսպ և խցեր և զժամատուն, և Սարաւութ, և զայն տունս յոլովս, և կատարեալ զամենայն շինուածսն, ընակեցաւ անդէն վարդապետն իւրովք միաբանօքն, կարդաւն և սահմանաւն այն, զոր կարգեցին ի մեծ անապատն։ Առ որ ժողովեցան միաբանք բազումք, միայնակեացք և գրոց աշակերտք իմաստունք և սրբակեացք, կային ի միասին մեծք և փոքրք սիրով հանդարտեալք ի խցի, հանապազօր կանխեալ յաղօթս և յրնթերցումն Սուրբ Գրոց»[5]։

Ահա այսպիսով Անանիա առաքյալի անապատը, շնորհիվ Մովսես Տաթևացու ձեռներեցության և ժողովրդի սրտաբուխ նվիրատվության, վերակառուցվում է և պայծառանում ԺԷ դարի սկիզբներին։

Տաթևացու այս հաջողություններից հետո, Մելքիսեթ կաթողիկոսը հաշտվում է Մովսես վարդապետի հետ և վերջինիս եպիսկոպոս է ձեռնադրում Անապատի եկեղեցում։ «Ապա Մելքիսեթ կաթողիկոսն եկեալ ի դամբարանս սրբոյ առաքելոյ Անանիա, ուր էր բնակութիւն Մովսէս վարդապետին, զոր անուանեցին զտեղին Անապատ և անդ օրհնեաց զնա եպիսկոպոս»[6]։

Մովսես վարդապետի (հետագայում կաթողիկոս 1627—1630) մահից հետո, 1635—1636-ի թուրք-պարսկական պատերազմին, այրվում և քանդվում է նրա կառուցած եկեղեցին։ Տաթևացու աշակերտ և հաջորդ Փիլիպոս կաթողիկոս Աղբակեցին (1630—1656) վերակառուցում է Անապատի եկեղեցին 1636 թվականին, քարաշեն գմբեթով և ժամատնով։ Աղբակեցին կառուցում է նաև նոր խցեր, սեղանատուն և վերականգնում է Մովսես վարդապետի կողմից կառուցված բոլոր շինությունները։

Դավրիժեցին Անանիա անապատում Փիլիպոս կաթողիկոսի կատարած շինարարական աշխատանքների մասին գրում է. «Իսկ Երևանայ Անապատն՝ զորմէ ասացաք դամբարան զոյ Անանիա առաքելոյ, որ ինչ և շինուածք գոյր անդ բովանդակ փայտակերտ էր, զատ ի մատուռէն. և սոքա ամենեքեան քանդեալ աւերեցան ի պայ վերոյ ասացեալ երկուց թագաւորացն. որ և զայնս ևս զբովանդակն ամենայն վերստին շինեաց, ոչ թէ փայտիւ՝ այլ քարիւ և բոլով գմբէթեալ՝ զժամատունն, զսեղանատունն, զխցերն, և զայլ ևս շինուածսն ամենայնս»[7]։

Փիլիպոս կաթողիկոսի Ս. Անանիայի Անապատում կատարած շինարարական աշխատանքների մասին խոսում է նաև Հ. Մ. Ջամչյանը. «Զարդարեաց և զվանս Անանիա առաքելոյն յԵրևան, որ ասի Անապատ Երևանայ, ուր կային երեսուն կրօնաւորք ընտիրք խրս-

5 Դավրիժեցի, էջ 294—295։ Տե՛ս նաև Ջամչյան, Գ, էջ 567։

6 Դավրիժեցի, էջ 296։

7 Նույն տեղում, էջ 318։

Երևանի Ս. Զորավոր եկեղեցին

տակեաց վարուք, և ինքն իսկ կաթողիկոսն ընդ ժամանակս ժամանակս բաղում անգամ երթեալ անդ դադարէր աւուրս քանի միոմ[8]։

1679 թվականի Երևանի երկրաշարժը մեծ վնասներ է պատճառում Մովսես Տաթևացու կառուցած և Փիլիպոս կաթողիկոսի վերաշինած Անապատին, որը վերակառուցվում է Նահապետ կաթողիկոս Ուռհայեցու օրով. «Անապատի հին շինություններից պահպանվել են ծառատունկ բակում Փիլիպոս կաթողիկոսի վերաշինած միաբանական խցերից մի քանիսը։ Դրանք հողածածկ, ներսից գաջած կամարակապ փոքրիկ սենյակներ են, շինված

8 Չամչյան. Գ, էջ 614։

Ս. Զորավոր եկեղեցու արևելյան պատը դրսից

պարսկական ոճով և ճարտարապետությամբ», վկայում է Շահազիզը[9]։

Նահապետ կաթողիկոս Ուռհայեցու (1691—1705) կատարած շինարարությունները Ս. Զորավոր եկեղեցում.— Արարատյան նահանգում, Զալ խանի օրով, 1679 թվականի հունիսի 4-ին, երեքշաբթի օրը, ժամը 7-ին տեղի է ունեցել մեծ երկրաշարժ, որը հայտնի է մեր պատմության մեջ «Մեծ շարժ» անունով։

Շարժի կենտրոնը եղել է Գառնիի կողմերը։ Փուլ են եկել բոլոր շինությունները, վանքերն ու եկեղեցիները։ Երկրաշարժը Երևանում այնպես սաստիկ է եղել, որ գետինը դողացել է նավու նման՝ ալեկոծված ծովի վրա։ Շարժը կրկնվել է մերթ ընդ մերթ մինչև հոկտեմբեր ամիսը։ Երևան քաղաքը ավերվել է, քանդվել են նրա եկեղեցիները, այդ թվում Աղբակեցու վերակառուցած եկեղեցին, և անհրաժեշտ էր հիմնովին վերաշինել այն նորից։

Մեծ շարժից հետո, Երևանի քանդված եկեղեցիների վերակառուցումը կապվում է Նահապետ կաթողիկոս Ուռհայեցու անվան հետ։ Սիմեոն Երևանցին իր «Ջամբռ»-ի 26-րդ էջում վկայում է, որ «Գրէթէ յիրկիրս Երևանու որքան քարաշէն եկեղեցիք կան՝ ըստ մեծի մասի ի սմանէ են շինեցեալք»։

Երևանի Անանիա առաքյալի կամ Ս. Զորավոր եկեղեցին կառուցվում է Նահապետ կաթողիկոսի օրով, նվիրատվությամբ Խոջա Փանոսի. «Իսկ ի ժամանակս Նահապետ կաթողիկոսի Ուռհայեցւոյ, Խոջայ Փանոս անուն ոմն հայ աղգաւ քակեալ զայն փոքրիկ մատուռն՝ տայ կառուցանել տաճար գեղեցիկ միջակ մեծութեամբ ի վերայ չորից սեանց ի խարտեալ քարանց, որ ունի զմի սեղան և զերկուս աւանդատունս և զմի դուռն ընդ արևմուտս, և զաւիթ վայելուչ ի վերայ այսր դրան ընդ յայնութիւն տաճարին երկայնալ՝ սիւնազարդ, որ ունի զանգակատուն ի միջին բաժնի, որ ի վերայ դրանն. և անուն եկեղեցւոյն ըստ արձանագրութեանն Սուրբ Աստուածածին»[10]։

Ս. Աստվածածին անունը կրող Նահապետ կաթողիկոսի կառուցած եկեղեցին ունի հետևյալ արձանագրությունը եկեղեցու արևմտյան պատի դռան աջ կողմում, մի մեծադիր, նկարակերտ խաչքարի վրա.

«Ի թուականիս Հայկազունի
... Որ աստ շարագրի,
Ի քառեակ ժ-երորդի,
Երկեակ թուով յարաբարդի։
Ի հայրապետութեան Սրբազանի
Տեառն Նահապետ կաթողիկոսի,
Արի եւ քաջ հովուապետի,
Լուսավորիչ Հայոց Ազգի.
Մեծ եւ ազնիւ բարեպաշտի.
Աստուածասէր Երկիւղածի,
Խոջայ Փանոս վերածայնի.
Սուրբ Աստուածածինս շինողի.
Յիշատակ իւրն եւ նախնի,
Ծնողաց իւրոց հարցն առաջի.
Որդոց իւրոց էլիազի,
Եւ Մովսեսի քաղցր ողկուզի,
Թոռան իւրոյ Աճառոնի,
Զանգակատնօք սա զարդարի.
Սուրբ աճապատ Անանիայի։
Մեսրոպ այր սուրբ Հեզանոգի.
Որ եւ յաջորդ է սուրբ տեղիս,
Վերակացու համագործի.
Դաւիթ անուամբ վերածայնի»[11]։

Այս արձանագրությունից իմացվում է, որ Ս. Զորավոր եկեղեցու զանգակատունը ևս կառուցել է Նահապետ կաթողիկոսը։ Այդ զանգակատան նկարագրությունը գեղեցկորեն տվել է Շահազիզը. «Այդ եկեղեցու զանգա-

[9] Ն. Շահազիզ. «Հին Երևանը», էջ 196։

[10] Շահխաթունյանց. «Մատենագրութիւն...», Բ, էջ 143—144։

[11] Նույն տեղում, էջ 144։ Ալիշան, «Այրարատ», էջ 613։ Ն. Շահազիզ. «Հին Երևանը», էջ 191։

Ս. Զորավոր եկեղեցու նորակերտ Ս. Սեղանը

կատունը, որ հանդչում է չորս հաստահեղույս սյուների վրա, որոնցից միջին երկուսը հրաշալի քանդակվածներ ունին, հմուտ արվեստագիտության գործ են և գավթի մեջ արևմտյան դռան գունավոր, հավանորեն ավելի նոր ժամանակի որմանկարներն ևս և դռան երկու կողմը պատի մեջ հագցրած նկարակերտ երկու մեծադիր խաչքարերը[12],

Ս. Անանիա առաքյալի անապատը Ս. Զորավոր է կոչվել դեռևս 1655 թվականից։ Այդ մասին վկայում է Հ. Դ. Ալիշանը. «Տապան

12 Ե. Շահազիզ. «Հին Երևանը», էջ 135—136.

նշխարաց Սրբոյ առաքելոյն է ի փոքու խորանայարկի ընդ եկեղեցեաւն՝ յոր իշանեն աստիճանօք, և է անուանի ուխտատեղի, զոր ընդ համանմանսն յիչէ և Վանանդեցին Թովմա յամի 1655, կոչի եկեղեցին և Զօրաւոր՝ յանուն Աւետարանի միոյ հրաշագործ համարելոյ»[13].

Սակայն այժմ Երևանի Ս. Զորավոր եկեղեցին կոչվում է նաև Ս. Վարդան զորավարի անունով։ «Զորավոր»-ը դարձել է «Զորավար»։

Ղուկաս կաթողիկոսի (1780—1799) շինարարություններ Ս. Զորավոր եկեղեցում.— *Ս. Զորավոր եկեղեցում, Ղուկաս կաթողիկոսի օրով, 1793 թվականին, կատարվում են մի շարք վերանորոգություններ, Երևանի Գարրիել հարյուրապետի եվիրատվությամբ։ Ղուկաս կաթողիկոսը Ս. Զորավոր եկեղեցում իր կատարած վերանորոգությունների մասին թողել է մի արձանագրություն փորագրված եկեղեցու արևմտյան դռան ձախ կողմում նկարակերտ մի խաչքարի վրա, որ հետևյալն է.*

Թիւ մեր հազար երկերիւր հասեալ.
Ի ընդ նոյն համաբուեալ.
Սուրբ էջմիածնի միջ էր գահակալ.
Ղուկաս սրբազան հայրապետն յնտրեալ.
Յաջողմունմ շնորհաց Տեառն ժամանեալ.
Տանիմ տաճարիս եղեւ նորոգեալ,
Ճախիմ բարեպաշտ անձին գոլելի,
Պարոն Գարրիէլ հարիւրապետի.
Ի պատճառս անեղծ յիշելման բարի.
Իւրն եւ իւրայնոցն առ հասարակի,
Հոգն Ալլահվերդի իւզբաշոյ մեծի.
Եւ մօրն երկիւղած Եփրոսիէի.
Եւ եղբարցն իւրոց պարոն Ստեփանի.
Եւ Յոհաննիսի Մաջ գինաւորի.
Իսկ եւ կրտսերի պարոն Գրիգորի,
Սոյն գործառնութեան միր վերակացուի,
Նա եւ որդեկացն ազնուականի.
Պարոն Բարսեղի եւ Աստուածատրի.
Որոց յիշատակն օրհնութեամբ լիցի,
Այժմ եւ ի գալուստ Տեառն կրկնակի»[14].

Ղուկաս կաթողիկոսի օրով, Անապատի վանահայր Տ. Կիրակոս քահանայի որդի Ավետիք վարդապետը շինել է տվել եկեղեցու խաչկալը 1781 թվակիր հետևյալ արձանագրությամբ, փորագրված եկեղեցու ձախակողմյան սյան վրա.

«Հաստիչն հանուրց զմեզ սիրեաց,
Զտէր Աւետիս վարդապետն առաջնորդ
շնորհեաց.
Նա զսուրբ եկեղեցոյս խաչկալն շինեաց,
Առ ի պատիւ վայելչութեան մօրս փառաց.
Հայրապետութեան Տեառն Ղուկասու 231 թիւ
գրեաց»։

Մովսես Տաթևացուց սկսյալ մինչև 1835 թվականը, Անանիա առաքյալի անապատը ունեցել է իր առանձին վանահայրը, վանական մասնավոր կանոնադրությամբ։ Այնուհետև այն դարձել է 1836 թվականից հետո ծխական եկեղեցի Մարաղայի գաղթականության, կցվելով Արարատյան թեմին։

Ծխական եկեղեցի դառնալուց հետո էլ, «յաճախեն ուխտաւորք ի բնակչաց քաղաքիս յայս եկեղեցի և յանուն հրաշագործ Աւետարանի միոյ՝ յորոյ անուն կոչի երբեմն այս եկեղեցի և Զօրաւոր»[15].

Մարաղացի գաղթականների մեջ այնքան ուժեղ է եղել Ս. Զորավոր եկեղեցու հմայքը, որ խոսակցության մեջ հաճախ ասելիս են եղել. «էն Սուրբ Զորավորն վկա», «էն Սուրբ Զորավորը գիտենա»[16].

Ս. Զորավոր եկեղեցում Անանիա առաքյալի գետնափոր դամբարանը գտնվելիս է եղել եկեղեցու արևմտյան դռան մոտ. «Մուտ գետնափոր դամբարանի հուլակելոյ յանուն Անանիա առաքելոյ է ի մէջ եկեղեցւոյն մերձ ի սիւնն արևմտեան հիւսիսոյ, ընդ որ մրտեալ և իջեալ ընդ աստիճանս ինչ յարևմուտս կոյս»[17].

1900 թվականից այդ գետնափոր դամբարանի մուտքը զատվում է եկեղեցուց։

1900 թվականին Անանիա առաքյալի դամբարանի վրա կառուցվում է մի սիրուն կաթողիկե հետևյալ արձանագրությամբ.

---

13 Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 313։

14 Այս արձանագրությունը տե՛ս նաև Շահխաթունյանց. Բ, էջ 145, Ալիշան. «Այրարատ», էջ 313, Շահազիզ. «Հին Երևանը», էջ 182։

15 Շահխաթունյանց. Բ, էջ 145։

16 Ն. Շահազիզ, «Հին Երևանը», էջ 193։

17 Շահխաթունյանց. Բ, էջ 145։

«Ի 1900 ամի Փրկչին եւ ի թուին հայոց ՌՅԽԹ. Շնորհօք եւ ողորմութեամբ աստուծոյ, շքեղաշնորհ Յօրինմամբ կառուցաւ մատուռս ի վերայ Դամբարանի Եշխարաց Ս. Առաքելոյն Անանիայ:

Արդեամբք եւ ծախիւք ողորմած եղբարց Ափրիկեանց, Ջերմեռանդն ծխականաց Ս. Զատուոյի. ի յիշատակ Հոգւոց ծնողաց իւրեանց բարեպաշտ եւ աստուածասէր Հօր Մկրտչի, երկիւղած մօր Մարիամու եւ վաղաքառամ քեռն Թագուհոյ կուսին: Բարեյաջող ջանիւք եւ ճոկողութեամբ Ճարտարապետի Պ. Վասիլի Ջ. Միրզոեանց»:

Անվանի բանասեր Ե. Շահագիզը իր «Հին Երեւանը» գրքում տարբեր է հրատարակել վերոգրյալ արձանագրությունը, շփոթելով արձանագրության թվականները. «Ի 1873 ամի Փրկչին և թուին Հայոց ՌՅԽԲ 1332 շնորհօք և ողորմութեամբ»[18], Սխալը կատարվել է հետևյալում. արձանագրության մեջ գրված է ՌՅԽԹ (1900), իսկ Շահագիզի գրքում այն հրատարակվել է «թուին Հայոց ՌՅԽԲ (1873). Խ տառը նման լինելով Ի տառին, շփոթություն է ստեղծել գառնալով Ի, իսկ Թ-ն վերածվել է Բ-ի։

Ս. Զորավոր եկեղեցու հարավային դռան վրա կա մի արձանագրություն, որը վկայում է, թե 1889 թվականին Ս. Զորավոր եկեղեցում կատարվել են վերանորոգումներ. «Թացան դուռն և լուսամուտք, շինեցան խաչկալ վերնատուն, տանիք, պարիսպք, վերանորոգեցան շինուածք, արգեամբ եկեղեցւոյ, ջանիւք երեսփոխ Մ. Տ. Սարգսյանի—1889 թ.»։

Ս. Զորավոր եկեղեցում կատարված վերանորոգությունները Տ. Տ. Վազգեն Ա-ի օրոք.— *Ս. Զորավոր եկեղեցում վերջին տարիներին կատարվեցին մի շարք վերանորոգություններ։ 1961 թվականին փոխվեցին եկեղեցու տանիքի հնամաշ թիթեղները և փոխարինվեցին նոր ցինկապատ թիթեղներով, վերանորոգվեց կաթուղիկեն, կատարվեցին մի քանի անգամներ մասնակի վերանորոգություններ։*

Նորին Ս. Օծությունը փոխել տվեց 1889 թվականի հին խաչկալը և կառուցել տվեց այժմյան պատարագի Ս. Սեղանը, անվանի ճարտարապետ Ռ. Իսրայելյանի նախագծով։ Սեղանը շինված է սպիտակ սրբատաշ քարից։ Վեհափառ Հայրապետը այդ Ս. Սեղանի քարի վրա նկարել տվեց նաև Աստվածամոր նկարը Հիսուս Մանուկը գրկին։ Այդ նկարը հեղինակն է անվանի քանդակագործ-նկարիչ Երվանդ Քոչարը։

Ս. Զորավոր եկեղեցին այժմ Երևանի հնադույն և գեղեցիկ եկեղեցիներից մեկն է։

Եկեղեցու ուխտի օրն է Սրբոց Վարդանանց զորավարաց տոնը։

18 Ե. Շահագիզ. «Հին Երեւանը», էջ 135։

Հ. ԽԱԼԻՓԱԽՉՅԱՆ

ՏԱԹԵՎԻ ԵՐԵՐԱՑՈՂ ՍՅՈՒՆԸ

Հայկական ՍՍՌ Գորիսի շրջանի Տաթևի վանքի երերացող սյունը, որ նվիրված է Ս. Սրբորդության, բայց ավելի շատ հայտնի է Գավազան անունով, պատկանում է Ժ դարի սկզբի հայկական ճարտարապետության նշանավոր հուշարձանների թվին։ Նույնանման կառուցվածքների մեջ Գավազանն աչքի է ընկնում իր կառուցվածքային և ճարտարապետական դեղարվեստական առանձնահատկություններով, ուստի և արժանի է հատուկ ուսումնասիրության (նկար 1)։

Հայոց վանքերի մեջ առավել հարուստ ու բազմամարդն էր (մոտ 1000 հոգի) Տաթևի վանքը, որի համար էլ այն կոչվում էր նաև Սյունիքի իշխանության գլխավոր քաղաք։ Ստեփանոս Օրբելյանի տվյալներով, ԺԳ դարի վերջին Տաթևն անշարժ գույք ուներ 680 գյուղերում, որոնք դանվում էին 14 գավառներում[1]։

Հայաստանում Բագրատունիների իշխանության հաստատումն ուժեղացրեց շինարարությունը քաղաքներում ու ֆեոդալական ավաններում։ Հիմնական շինարարական աշխատանքներ կատարվեցին նաև Տաթևի վանքում։ Այստեղ Թ դարի վերջում և Ժ դարի սկզբում վերակառուցվում կամ նոր կառուցվում են բազմաթիվ շենքեր՝ Ս. Պողոս-Պետրոս մայր եկեղեցին (895—906 թ.թ.),

Նկար 1.—Տաթևի Գավազան սյունը (ԺԹ դարի վերջի լուսանկար)

[1] Ստեփանոս Օրբելյան. «Պատմութիւն նահանգին Սիսական». Թիֆլիս, 1910, էջ 509—523։

գրադարանը, սեղանատունը՝ մարմարե սեղաններով, Սյունյաց իշխանների հանգրստարանը, բազմաթիվ բնակելի շենքեր, արհեստանոցներ, պահեստներ, քարե ցանկապատ և այլն։ Մայր եկեղեցու կառուցումն ավարտելուց երկու տարի առաջ, այսինքն՝ 904 թվականին, նրա հարավային մուտքի դիմաց բարձրացվում է նշանավոր Գավազան-սյունը[2]։

Սյուն-հուշարձաններ Հայաստանում կառուցվել են ավելի վաղ ժամանակներում ևս, բայց, ի տարբերություն մյուսների, Գավազանի ճարտարապետը իր կառուցվածքին ավելի արտահայտիչ ճարտարապետական ձև է տվել և երկրաշարժի ցնցումներից ապահովելու համար նրան այնպիսի կառուցվածք է տվել, որ սյունը երերում էր նույնիսկ ձեռքի թեթև սեղմումից։

Բացի դրանից, Գավազանի ծայրին զետեղված է մի քարե խաչ, որն ասես ճախրում է օդում։ Խաչը քանդակված է ծակոտկեն և տեղադրված է այնպես, որ ծագող արեգակի շողերը թափանցում են խաչի անցքերի միջով և ասես նրան երկինք են բարձրացնում։ Հեղինակն այստեղ կիրառել է Հայաստանում քրիստոնեության տարածման դեռ սկզբնական շրջանում հայտնի միջոցը, երբ բացված թևերով խաչքարերը զետեղվում էին ծակոտկեն հիմքերի վրա՝ համապատասխան տեսողական տպավորություն ստեղծելու նպատակով։

Գավազանը կառուցվել է այն ժամանակ, երբ վանքի գլխավոր շենքերի կառուցումն արդեն ավարտված էր կամ ավարտվելու վրա էր։ Եվ հասկանալի է, սյունի հեղինակը մտածել է առավել հարմար վայրում զետեղել այն։ Ի տարբերություն նույնանման ուրիշ շատ հուշարձանների, որոնք մեծ մասամբ պատահական վայրերում են գտնվում, Գավազանը զետեղված է Տաթևի վանքի շենքերի մեջտեղ, այն հաշվով, որ նրան նայելն ավելի մեծ տպավորություն գործի (նկար 2)։ Սյունը

[2] Նույն տեղում, էջ 225, 313։



Նկար 2.— Տաթևի վանքի գլխավոր հատակագիծը

գտնվում են լակի այն մասում, որ ավելի հեռու է վանքի դարբասից և ծածկված է Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու վիթխարի գանգվածով։ Եկեղեցին շրջանցելուց հետո միայն կարելի է տեսնել սյունը, որը մոտեցողին երևում է իր հյուսիս-արևմտյան կողմից։

Մասամբ սրանից է կախված, որ խաչքարը, փոխանակ ընդունված արևմտահայաց տեղադրության, այստեղ նայում է դեպի հյուսիս-արևմուտք։ Բայց այդ շեղման պատճառն ավելի մեծ չափով եղել է խաչքարի անցքերի միջով ավելի շատ արևի ճառագայթներ անցնելու անհրաժեշտությունը, նրան ճախրելու տեսք տալու համար, իսկ այդ, ելնելով շրջապատի լեռնազագաթների դասավորությունից, հնարավոր է եղել միայն ընդունված կողմնորոշումով։

Բանի տվյալ մասի սահմանափակ տարածության պատճառով, Գավազանը տեղադրված է վանահոր երկհարկանի կացարանի պատշգամբի հենց առաջ, և մեծ թվով ուխտավորներ լինելու դեպքում, համարյա անհնարին է Գավազանը շորս կողմից դիտել։ Այն տեսնել կարելի է միայն հյուսիսային և արևմտյան կողմից։

Սյան բարձրությունն էլ պատահական չէ։ Դա պայմանավորված էր պատշգամբի բարձրությամբ, որն արևածագի ժամանակ սյան վրա ստվեր դցելով, լուսավոր էր թողնում միայն նրա գագաթը, որով և դիտողի առաջ շեշտվում էր հատկապես ճախրող խաչքարը։

Օրվա համարյա բոլոր ժամերին պատշգամբը մթագնած էր մնում, որով ստեղծվում էր մի կոնտրաստ ֆոն, որի վրա պայծառորեն աչքի էր ընկնում արևի ճառագայթներով ողողված Գավազանը (տե՛ս նկար 1)։ Իր ուղղահայաց դիրքով գավազանն իշխում էր պատշգամբի հորիզոնականի վրա։ Փայտե պատշգամբի և քարե սյունի կոնտրաստային հակադրությունը ևս ուշադրությունը կենտրոնացնում էր Գավազանի վրա, իսկ վեհատես բնի հակադրումը պատշգամբի բարակ սյուների և երկրորդ հարկի ճաղերի հետ՝ ընդգծում էր սյունի վեհությունը ու հավերժականությունը։

Վերը ասածներից երևում է, որ ճարտարապետը իր կառույցի տեղի ընտրությանն առաջնակարգ նշանակություն է տվել։ Վանքի



Նկար 3.—Տաթևի սյան ճակատը և հատակագիծը

բակի ընդհանուր տարածության վրա կամ նրա ցանկապատից դուրս ինչ տեղ էլ դրվեր սյունը, նա չէր կարող ունենալ անհրաժեշտ ճարտարապետական արտահայտչականությունը։

Իր կառուցումից հետո Տաթևի սյունը մնացել է համարյա անփոփոխ։ Միայն ԺԵ դարի սկզբում Առաքել Սյունեցի արքեպիսկոպոսը, ի հիշատակ իր ազգական, նշանավոր հայ աստվածաբան ու գրող Գրիգոր Տաթևացու, հին խաչքարի փոխարեն դրել է նույնպիսի նոր խաչքար։

Այս հուշարձանի մասին առաջին դրավոր հիշատակությունը եղել է ԺԳ դարում։ Ստեփանոս Օրբելյանը հիացմունքով նկարագրելով մանր քարերից կառուցված սյունը, նշում է, որ նրա երերումը սարսափ է ազդել այլադավան սելջուկ նվաճողների վրա, և Տաթևի վանքն ավերելիս նրանք չեն համարձակվել ոչնչացնել Գավազանը[3]։

3 Նույն տեղում, էջ 313։

ԺԹ դարի հեղինակներ՝ Ս. Ջալալյանը, Ա. Երիցյանը, Էմինը, Հ. Ղ. Ալիշյանը, Ե. Լալայանը նույնպես սահմանափակվել են սյան ընդհանուր նկարագրությամբ և փաստորեն Ստեփանոս Օրբելյանի տված տեղեկությունների վրա ոչ մի նոր բան չեն ավելացրել[1]։ Ս. Ջալալյանը սյան երերման «գաղտնիքը» համարում է նրա հիմքի մեջ լցրած սնդիկը։ Այդ նույն բանը կրկնել են նաև Էմինն ու Ե. Լալայանը, իսկ օտարերկրացի գիտնականներն առաջարկել են «գաղտնիքը» պարզելու համար պեղում կատարել և հիմքը հետազոտել։

Սյան մասին փոքր-ինչ ավելի մանրամասն են խոսում հետագայի հեղինակները։ Թ. Թորամանյանն ուշադրություն է հրավիրում շարվածքի կառուցվածքային ամրության վրա, որի շնորհիվ երերացող սյունը մնացել է մինչև մեր օրերը։ Ա. Ցակոբսոնը սահմանափակվում է պարզ նկարագրությամբ, իսկ Ս. Մնացականյանը մի քիչ ավելի է ընդարձակում այն, համեմատելով այլ հուշարձանների հետ[5]։

Միայն Վ. Հարությունյանը և Ս. Սաֆարյանը Գավազանի կառուցումը վերագրելով 895 թվականին (?), բնորոշում են այն որպես «երերող... կրնկավոր հիմքի վրա», առանց բացատրելու կրնկի կառուցվածքը և սյան երերման սկզբունքը[6]։

Սյան ընդհանուր տեսքը հայտնի է բազմաթիվ նկարագրություններով։ Նրա առավել հին պատկերը գրչանկարով երևան է եկել ԺԹ դարի վերջում Հ. Ղ. Ալիշանի «Սիսական» աշխատության մեջ։ Հետագայում զետեղվել են Մ. Փափազյանի, Դ. Երմակովի և այլոց նկարած լուսանկար պատկերները։ Չափումներ չեն տպագրվել և, դատելով եղած տեղեկություններից, առաջին անգամ չափումներ կատարել է Գ. Աղաբաբյանը 1944 թվականին, ապա մենք, 1957-ին։

Տաքեի սյունը կառուցված է չեչոտ մոխրակապտավուն բազալտից, որը, ըստ սյան բարձրության, տարբեր խտություն ունի։ Կառուցվածքը բաղկացած է երկու մասից՝ հիմնական ցածի մասը որպես ութկողմանի բուն իր պատվանդանով ու քիվով և պսակավորող վերին մասը՝ խաչքարը, որ դրված է նույնպես ութկողմանի պատվանդան ունեցող փոքրիկ ուլունքանման հիմքի վրա։

Սյան պատվանդանը երկաստիճան է։ Ցածի աստիճանի բարձրությունը (40 սմ.) զգալիորեն պակաս է վերինից (56 սմ.)։ Աստիճանների դուրս ընկած մասերի չափերը համարյա հավասար են՝ 8—10 սանտիմետրի սահմաններում։ Բուն զարդարված է 28 սմ. լայնությամբ քանդակազարդ մի գոտիով, որ բաղկացած է տարբեր ուղղություններով ոլորված երկու կիսահոյաններից (նկար 4)։ Գոտին բուն բաժանում է տարբեր բարձրությամբ (2,64 և 2,10 մ.) և հաստությամբ

Նկար 4.—Տաքեի սյան բնի դրվագազարդ գոտին

1 Ս. Ջալալյան, «Ժամանակագրություն ի Մեծն Հայաստանեայ, Տփխիս, 1858, գիրք Բ, էջ 268։ Ա. Երիցյան, «Տաքեի վանքը, 5-րդ Հնագիտական համագումարը Թիֆլիսում։ Նախապատրաստական կոմիտեի արձանագրությունները», Մոսկվա, 1880, էջ 408—412, 426 (ռուսերեն)։ Էմին, «Տաքեի վանքը», «Արաքս» ամսագիր, Ս. Պետերբուրգ, 1893, գիրք Բ, էջ 28։ Հ. Ղ. Ալիշան, «Սիսական», Վենետիկ, 1893, էջ 234։ Ե. Լալայան, «Սիսական», «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1898, № 1, էջ 139։

5 Թ. Թորամանյան, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», Երևան, 1942, Աշխատությունների ժողովածու, էջ 138։ Ա. Ցակոբսոն, «Տաքեի վանքը», «Սովետսկայա արխեոլոգիա», Մոսկվա, 1947, IX, էջ 316 (ռուսերեն)։ Ս. Մնացականյան, «Հայկական ճարտարապետության նյութերի դպրոցը», Երևան, 1960, էջ 168—171։

6 Վ. Հարությունյան, Ս. Սաֆարյան, «Հայ ճարտարապետության հուշարձանները», Մոսկվա, 1951, էջ 49 (ռուսերեն)։

ՄԱՍՏԱՐԱՑԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ Է ԴԱՐՈՒՄ

Նկարիչ՝ Գրիգոր Ավագյան

Նկար 5.— Տաթևի սյան պսակավորող մասը

(ստորին նիստերը՝ 37—39 սմ., վերինը՝ 35—37 սմ.) երկու մասերի։ Գոտին ոչ միայն զարդարում է 5,02 մ. բարձրությամբ ութկողմանի բնի միապաղաղությունը, այլև աննկատելի է դարձնում վերին ու ներքին մասերի հաստության տարբերությունը։ Ոչ այնքան մեծ (12 սմ.) կարկառ և բարձրություն (42 սմ.) ունեցող քիվը բաղկացած է մեկ ամբողջական քարից, որի ստորին մասը շեղատված է (նկար 5)։ Քիվի ճակատը զարդարված է բուդանման հյուսվածքով, իսկ շեղատվածքի վերին մասը՝ հոյակ տերևներով, որոնք լույսի ու ստվերի շքեղ խաղ են ստեղծում։ Բնի վերին մասի համարյա բոլոր նիստերում տարբեր տեղեր քանդակված են խաչեր ու երկրաչափական հյուսվածքներով վարդյակներ, իսկ ցածի մասում հենց ուղիղ գոտու վերևը՝ արևի ժամացույց և մի թռչնակ։

Քիվի վրա դրված է ութանքանման քարի պատվանդանը, որի ութ կողմերից յուրաքանչյուրը դրվագազարդված է մի կլորաձև վարդյակով՝ բաղկացած այլազան երկրաչափական նախշերից։ Այս վարդյակները զարդարում են ստորին ուղղահայաց մասից դեպի վերին թեք մասը։ Ութանքանման քարի մակերևույթը կողավորված է 45° թեքությամբ կիսահոլաններով, տրամադիծը՝ (55 սմ.) համապատասխանում է պատվանդանի վերին հարթությանը։ Խաչքարը ցանցկեն է, կիսակլոր դլխով (60—80 սմ.), ութանքանման քարից փոքր-ինչ լայն։ Ի տարբերություն սովորական խաչքարերի, այս խաչքարը երկկողմանի է, այսինքն երկու կողմերում էլ միանման քանդակազարդ ունի։ Խաչի թևերը վերջավորված են բացվող կոկոնների ձևով։

Սյան բարձրությունը գետնից մինչև խաչքարի գագաթը 7,98 մետր է և ոչ թե 15 մետր, ինչպես նշում են վերոհիշյալ հեղինակներից շատերը։



Նկար 6.— Տաթևի սյան ցանկապատի ճակատը. հատակագիծը, կտրվածքը և մասերը։

Նկար 7.— Տաթևի սյան ցանկապատի անկյունասյունը

Սյունը ամեն պատահական այցելուի կամ անցորդի հրումից պաշտպանելու համար, անցյալ դարի 90-ական թվականներին նրա շուրջը կառուցվել է ութանկյունի հատակագծով մի քարե ցանկապատ, երկաթե ճաղերով (նկար 6, 7): Այդ ցանկապատը, որ ներկայումս կիսավեր վիճակում է, գեղարվեստական ձևավորումով ԺԹ դարի վերջի և Ի դարի սկզբի ռուսական ճարտարապետության ազդեցությունն է արտահայտում։

Հայկական ճարտարապետության պատմության մեջ աստիճանավոր պատվանդանի վրա առանձին կանգնած սյուն-հուշարձանների կառուցման սկիզբը վերագրվում է վաղ քրիստոնեության ժամանակաշրջանին (Դ—Ե դարեր)։

Դրա բնորոշ օրինակներն են այն քառակողմ կոթողները, որ դրվում էին որպես հերեղմանաքար կամ հուշարձան։ Առավել լավ պահպանված այդպիսի մի հուշարձան կա Թումանյան գյուղում (նկար 8): Դա բուսական դրվագագարդով զարդարված քառակողմ մի կոթող է (բարձրությունը 2,71 մ., կողերի լայնությունը՝ 40—42 սմ.), զետեղված քառաստիճան լայն պատվանդանին դրված խորանարդաձև հիմքի վրա։ Կոթողը, որի պսակավորող մասը չի պահպանվել, պատվանդանի հետ միասին 4,61 մ. բարձրություն ունի։

Ավելի բարդ ձև ունի Հովհաննավանքի հուշարձանը, որ վերաբերում է է դարին[8]։ Այն բաղկացած է ութկողմանի երկաստիճան ստիլոբատից, նույնպիսի ութկողմանի պատվանդանից, որի վրա կան կամարանման խորություններ, և բնից ու խոյակից (նկար 9):

7 Ն. Լալայան, նշված աշխատությունը, էջ 139։

8 Կ. Ղաֆադարյան. «Հովհաննավանքը և նրա արձանագրությունները», Երևան, 1948, էջ 44։

Նկար 8.— Թումանյան գյուղի կոթողը

Բուն կազմված է դեպի վեր փոքր-ինչ փոքրացող չորս պլաններից, որոնք վերևում միացված են պայտանման կամարիկներով։ Խոյակի հատակագիծը քառակուսի է, ճակատները՝ պրոֆիլված ու զարդարված, վերին ու ցածի մասում միահյուսված զարդաքանդակներով, իսկ մեջտեղը, ինչպես նաև պատվանդանի վերին աստիճանի երեսները՝ գծաքանդակներով։ Ներկայումս հուշարձանի խոյակը շուռ տված է, պսակող քարը չի պահպանվել։ Ընդհանուր բարձրությունը մոտ 3,5 մետր է։

Քառակողմ կոթողների և Տաթևի ութկողմանի սյան միջև միջանկյալ օղակ է հանդիսանում Օշական գյուղի հուշարձանը[9]։ Նոաստիճան պատվանդանի վրա դրված է համարյա խորանարդաձև մի քար, որի վրա

9 Թ. Թորամանյան, նշված աշխատություն, 1948 թ., Աշխատությունների երկրորդ ժողովածու, էջ 54։

Նկար 9.— Հովհաննավանքի հուշարձանը



Նկար 10.— Օշական գյուղի հուշարձանը
(Վերակազմություն Թ. Թորամանյանի)

կանգնած է ութկողմանի սյուներ։ Սյան ցածի մասը քառակուսի ձև ունի, որ ցույց է տալիս նրա կապը նախաքրիստոնեական կոթողների հետ (նկար 10)։ 3,72 մ. բարձրությամբ սյունը բարձրում վերջավորվել է մի խոյակով, որը նման է եղել Զվարթնոց Մայր Տաճարի (641—661 թ. թ.) խոյակներին, մի բան, որ թույլ է տալիս հուշարձանի կառուցումը վերագրել նույն ժամանակներին։ Խոյակի վրա դետեղված է եղել քարե խաչը, որը Հ. եպիսկոպոս Շահխաթունյանցի վկայությամբ, ժամանակի ընթացքում հողմահարվել ու ընկել է[10]։ Տեղի բնակչությունը այդ համարում է դե-

10 Հ. եպիսկոպոս Շահխաթունյան, «Մատրաղութիւն կաթողիկէ Էջմիածնի և հին գաւառաքն Արարատայ», Էջմիածին, 1842, հատոր երկրորդ, էջ 80։



Նկար 11.— Որոտնավանքի հուշարձանը

ռեժիմանաքարը Մորիկ կայսեր մոր, որն ըստ ավանդության հայ է եղել և ծնունդով օշականցի։

Հետաքրքրություն է ներկայացնում նաև ԺԴ դարի մի հուշարձան, որ գտնվում է Որոտնավանքի Մայր եկեղեցու հարավային ճակատի արևելյան անկյան մոտ։ Դատելով ըստ ԺԹ դարի վերջին Դ. Երմակովի կատարած լուսանկարի (նկար 11) և Ե. Լալայանի նկարագրության, այս հուշարձանը զետեղված է եղել քարաշեն բարձունքի վրա և բաղկացած է եղել երկաստիճան հիմքից, պսակավորող խաչքարով[11]։ Ըստ Ե. Լալայանի, կառուցվածքի ընդհանուր բարձրությունը հավասար է 5,68 մետրի, սյան բարձրությունը՝ 2,13 մետրի, կողերի լայնությունը՝ 40 սանտիմետրի։

Մեր նշած օրինակներից Օշականի հուշարձանի բունը ութկողմանի է, որ կիրառված է նաև Աղուդիի հուշարձանում։ Ինչպես Տաթևի սյունը, այս սյունը ևս ուլունքանման քար ունի կուլավոր մակերեսով. միայն եռակի թեքված կողերով և դեպի վեր նեղացող պատվանդան, որի չորս երեսներից յուրաքանչյուրի վրա մի վարդաքանդակ։ Սակայն, ի տարբերություն Տաթևի սյան, Աղուդիում պատվանդանավոր ուլունքանման քարը զետեղված է սյան տակ և ոչ նրա գլխին։

Թերված բոլոր դեպքերում սյուների բները շինված են լայն հիմքի վրա դրված միակտուր քարից, որի նպատակն է եղել ամրություն տալ անշարժ հիմքով ոչ խոշոր կառույցին։

Չնայած դրան, հուշարձաններից ոչ մեկը ողջ չի պահպանվել։ Սովորաբար ավերվել է վերին մասը, նախ հուշարձանը պսակազարդող խաչը, ապա նրա հիմքը՝ բունը վերջավորող խոյակը։ Ավերման պատճառը բավական պարզ է։ Մեծ մասամբ վերին մասերը բնի հետ միացվել են ներքին ելունների միջոցով, որը բավարար չի եղել երկրաշարժի ցնցումներին դիմադրելու համար։ Բավական բարձր զետեղված ծանր խաչն ու խոյակը երկրաշարժի ուժեղ ցնցումներից մեծ իներցիա են ստացել, որը և կառուցվածքի լիակատար անշարժության պայմաններում նրանց դուրս է գցել իրենց տեղից։

Տաթևի սյունը իր բարձրությամբ մեկուկես-երկու անգամ գերազանցում է համեմատության համար բերված օրինակներից։ Այս կապակցությամբ այստեղ մշակվել է սյան կառուցման յուրահատուկ ձև, որը և դիմացել է բազմադարյան փորձությանը։

Հայաստանը բարձր հրաբխային երկիր է։ Ըստ Կ. Կոստանյանցի հետազոտության, որ հիմնված է հին պատմիչների տվյալների վրա, զգալի ուժով երկրաշարժեր կրկնվում են համարյա յուրաքանչյուր 15—20 տարին մեկ[12], որ կործանարար ազդեցություն է ունենում հուշարձանների պահպանման վրա։ Մասնավորապես Տաթևի կառուցվածքների կոմպլեքսը առնվազն երկու անգամ հիմնովին ավերվել է։

Աղետների բազմադարյան ուսումնասիրությունը հայ կառուցողներին սովորեցրել է

11 Ե. Լալայան. Նշված աշխատությունը, էջ 151։

12 Կ. Կոստանյանց. «Շարժի տարեգրություն հայոց մեջ», Թիֆլիս, 1902 թ.։

պտնել ընդունելի շարժակայուն կառուցվածքային և տարածա-կոմպոզիցիոն սխեմաներ։ Մեծ ուշադրություն է դարձվել կառուցվածքի սեփական կշիռի կործողություններ և նրա տեղադրման շենքի գանազան մասերում։ Ինչպես հայտնի է, շարժակայունության համար շատ կարևոր դեր է խաղում ամբողջ կառուցվածքի ծանրության կենտրոնի տեղը։ Միևնույն բարձրության դեպքում որքան ավելի ցածր լինի ծանրության կենտրոնը, այնքան ավելի լավ կդիմադրի կառուցվածքը շարժի ցնցումներին։ Ուստի և հայ ճարտարապետներն ամեն կերպ ձգտել են շենքի վերին մասերը թեթևացնել։ Այդ մասերը կառուցել են ավելի թեթև շինանյութով, որպես ինչպես լիցք ու շաղախ ողտագործել են թեթև տուֆ ու պեմզա, խալբարը թեթևացրել են փուչ խորշերով կամ թև դատարկ կճուճներ տեղադրելով[13]։

Տաքնի սյան հեղինակը ոչ միայն պետք է ապահովեր փոքր մակերեսով հիմք, բայց մեծ բարձրություն ունեցող կառուցվածքի երկրաշարժադիմացկունությունը, այլև պետք է շարժման դեպքում երերալու ունակություն տար նրան։ Սյան երերալու և շարժակայունության հատկություններն, անտարակույս, կապված են միմյանց հետ։ Ստորերկրյա ցնցման կամ մարդու ձեռքի հրման ենթարկվելով, սյունն սկսում է շարժվել, այսինքն երերում է և, նայած ցնցման ուժին, միառժամանակ տատանվելուց հետո, նորից իր նորմալ դիրքն է ստանում։ Եվ հենց այս հատկության շնորհիվ էլ սյուներ ողջ պահպանվել է մինչև մեր օրերը։

Տաքնի սյան բունը շարված է մանր քարերից, որոնք կարևոր տեղերում կապված են խոշոր բլոկներով։ Բնի երկու մասերն էլ ունեն վեցանկյան շարք շարվածք, որոնց բարձրությունը տատանվում է ցածի կեսում 39-ից մինչև 52 սմ., վերին կեսում՝ 32-ից 40 սմ. (նկար 12)։ Կառուցվածքի մակերեսը կազմող քարերը լավ հղված են միմյանց։ Կարևոր առանց շաղախի են, չոր, ուստի և տեղ-տեղ համարյա անկատելի։ Այդ բացառել է արտաքին շարվածքի անհամաչափ նստումի հնարավորությունը։ Կարևոր խորությունը վերին շարքերում 4—6 սմ. է, ստորինում՝ մոտ 10 սմ.։ Սյան միջուկը բաղկացած է խճաքարի կրաշաղախից, որը զանգվածը դարձնում է միաձույլ։ Սյան մեջ կրաշաղախի միջուկի գոյության մասին խոսում է պատմագիր Ստեփանոս Օրբելյանը. սյուներ կառուցված է «ի մանր քարանց պատուածնոյ»[14]։ Նույնանման կառուցվածքը բնորոշ է նաև միջնադարյան Հայաստանի բազիլիկային եկեղեցիների ներքին սյուներին։ Վերլուծելով Օրբելյանի տվյալները, Թ. Թորամանյանը շեշտում է, թե կրաքարային շաղախի շնորհիվ է, որ սյունը պահպանվել է[15]։



Նկար 12.— Տաքնի սյան կառուցվածքային կտրվածքը

Ճշգրիտ որոշված չէ, թե երերման ժամանակ սյունը որքան է թեքվել իր ուղղահայաց դիրքից։ Ըստ Ա. Երիցյանի տվյալների, վերին ծայրը կարող է մոտ մեկ մետրանոց, այսինքն 2,13 մ. շառավղով շրջագիծ գծել[16], որ ուղղահայացի հետ կազմում է 160° 19′ անկյուն։

Երերման մոտավորապես նույնպիսի մեծություն է տալիս նաև Գր. Քոչարյանը[17], ըստ որի թեքման ամենամեծ անկյունը կազմում է 15 աստիճան, որ խալի վերին ծայրի շեղում է տալիս 1,96 մ.։

Այս տվյալներն, անտարակույս, չափազանցված են։ Եթե այդ տվյալներին համապատասխան սյուներ թեքվի, ծանրության կենտրոնը հիմքի սահմաններից էլ դուրս

[13] Այս հարցի վերաբերյալ մանրամասն տե՛ս Հ. Խալիփաչյան, «Հայաստանի ժողովրդական վարպետների շինարարական ավանդական եղանակները», «Արխիտեկտուրնոյե նասլեդստվո» ժողովածու, № 3, Մոսկվա, 1953, էջ 63—71 (ռուսերեն)։

[14] Ստեփանոս Օրբելյան, նշված աշխատություն, էջ 225։

[15] Թ. Թորամանյան, նշված աշխատություն, էջ 139։

[16] Ա. Երիցյան, նշված աշխատություն, էջ 420։

[17] «Լենինգրադսկայա պրավդա» օրաթերթ, Ալմա-Աթա, 1959 թ., մարտի 18, № 55 (4743), էջ 4, «Որ ուղղվիտելնում ստորեն»։



Նկար 13.— Տաթևի սյան կտրվածքը ըստ Ա. Երիցյանի (Ա) և Գր. Քոչոյանի (Բ)

կանցնի, ուստի և այն չի կարող իր նախկին դիրքին վերադառնալ և կընկնի։ Այս երևում է գծագրությունից, որի վրա ցույց են տրված սյան թեքումները 16° 19′ և 15° անկյուններով (նկար 13)։

Ցավոք սրտի, ներկայումս հնարավոր չէ սյան սկզբնական առավելագույն թեքումն ստանալ. 1931 թվականի 8 բալանոց երկրաշարժը խախտել է սյան նորմալ վիճակը։ Բնի ցածի մասում առաջացել են զգալի ճաքեր, որոնք հասել են միջուկին։ Երևի դրա համար էլ այժմ սյունը որոշ թեքություն ունի դեպի հարավ-արևելք։ Եթե առաջներում սյունը շարժվել է ձեռքի սեղմումից, ապա այժմ հարկավոր է զգալի ուժ գործադրել[18]։ Հուշարձանը կործանումից փրկելու համար ցածի մասի ճաքած տեղերն ամրացվել են երկաթե օղերով և կրաշաղախով։

Սյան թեքման աստիճանն իր ուղղահայաց դիրքից, անկասկած, հիշատակած չափերից ավելի քիչ է եղել։ Թեքման անկյունը կախված է կառուցվածքի ծանրության կենտրոնի տեղից։ Թեքման դեպքում, ծանրության կենտրոնից իջնող ծանրության ուղղահայաց հիմքի մակերեսի սահմանից դուրս գալու դեպքում, սյունը իր ծանրության ազդեցությամբ չի կարող վերադառնալ նախկին դիրքին և կընկնի։ Ուստի և առավել մեծ թեքություն ստանալու համար անհրաժեշտ է, որ ծանրության կենտրոնը որքան կարելի է ցածր լինի։ Այս կանոնը, որ լավ հայտնի է եղել հին դարերի կառուցողներին, հիանալիորեն իրականացվել է Տաթևի սյան կառուցվածքի մեջ։

Հուշարձանի վերին մասը հնարավորին չափ թեթևացված է։ Խաչքարը փոքր է, ցանցաձև, կլորացված գագաթով և առատորեն ճակատազարդված կիսահոլաններով ու կլորաքանդակ զարդերով, ուլունքանման քարը նույնպես քանդակված կողեր ունի, իսկ նրա հիմնամասը սյան բնի համեմատությամբ ավելի փոքր հատված ունի։ Ոչ մեծ քիվը նույնպես խոր-խոր քանդակներ ունի։ Թեթևացած է նաև բնի վերին կեսը։ Նրա հատվածքը դոտուց վերև փոքր-ինչ նվազեցված է, որը 0,13 մ³ ծավալի խնայողություն է տվել։ Հետազոտությամբ պարզվել է, որ շարվածքի քարերի հաստությունը եղել է փոքր, 20—25 սանտիմետրի սահմաններում։ Այդ քարերից շատերը հողմահարման հետքեր ունեն, որ ցույց է տալիս նրանց փափկությունը, հետևապես և ոչ այնքան մեծ կշիռը։ Հնարավոր է, որ միջուկում գործածվել է թեթև, իներտ նյութ՝ պեմզա։

Սյան ստորին մասն ավելի մասսիվ է, կառուցված է ավելի հաստ, մոտ 30 սմ. հաստությամբ զգալիորեն ավելի պինդ քարերով (քանի որ հողմահարման հետքեր չեն հայտնաբերված)։ Որքան հաջողվեց ճեղքերի միջով նայել, միջուկի շաղախի մեջ օգտագործված են խոշոր քարեր, սովորական կրաշաղախ, որը ոչ միայն ավելացնում է սյան ցածի մասի կշիռը, այլև հնարավորություն է տալիս դիմանալ ավելի բարձր լարման[19]։

Ստորին ծանր և վերին թեթև մասերի միջև սահման է հանդիսանում դրվագազարդ գոտին։ Գոտու տեղադրությունն էլ պատահական չէ. զետեղված է այն գծի վրա, որը սյան

18 1931 թվականի սեպտեմբեր ամսին մեզ մեծ դժվարությամբ հաջողվեց սյունը շարժել։ Սյան 2 մետր բարձրության վրա գործադրված 50 կիլոգրամանոց ուժի ազդեցության տակ, պատվանդանի վերևի աստիճանի շեղումը, ըստ ինդիկատորի, կազմեց 5 միկրոն։

19 Միևնույն կառուցվածքի տարբեր տեղերում տարբեր ամրությամբ քարի տեսակներ օգտագործելը, որ համապատասխանի նրանց մեջ ծագող լարման բնույթին և ուժին, հաճախ է կիրառվել հայ հին կառուցող վարպետների կողմից։ Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Եալփոխյան, նշված աշխատությունը, էջ 57։

բարձրությունը գետնից մինչև քիվը բաժանում է 2:1 հարաբերությամբ, այսինքն մոտավորապես այն տեղում, որի սահմաններում շարժի ցնցումները կարող էին ավերիչ ուժ առաջացնել։ Այդ հատվածի ամրության համար գոտին շինված է ամբողջական քարից։ Նրա ճակատամասը ձևավորված է որպես բնի շուրջը երկու անգամ փաթաթված պարան, և այդ տեսողական իմաստով էլ ուժեղացնում է ամրության տպավորությունը։ Կառուցվածքային նկատառումներով, ամբողջական քարերից են շինված պատվանդանի աստիճանները, ուղղանկյան քարն իր հիմնամասով և խաչքարը։ Քիվը բաղկացած է չորս քարից, որոնք իրար են սեղմված պսակավորող մասով։

Սյան ծանրության կենտրոնի ցածրում լինելը պարզվում է նրա մասերի ծավալի համադրությունից։ Պատվանդանի վերին աստիճանը կազմում է 0,54 մ³, բնի ստորին մասը՝ 1,80 մ³, գոտին՝ 0,22 մ³, բնի վերին մասը՝ 1,41 մ³, քիվը՝ 0,30 մ³, ուղղանկյան քարն իր հիմնամասով՝ 0,24 մ³, խաչքարը՝ 0,04 մ³։ Այսպիսով, պատվանդանի ստորին աստիճանից վերև ընդհանուր ծավալը հավասար է 4,55 խորանարդ մետրի, որ 1 խորանարդ մետրի 1 800 կգ. ծավալային կշռի դեպքում կազմում է 8 190 կգ.։ Եթե պայմանական ընդունենք, որ սյունը բաղկացած է մեկ նյութից, ապա ծանրության կենտրոնը կգտնվի գետնից 3,5 մ. բարձրության վրա, այսինքն՝ գոտուց ցած վերին շարվածքաշարքի սահմաններում։ Սակայն հաշվի առնելով, որ բնի վերին մասը ցածի համեմատությամբ թեթևացված է, ծանրության կենտրոնը պետք է որոնել մոտավորապես շարվածքի հինգերորդ շարքի մեջտեղի մակարդակի վրա, այսինքն՝ մոտ 3 մետր բարձրության վրա։

Ինչպես վերը նշած փաստերից երևում է, ճարտարապետը բոլոր հնարավոր միջոցները գործադրել է ծանրության կենտրոնը ցած տանելու համար։ Միաժամանակ չի մոռացվել կառուցվածքի գեղարվեստական ձևավորումը, որ լուծվել է պարզ, բայց արտահայտիչ, իր ժամանակի համար բնորոշ ձևերով։

Պակաս սրամտությամբ չի լուծվել երերման հարցը։ Այն թեքման կետը հետազոտողներից ոչ ոք դեռ չէր որոշել։ Պատվանդանի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դա պատվանդանի վերին ու ստորին աստիճանների միացման տեղն է (տե՛ս նկար 12)։ Դրա համար էլ աստիճանները շինված են ամբողջական քարերից, որով ապահովված է հոդակային միացման ամրությունը։

Ստորին աստիճանը և հիմքը շինված են մեկ քարից։ Գետնի երեսից ցած, ուղղանկյան աստիճանը փոխվում է քառակուսի հիմքի, որը 35 սմ. բարձրություն ունի (նկար 14)։ Հիմքը նստած է ժայռազանգվածին լցված ավազահողի բարձի վրա, որի հաստությունը որոշել չհաջողվեց։ Սյան շուրջը սալապատված չէ։ Վերևի աստիճանաքարը բետոնով ամուր միացված է բնի քարե շարվածքին, բայց ինքը ապատ կանգնած է ցածի աստիճանաքարի վրա, որ և սյանը հնարավորություն է տալիս թեքվել ուղղահայաց դիրքից։

Սյունը կայուն է ուղղահայաց դիրքում, որին նա անպայման վերադառնում է երերումը դադարելուց հետո։ Սյան այս առանձնահատկությունը հիմք է տալիս այն համեմատելու «վանդա–վստանկա» խաղալիքի հետ, որը գնդաձև հիմք ունի և հիմքի ծանրացումով ծանրության կենտրոնը ցած է բերված, ուստի և նույնիսկ կողքի վրա պառկեցրնելու դեպքում այն վերադառնում է իր սկզբնական ուղղահայաց դիրքին։

Այդպես էլ Տաթևի սյան ստորին աստիճանաքարի ցածի մակերեսը կլորավուն ձև ունի։ Կորությունը չնչին է, որով սահմանափակվել է սյան թեքման աստիճանը և ապահովվել

Նկար 14.— Տաթևի սյան պատվանդանը

նրա արագ վերաշարժը ուղղահայաց դիրքին (նկար 15)։ Կորուբյան շառավիղն զգալիորեն ավելի մեծ է «ԱԼ» ծանրության կենտրոնից մինչև հիմքի ճոճման կետն ընկած տարածությունից, որովհետև հակառակ դեպքում սյունը չի կարող վերադառնալ իր սկզբնական դիրքին։ Կլորավուն մակերեսի հետազոտության[20] հիման վրա կորության «Բ—Դ» շառավիղը պետք է լինի ոչ պակաս 8,0 մետրից, որն ապահովում է այնպիսի թեք դիրք, ուր ծանրության ուղղահայաց բաղադրիչը մնալով հիմքի մակերեսի սահմաններում, սյունը վերադարձնում է նախնական դիրքին։

20 Հետազոտությունը հնարավոր եղավ շնորհիվ այն բանի, որ վերջին երկրաշարժի ժամանակ (1931 թ.) սյունը խախտվել է իր նորմալ տեղից, և նրա հիմքի ու պատվանդանի միջև բացվել է մի ճեղք, որով կարելի եղավ դիտումներ կատարել։



Նկար 15.— Տաթևի սյան տեսական շեղումը, առանցքայափական տեսքը և հորիզոնական կառուցվածքի կտրվածքը

Կլորավուն հիմքի 8,0 մ. շառավիղի և նրա 1,10 մ. լայնության դեպքում վերելքի սլաքը կազմում է մոտավորապես 2,0 սմ.։ Դրա հետևանքով խաչքարի գագաթի առավելագույն շեղումը ուղղահայացից կկազմի 0,53 սմ.։ Այսպիսի չափի դեպքում շեղման անկյունը հավասար է 3° 56'-ի։

Հիմքի ցածի աստիճանի վերին մակերեսը, որի վրա տեղի է ունենում երերումը, համարյա հորիզոնական է։ Նրա կենտրոնում բացված է մոտ 35—38 սմ. տրամագծով մի անցք, որ կազմում է վերևի աստիճանի տրամագծի մոտ մեկ երրորդը։ Այս անցքի շնորհիվ հենումը տեղի է ունենում ոչ թե մի կետում, այլ շրջագծում, որով ապահովվում է սյան ավելի կայուն դիրքը։ Միաժամանակ անցքը, քանի որ նրա մեջ է սուզվում վերևի աստիճանի կլորավուն մակերեսի կենտրոնը, սյան չի թույլ տալիս սահել հիմքի վրայից. դրա համար անհրաժեշտ է գործադրել այնպիսի ուժ, որն ընդունակ լինի ոչ միայն բարձրացնել ութ տոննայից ավելի կշիռ ունեցող սյունը, այլև մի կողմ տեղափոխել այն։ Տեղական տրորվածքից խուսափելու համար և կլորավուն մասը հիմքի հետ ավելի սահուն շփվելու նպատակով անցքի եզրերը փոքրինչ կլորացված են։ Այս անցքն անհրաժեշտ է նաև նրա համար, որ նրա միջով հեռանան ջուրը և պատահաբար աստիճանների միջև ընկած տարածության մեջ ընկնող մանր կողմնակի առարկաները։

Վերը ասածները հիմք են տալիս անելու հետևյալ եզրակացությունը։ Շարժիչ հարվածի ազդեցությունը սյան՝ թուլանում է առաձգական հիմքի և հոդավոր միացման հակազդեցության շնորհիվ, որը սյան հնարավորություն է տալիս թեքվել ուղղահայաց դիրքից։ Վերին մասի թեթևության և ցածի մասի ծանրության շնորհիվ, շեղումները հասցված են նվազագույնի։ Շարժիչ հարվածի ազդեցությամբ սյան մեջ ծագող ավերիչ ուժերը հիմնականում գործում են բնի ցածի մասում, կառուցվածքի ծանրության կենտրոնի սահմաններում։ Այդ է հաստատում այն, որ սյան այդ մասի շարվածքը խախտվել է, չդիմանալով ավերիչ ուժի հասնող շարժիչ հարվածի զգալի ուժին։ Իսկ առավել մեծ խախ-



ԱՇՏԱՐԱԿԻ ԱԱՐԻՆԵ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԺԳ ԴԱՐՈՒՄ

Նկարիչ՝ Գրիգոր Ալիագյան

տումն ընկնում է շարվածքի հինգերորդ շարքին, որտեղ ծանրության կենտրոնն է։

Տաքնի սյան հոդակապային կառուցվածքի կիրառումը Հայաստանի շինարարական պրակտիկայում պատահական երևույթ չէ։ Առանձին հիմնաքարով սյուների հոդակապային միացում միշտ էլ կիրառվել է հայկական ժողովրդական բնակարաններ կառուցելիս, որ հայտնի է դեռ Քսենոֆոնի ժամանակներից (401 թ. մ. թ. ա)։ Մինչև քսաներորդ դարի սկզբները էլ Հայկական բնաշխարհում գյուղական բնակելի տները կառուցվում էին այդ սկզբունքով։ Հիշենք թեկուզ «գլխատունե»-ը, որի չորս պատերի տակ կամ ներսում շարված էին լինում քարե հիմքի վրա դրված փայտե սյուներ, որոնք և կրում էին տանիքի դերանածածկի ու հողի հաստ շերտի ամբողջ ծանրությունը։ Նույն ձևով կառուցվում էին նաև գոմերն ու մյուս շենքերը։ Նույնիսկ անտառագուրկ վայրերում, որտեղ փայտե սյուներ ձեռք բերելը մեծ դժվարության հետ էր կապված, շարժակայուն նկատառումներով երբեք քարե սյուներ չէին շարում։

Ծածկի ծանրությունն իրենց վրա կրող սյուների հոդակապային միացում իրենց հիմքերի հետ կիրառվել է նաև Միջին Ասիայում մեջիտների, ժողովրդական բնակելի տների «այվան»-ների փայտե սյուների տակ[21]։

Ինչպես Ցու. Ս. Ասեևն է ասում, ամենայն հավանականությամբ իրենց հիմքի հետ հոդակապային միացում են ունեցել Գալիցիական նշանավոր սյուներ, որ ունենալով 1,5 սաժեն (3,7 մ.) բարձրություն, պսակավորված է եղել առյուծով, ինչպես նաև Ջերնովիցի քաղաքի թանգարանում գտնվող մահարձանը և Կիև քաղաքի Սոֆիայի տաճարի գլխավոր գմբեթը պսակավորող խաչը։

Հոդակապային հիմքով կառուցումների օրինակները համաշխարհային ճարտարապետության պատմության մեջ հատուկենտ են։ Դրանց թվին են պատկանում Իսպահանի Հարյագանի 1315 թվականին կառուցված մեջիտի միներթները։ Այդ մեջիտը հայտնի է «ճոճվող միներթների մեջիտ» («Մինարեթ ջոնբոն»[22]) անունով։ Դա 12,5×13,0 մ. հատակագծով ոչ մեծ աղյուսի կառուցվածք է, որի ճակատի կողմի սլաքաձև կամարով խոր որմնախորշի երկու կողմերում գետեղված են հաստ պիլոններ, որոնք հասնելով մինչև շենքի կտուրը, այնուհետև վերջավորվում են գեղակազմ միներթներով։ Միներթներն ունեն խորանարդաձև հիմք (1,8 մ. կողմերով) և գլանաձև բուն, որ վերջավորվում է սլաքավոր աշտարակով։ Տանիքից վերև միներթի բարձրությունն է մոտ 8,0 մետր։ Եթե բարձրանաս դրանցից մեկի վրա և սկսես-ճոճել, մյուս միներթը ևս կսկսի ճոճվել նույն ռիթմով։ Դրանց ճոճման գաղտնիքը ցավոք սրտի դեռ պարզված չէ։ Մեր ենթադրությամբ այս միներթները ցածում, մեջիտի վերնամասում, միացված են փայտե գերաններով, որոնք ծածկված են շենքի կտուրի աղյուսե շարվածքով։ Գերանների դերն է միներթների ծանրությունը փոխանցել ավելի մեծ տարածության վրա, քան նրանց հիմքի տարածությունն է։ Այդ գերանների և աղյուսե շարվածքի առաձգական շաղախի հաստ կարերի ստեղծած կապի շնորհիվ, տեղի է ունենում միներթների ռիթմիկ ճոճում։

Տաքնի երերացող սյան կառուցվածքային առանձնահատկությունները ցույց են տալիս, որ հայ հին ճարտարապետները մեծ գիտելիքներ են ունեցել շինարարական մեխանիկայի օրենքներից և կարողացել են կիրառել դրանք իրենց կառույցներում։ Տաքնի սյունը, որի մեջ պարզ եղանակներով ճարտարապետը կարողացել է հասնել նշանակալից կառուցվածքային ու գեղարվեստական էֆեկտների, պատկանում է առավել վաղ ժամանակների այն յուրօրինակ ստեղծագործությունների թվին, որոնք արժանի ներդրում են համաշխարհային ճարտարապետության արվեստի գանձարանում։

---

21 Ն. Բաշինսկի. «Անտիսեյսմիկա վ արխիտեկտուրնոյ պամյատնիկախ Սերեդնեյ Ազիի», Մոսկվա-Լենինգրադ, 1949, էջ 36—37 (ռուսերեն)։

22 Վիլքեր Դ. Ն., «Իսլամական Իրանի ճարտարապետությունը։ Իլխանական շրջան։ Գրիսատոն, Նյու-Յորք, 1955, էջ 152—154, լուսանկար 117—120, գծագիր 32—33 (անգլերեն)։

ՅՈՒՅԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ՝

№ 160

ԵՐԱՁԱՀԱՆ

(Հայատառ տաճկերեն)

Թերթերը՝ 148.— Պրակները՝ 18, յուրաքանչյուրը 3 թերթից.— Մեծությունը՝ 15,2×10,2×3,4 սմ.։— Նյութը՝ սովորականից ավելի հաստ թուղթ, տեղ-տեղ դեղնած և կեղտոտած։— Կազմը՝ կաշեպատ տախտակ։— Պանպանակները՝ սկզբում և վերջում վեցական հասարակ թուղթ։— Վիճակը՝ բավարար, սակայն տեղ-տեղ գրությունը անընթեռնելի է դարձել։— Գրությունը՝ միասյուն։— Դատարկ էջերը՝ 5բ, 6ա, 6բ, 7ա, 9բ, 17ա, 17բ, 122ա և 133բ։— Տողերը՝ անկանոն, 17—21։— Գծումները՝ մատիտով։— Գինը՝ նորագիր։— Զարդագրություն՝ չկա։— Գրիչը՝ Մահտեսի Տատուր էնֆիյան կնաբացի։— Պիտվիրատուն՝ անհայտ։— Ժամանակը՝ 1 հոկտեմբերից մինչև 1 նոյեմբեր 1798 թ.։— Վայրը՝ անհայտ։— Ծանոթություն՝ Մայր Աթոռի ձեռագրատունը ստացել է Թբիլիսիից 1952 թվականին, գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանի միջոցով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 10ա.— Գամէրին հէր պիր կիւնիւնի կըրուէ վէ տախի սայրի հէքմէթլէրի պէյանտրր։

Թ. 16բ.— Պիր քիմսէ պիր տիւշ կէորսէ։

Թ. 18ա.— Ալլահի տուշունտա կէորսէ. հէր թիւրլու շէր պէյատան զուրթու։

Թ. 122բ.— Տարիքի հանդը պորճա օլմասրն այրն պէյան էտէր։

Թ. 123ա.— Օրացույցի աղյուսակ, որ պարունակում է լուսնի փուլերը, կենդանակերպը և այլն։

Թ. 123բ.— Տէֆա թապիրնամէ օնիքի կենթանակերպ իւզէրինէ։ Այ հանդը կենթանակերպտէյ իսէ, օլ կենթանակերպ թապիր էտէր վէ սոյլէր մանէսին։

Թ. թ. 124բ—133ա.— Կենդանակերպի օրացույցը։

Թ. 134ա.— Այրն օնիքի պուրճունտա օլան։

Թ. 137բ.— Տամարտան քան ալմաք վէ շիշէ շէքմէք պեյանինտէտր։

Թ. 140ա.— Շրջանակաձև աղյուսակ։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 7բ.— Հազրը քիթապ թաապիրնամէ տէյիլիր, եանի Երազական։

Դանիյէլ նէպիտէն թէալիֆ օլունմուշ Ալէա վէ մէօհթէպէր դայէթլէ ճէոմէրտ վէ կիւզէլ տիր. մալիմ օլա քի պիզիմ թաապիրնամէյէրտէն թէրճիմա օլանլէրտէն մաատէ, սայրը քիմսէյէրտէ օլան փարչալարը պուլուպ ճէմ էյլէտիկ վէ պու քիթապտա պիրլէտիկ քի օլտու դայէթլէ զէնկին վէ ճէոմէրտանէ։

Պէօյլէ մաալում վէ էհտիմաթ կէրէք քի տիւշ տեորդ թուրլու տուր. եանի տեորդ կրսրմ օլուր (թ. 8ա). պիրիսի օլ տուր քի. պիր կիշինին կէօնլու դամնէք խաբիրի էնտէշէլի օլա, տիւշ կորսէ, ասլր եոք տուր։

Պիր ղրսրմի տախի օլ տուր քի. պիր կիշինին պէտէնինտէ խաստէլիք օլա եախուտ զայիֆէ օլա, օլ կիշի տախի տիւշ կորսէ օնա էհտիպար օլմազ։

Պիր ղրսրմի տախի շէյթանի տիւր. ֆէյլի դապլէ էղտուրուր, եանի պիր սիւրատտէ կէօրիւնիւպ կէոնէ կէոն հէրէքէթ զահիր օլուր. թէոպէ. իստիֆար էթմէք կէրէք տիւր։

Պիր ղրսրմի տախի տէօրտիւնճիւ տիւր, օլ դապլէ էղտուրուր, եանի պիր սիւրատտէ կէօամէլ էյլէյէ. զէրէ պու բուլէ այնել վախթ օլուր պու քիթապին թէալիֆի իլէ (թ. 8բ) իստիմալի ամէլ օլունա, զէրէ ճիմանէսի աստուածապաշտ թէրճիմէսի տէր սահիհ քիմսելէր պուլուրմուշլարտր քի պու թախտիրճէ հեմեն տէորտիւնճիւ գրսմնա էհտիպար օլունա։

Քրլթապիրնամէ նազար,
Կեոր իլինտէ նէլէր եազար.
Օքուլուպ տա ֆիքր էտէն,
Կեօյէ պիր թեոյֆէ պէրկիւզար։
Սենեյի Մեսիհ էֆէնտիմիզին.
1798 հոքտեմբերին.
Պիրի պաշլանտր։

Թ. 139ա.— Ցօք շուքիւր ըրապպինին պիրլիկինէ քի խայիր իլէ թէքմիլ էյլէտիկ պու թապիրնամէ տէյիլէն քիթապճրղը վէ կիւճիմրդ եէթտիկի քատար, վիճիտրմրզ վարտրղը քատար... (այտտեղ մի քանի տող անընթեռնելի է)։

Սէպէպի թէրճիմա վէ ճէմ էյլետի,
Սահէթճի մահտեսի խաչատուր տիւզտի,
Պիզէ հետիյէ թէպէրուք էյլետի.
Հաք բահմեթ էյլէսին կէչմիշլէրինե։

---

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1960 թվականի № № ե-ից, է-ից, Թ-ից, 1961 թվականի № № Բ-ից, Գ-ից, Զ-ից, Թ-ից, ԺԲ-ից և 1962 թվականի № Ը-ից։

Պէնանենիզ հաքիր այաք Միւրապի,
Մահտեսի Տատուր հազար պու քիթապի.
Քի էնֆիաճի օղլու քայսերլի,
Ուշատ էտէ սիզ տախի պու էքնայի։

Թ. 139բ.— Մի քանի տող անընթեռնելի է։
Այլահէլ սուր բահան սէվէ աէտի նէ վաքիթ զուզուկէ զարշը օլուբսա պիր նէրէ կէթմէ վէ խայրը իշ ստուիմա վե քեազրտ հազմա։

Վէ վաքիթ էէր այթրնտա օլուրսա, էվ թուիմա վէ թէմէլ այբրսէն վէ լիֆթ սիբրսէն էբմէ վէ տիբմէ։

Պունուն իլէ նէհտի Յհսու քահանա Խորայլ էվլաթլարբնր քի օլ վաքիթլոէ բուիթբենտ իտիլեր։

Թ. 140ա.— Սէնէյի Մէսիհ էֆէնտիմիզին 1798 նուլեմբերին պիրի թէքմիլ։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Կա 7—8 տող հայատառ տաճկերէն գրություն։

Թ. թ. 1բ—4ա.— 83 քառակուսիներում կա հայատառ տուսերէն-տաճկերէն բառարան, յուրց 323 գործածական բառեր, ինչպես նաև տարվա առաջին 9 ամիսների անունները, գրված 1826 թվականի փետրվարի 21-ին։

Թ. 4բ.— Կա 18 տող հայատառ տաճկերէն մի գրություն, գրված Թրիլիսիում 1827 թվականի նոյեմբերի 21-ին։

Թ. 5ա.— Կա տուսերէն այբուբենը և յուրաքանչյուր տառի հայատառ անվանումը։

Թ. 5ա.— Տէր իմ Յիսուս և արարիչ,
Տես զտապան սիրտ իմոյ,
Սուրբ հրամանից ով հակառակ.
Միշտ և բարի և անքանակ,
Ուանդնեալ եղիր դիս այս յերկիր.
Արդ զոյնս թէ ի հոգ հանգիր,
Հայցէ բարձրեալ ի այս իմ շիրմի.
Ջնչեալ զմեղաց հետագիր իմ,
Սիրով լցոյ դիս յարութեամբ.
Նորոգութեան և քաւութեան,
Սիրեալեաց քոց արայ հազորդ.
Յարքայութեան խաբանդադորդ։

1841 թիւ փետրվարի
27-ն ի Տիֆլիզ։

Թ. թ. 140բ—145ա.— Կա մի երկար գրություն, գրված նոտրգրով, 1822 թվին, հայատառ տաճկերէն բովանդակությամբ։

Թ. 145բ.— Մահտեսի Պետրոս, 1821։

№ 161

ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթեր՝ 324։— Գրակներ՝ 27, յուրաքանչյուրը 12 թերթից. ի բաց առյալ պրակներ Ա՝ 10 և ԺԸ՝ 14 թերթից։— Մեծությունը՝ 17,8×13×7,5 սմ.։— Նյութը՝ դեղնած և կեղտոտած գիմագկուն թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով զարդեր են նկարված։ Կազմի վրա կան երկու ցամաք և երկու բռնիչներ։ Կազմը հետագայում վերանորոգվել է։— Պանդամակները՝ սկզբում կա մի թերթ թուղթ, որի վրա հետագայում կցված է Հիսուսի և Մարիամ Աստվածածնի տպագիր նկարը։— Վինակը՝ ոչ բավարար, պրակները քաշքաշված են, վերջից թերթ։— Դուրբյուները՝ միապույն։— Գատարակ լեռները՝ 113բ։— Տողերը՝ 23։— Գծումները՝ ճնշումով։— Գիրը՝ բոլորգիր։— Ձարտարապետությունը՝ ձեռագիրն ունի միջակ գեղեցկությամբ զարդագրեր և թուղնագրեր, ծառեր և ծաղիկներ, զարդեր և լուսանցազարդեր։ Կան նաև ութ հատ կիսախորաններ և մի հատ էլ հատարակ խորան (թ. 120ա)։... Գրիչը՝ անհայտ։— Պատվիրատուն՝ անհայտ։— Ծագումը՝ անհայտ։— Ժամանակը՝ ԺԶ—ԺԷ դարեր։— Վայրը՝ անհայտ։— Նանոությունը՝ 1895 թվականից հետո ձեռագիրը տարվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում։ Վենետիկ Հայրապետի Ամերիկա այցելության առթիվ ԱՍՆ-ից պր. Վահան Ցուգասրդյանը 1961 թվականի ամռան ձեռագիրը նվիրում է Մայր Աթոռի ձեռագրատանն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Շարականներ, ամբողջությամբ գրված հայկական խազերով։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Գլխավոր հիշատակարաններ ընկել է ձեռագրի վերջից)։

Թ. 94բ.— Յոյս իմ ի մանկութենէ իմմէ, մի՛ թողուր զիս Տէր Աստուած իմ։ Յոյս իմ ի ժամանակի ծերութեան իմոյ մի՛ թող...։ Յոյս իմ ի միւս անգամ գալըստեան քո, մի՛ այնտես առներ զիս, Տէր Աստուած իմ։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռագրի սկզբում գտնվող պահպանակին կպած մի թղթի վրա գրված է.

Նուէր Էջմիածնի մատենադարանին Վահան Ցուգասրդեանէ։ Նանոթութիւն։ Այս բոլորգիրը ձեռք բերուած է Սերաստիոյ հրապարակէն, թուրքերու ձեռքէն, 1895-ի կոտորածէն ու կողոպուտէն վերջ։ Վ. Ց.։

Թ. 1ա.— Էջմիածնի մատենադարանին նուէր Վահան Ցուգասրդեանէն։

Թ. 65ա.— Ցոգաւոր։

Թ. 113ա.— Այբուբենի գրչափորձեր։

Թ. 120ա.— Կա մի փոքր կնիք հետևյալ բովանդակությամբ.

Քրիստոսի Ներում Ընտիպան։

Թ. 234բ.— Այս աղէկ շարականը Փանոսին է, ամէն։

№ 162

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Թերթերը՝ 265.— Գրակնները՝ 22, յուրաքանչյուրը 12 թերթից, որոնցից վերջին՝ իր պրակը միայն 13 թերթ է.— Մեծությունը՝ 34,5×23,4×6,2 սմ.— Նյութը՝ դեղնած դիմացկուն հատ թուղթ.— Կազմը՝ լաթակազմ սովորական թուղթ, որի վրա գրված է մեծամատերով «Կանոնագիրք Ս. Հայրապետաց». Կազմի վրա կան երկու թիվ՝ 219, Ս. Էջմիածնի Վեհարանի կաթողիկոսական նախկին գրադարանի գրացուցակի համարը, և 26/4—21, Հոգևոր ճեմարանի գրադարանի համարը.— Պահպանակները՝ սկզբում և վերջում կան մեկական հատարակ բարակ թուղթ.— Վիճակը՝ բավարար.— Գրությունը՝ երկսյուն.— Գոտարկ բլոքները՝ 1բ, 10բ, 265բ.— Տողերը՝ 34.— Գծումները՝ ճնշումով.— Գիրը՝ նոտրգիր.— Ջարդարություն՝ ձեռագրի մասերանկարությունը հասարակ ոճով է նկարված. Ունի ընդամենը երկու թռչնագիր (թ. թ. 3ա և 267ա), մի հատ լուսանցազարդ՝ ձառ և ձաղիկ (թ. 3ա), մի հատ խորան (թ. 3ա), որ ներկայացնում է մի հրեշտակ, մի գլուխ, երկու անձինք, ձաղիկներ և բույսեր, և վերջապես ամբողջ էջի մեծությամբ մի նկար (թ. 1ա), որ ներկայացնում է Մարիամ Աստվածածնին՝ շրջապատված 11 առաքյալներով և որի գլխավերևում թռչում է Ս. Հոգին սպիտակ աղավնու կերպարանքով.— Գրիչները՝ ա. կեսարացի Գնորգ դպիր, բ. միսկճի տիրացու Մանվել, գ. Մատթեոս գրագիր.— Պատվիրատուն՝ մահտեսի Խաչատուր, որդի մահտեսի Հարությունի.— Պաղկողը՝ անհայտ.— Ժամանակը՝ 1767 թ.— Վայրը՝ Սուրբ Հրեշտակապետ եկեղեցի.— Ծանոթություն՝ գտագ եղել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհարանի դրադարանում, այնտեղից անցել է Հոգևոր Ճեմարանի գրադարան, որտեղից տեղափոխվեց Մայր Աթոռի Ձեռագրատուն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կանոնագիրքը արժեքավոր ձեռագիր է հանդիսանում, ուստի տալիս ենք բոլոր գլուխների վերնագրերն ու ենթավերնագրերը

Թ. 2ա.— Յառաջաբանութիւն մատենիս։

Թ. 3ա.— Կանոնք և սահմանք զոր եդին աշակերտքն Քրիստոսի ի Սուրբ Եկեղեցի յետ վերանալոյ Տեառն ժողովեալք ի վերնատունն այսոսիկ են կարգաւ։

Թ. 9բ.— Սահմանք և կանոնք սուրբ առաքելոցն ի ձեռն Կղեմայ առաքեալ հեթանոսաց։ Կանոնք երկրորդ առաքելականք։ Գլուխ Զ։

Թ. 14բ.— Սահմանք կանոնաց Սրբոյն Թադէոսի ի քաղաքն Ուռհայի ի լուսաւորել զնոսա։

Հարցումն առաջին, թէ որպէս պարտ է եպիսկոպոսին ի տեսչութեան կալ։

Թ. 17ա.— Կանոնք Փիլիպպոսի առաքելոյն։

Թ. 17բ.— Կանոնք Հարանց հետևողաց յետ առաքելոցն։

Թ. 19բ.— Այսոքիկ կանոնքս նախքան զնիկիայն կարգեցան։

Թ. 21բ.— Կանոնք Նիկիոյ սուրբ ժողովոյն երեք հարիւր տասնեւութ հայրապետաց։

Թ. 24ա.— Կոստանդիանոսի թագաւորի առ եպիսկոպոս և առ ժողովուրդս։

Թ. 24բ.— Կանոնք երկրորդ Նիկիականք. զոր եդին 3ԺԸ եպիսկոպոսունք, կրկնարանեալ կարճ ի կարճոյ։

Թ. 27ա.— Կանոնք Սրբոյն Գրիգորի հայոց առաքելոյ։

Թ. 28ա.— Կանոնք երանելի սուրբ հայրապետին Աթանասի։

Թ. 35բ.— Կանոնք Կոստանդնուպօլսոյ սուրբ ժողովոյն հարիւր յիսուն հայրապետաց։

Թ. 36ա.— Սահմանք կանոնագրութեան երանելոյն Գրիգորի Աստուածարանին Անձիանձու եպիսկոպոսին։ Յաղագս ուղղափառ հաւատոյ։

Թ. 39ա.— Կանոնք մեծի և քաջ գիտնականի երանելոյն Բարսեղի եպիսկոպոսապետի, բան առ Սուրբն Ակ[ակիոս]։

Թ. 42բ.— Դարձեալ Սրբոյն Բարսեղի գիր կանոնական առ քահանայն Դիոդորոս յԱնտիոքայ վասն հեռանալոյ յաղգակցութենէ։

Թ. 43ա.— Բարսեղի գիր կանոնական, վասն պէսպէս և բիւրապատիկ ախտից։

Թ. 55ա.— Կանոնք Տեառն Եփրեմի արդիւնակատար կրօնաւորի, զոր սնուցանէր անապատն ի կուսութեան ճառէն, տունը ուրն։

Թ. 55բ.— Կանոնք Ներսէսի կաթողիկոսի և Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսին։ Փառք Աստուծոյ ՃՌ անգամ։

Թ. 57բ.— Կանոնք քառասուն եպիսկոպոսաց որք ժողովեցան ի Կեսարիայ վասն ինչ անօրէնութեանցն կանանց, և սահմանեցին կանոնս ի։

Թ. 59ա.— Այս կանոնքս յետոյ եգան քան յԱնկիւրիայն, բայց զի քան զնիկիայն յառաջագոյն, քանզի ժողովեալ ի նիոյ Կեսարիայ ԺԶ եպիսկոպոսունք վասն պոռնկան աղանգիցն որ թոյլ տային քահանայից վասն պղծութեան գործոց որք ժողովեալ սահմանեցին կանոնս ի։

Թ. 60բ.— Գանգրեայ կանոնք։

Թ. 62ա.— Եւսէբիոսի բան։

Թ. 65ա.— Խոստովանութիւն ժողովոյն Անտիոքայ։

Թ. 66բ.— Լաւոդիկեայ կանոնիս գլուխ Ոե։

Թ. 68բ.— Կանոնք Սարդիկեայ։

Թ. 69ա.— Նորին կանոնք։

Թ. 72ա.— Կանոնք սրբոյ եպիսկոպոսաց որք ժողովեցան յԵփեսոս։

Թ. 73ա.— Կանոնք Կիւրղի Աղէքսանդրացւոյն։

Թ. 73բ.— Սրբոյն Սահակայ հայոց հայրապետի։ Յաղագս քորեպիսկոպոսաց, թէ որպէս զկարգն հաստատուն պահել յեկեղեցիս։

Թ. 76ա.— Նորին Սրբոյն Սահակայ, թէ որպէս սահմանեցաւ կարգ և ուխտ ե որոշման վանաց։ Բան երկրորդ։

Թ. 78բ.— Նորին, թէ որպէս պարտ է եպիսկոպոսաց ունել զընտանիս Սրբոյ եկեղեցւոյ։

Թ. 79բ.— Նորին, թէ որպէս պարտ է եպիսկոպոսաց պահել զղանձս եկեղեցւոյ, կամ որպէս մատակարարել։

Թ. 81ա.— Նորին Սրբոյն Սահակայ հայրապետի գիր աւանդութեանց։ Յաղագս սպասաւորաց եկեղեցւոյ, և պաղոց ժողովրդականաց ընծայեցելոց ի տուն Աստուծոյ։

Թ. 82բ.— Կանոնք հայոց ժողովոյն։ Որ յետ եօթն ամի վաղճանելոյն Սահակայ, միաբանութեամբ աւագացն կարգեցին քառասուն եպիսկոպոսք, և այլք ուխտականք։

Թ. 88բ.— Թուղթ Սեանտիայ եպիսկոպոսին։ Բանք ԺԳ։

Թ. 89բ.— Կանոնք երկրորդ Անտիոքայ ԺԲ եպիսկոպոսաց։

Թ. 90բ.— Յոհաննու Մանդակունոյ հայոց Կաթուղիկոսի կանոնք։

Թ. 92ա.— Աբրահամու Մամիկոնէից եպիսկոպոսին առն Վաչագան Աղուանից արքեպիսկոպոսին։

Թ. 93ա.— Կանոնականք Յոհաննու Սիւնեաց քաղաքաց և առ ընթեր եղեալ պատասխանիքն, մին Սահակայ հայոց կաթուղիկոսի, և Նորին աթոռակից բազմաց, գլուխ ԺԵ, հարցումն հարցողի։

Թ. 94ա.— Կանոնք Տեառն Յոհաննիսի Իմաստասիրի հայոց Կաթուղիկոսի։

Թ. 96բ.— Կանոնք Սիոնի հայոց կաթուղիկոսի։

Թ. 98բ.— Սահմանադրութիւն Կանոնի, Վաչագայ Աղուանից արքայի, եղեալ ի ժողովն որ յԱղուանս ժողով եղև։

Թ. 100ա.— Կանոնք Դունոյ ժողովոյն զոր ամի չորրորդի Կոստանդիանոսի կայսեր բարնպաշտութեան Հոռոմոց, այս գիր հաստատութեան գրեցաւ յուղիղ կարգի, և կանոնաց սրբոյ եկեղեցւոյ, և առաջնորդաց, և ժառանգաւորաց, հրամանաւ երանելւոյ կաթուղիկոսին Հայոց Ներսեսի շինողին, և այլոց եպիսկոպոսաց, որոց անուանքն գրոշմեալ կան գրով ի կատարման կանոնացդ, և է գլուխ տասներկու։

Թ. 102ա.— Գլուխ վասն դիւահարաց, թէ պա՞րտ իցէ օրէնս տալ, թէ երախայ իցէ կնիք տալ, մինչդեռ դեռն ի նմա իցէ։

Թ. 103բ.— Նորին վասն ուրացողաց։

Կոստանդնուպօլսոյ Յովհաննու Հայրապետին։

Թ. 104ա.— Մեծի Ագաթանգեղոսի ի բանէն որ զԿայենէ։

Թ. 104բ.— Երանելոյն Մեսրոպայ հայոց վարդապետի։

Սահմանք և կանոնք կարգի եկեղեցւոյ Սրբոյն Ներսեսի հայրապետին հայոց։

Թ. 105բ.— Կանոնք Յովհաննու Մանդակունոյ Հայոց կաթողիկոսի։

Թ. 106ա.— Նորին Յովհաննու Մանդակունոյ Կոչումն ապաշխարութեան։

Թ. 106բ.— Խոստովանութիւն քահանայի։

Թ. 107ա.— Կանոնք երանելոյն Եպիփանու Կիպրացւոյ եպիսկոպոսի, մեծի և առաքինւոյ, մարդարէի և նշանագործի։

Թ. 108բ.— Ի հարանց կանոնացն է։

Կղեմայ Հռովմայ եպիսկոպոսին։

Թ. 109ա.— Սրբոյն Դիոնէսիոսի Աթենացւոյ եպիսկոպոսի բանա...։

Սրբոյն Դիոնէսիոսի Արիսպագացոյն յաղագս Աստուածածնին բանի երրորդ։

Կանոնք Սրբոյ ժողովոյն որ Թէոդոսիպօլիս որ այժմ կոչի Կարնոյ քաղաք։

Թ. 111ա.— Հիպոդիտայ սրբոյ բանի, վասն ծննդեանն և մկրտութեան։

Թ. 111ա.— Հիպոդիտայ սրբոյ բանի, առ Տոյ եպիսկոպոս։

Մանուէլի։

Ի Սոկրատայ։

Թ. 113ա.— Կանոնք եղեալ յառաջին սրբոց հարցն վասն ժամարարաց։

Թ. 113բ.— Քահանայապետք Հայոց Մեծացաւ։

Թ. 115ա.— Եպիսկոպոս Կամսարական տան։

Թ. 123ա.— Կանոնք և բանք գեղնցիկք և յոյժ պիտանիք վասն Աթոռոյն Աղթամարայ, որ է ի ներքոյ բանադրանաց ի Սրբոյ Գրիգորէ Տաթևացւոյ առաքելաշնորհ վարդապետէ, ասացեալ վասն այնոցիկ որ հակառակէին Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, և յինքենէ էին կաթողիկոսք նոցա։

Թ. 125ա.— Թուխտ ընդհանրական Տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի առ համօրէն համասեռից աղինս որոց տեսչութիւն հաւատացաւ ի Տեառնէ։

Թ. 129բ.— Առ կրօնաւորս, որ ի վանորայս։

Թ. 134բ.— Առ առաջնորդս սրբոյ ուխտից վանականաց։
Թ. 136ա.— Առ առաջնորդս եկեղեցւոյ որ են յաշխարհի, որք կոչին եպիսկոպոսք։
Թ. 139բ.— Առ դասս քահանայից։
Թ. 145ա.— Առ իշխան որ ըստ աշխարհի։
Թ. 147բ.— Առ զինուորացն դասս։
Թ. 148ա.— Առ քաղաքականսդ։
Թ. 148բ.— Առ երկրագործս և համօրէն ժողովրդեանն։
Թ. 149ա.— Առ կանայս։
Թ. 149բ.— Նուաստ վարդապետ Յոհեզն, խրատ հասարակաց քրիստոնէից քահանայից և ժողովրդեան, ի կանոնական սահմանաց առաքելոց սրբոց, և հայրապետաց, և վարդապետաց, և Սրբոյ Հօրն մերոյ Վարդանայ վարդապետի յոր ամենայնէ ժողովեցի և գրեցի։
Թ. 150ա.— Յաղագս հաւատոյ դաւանութեան։
Թ. 151ա.— Յաղագս Մրկրրտութեան։
Թ. 151բ.— Յաղագս տղայ սնուցանելոյ։
Թ. 152ա.— Յաղագս պսակի և խրատի ամուսնացելոյն։
Կանոնք սրբոց հարց։
Թ. 152բ.— Կանոնս սրբոց հայրապետաց։
Թ. 153ա.— Յաղագս շնութեան։
Թ. 154ա.— Յաղագս երդման։
Թ. 154բ.— Յաղագս սուտ վկայից։
Յաղագս յիշոցնատուաց։
Թ. 155ա.— Յաղագս ատելութեան։
Թ. 156ա.— Յաղագս սիրոյ։
Թ. 156բ.— Վասն աղօթից։
Թ. 157ա.— Յաղագս խոստովանութեան։
Թ. 157բ.— Յաղագս հաղորդ տալոյ։
Սահակայ յաղագս ողորմութեան։
Յաղագս պահոց։
Թ. 158ա.— Վասն անդարձ առնելոյ։
Թ. 158բ.— Յաղագս ոչ առնելոյ սուգ մեռելի։
Սահակայ է կանոնս։
Թ. 159ա.— Սրբոյն Սահակայ վասն քահանայից։
Սրբոյն Թարսեղի կանոնք։
Յառաքելականաց։
Սրբոյն Թարսեղի կանոնք։
Թ. 159բ.— Կանոնք Սրբոյն Թարսեղի։
Յառաքելական կանոնաց։
Ի Նիկիոյ ժողովոյն ՅԺԸ հայրապետաց։
Ի սրբոյ առաքելոյն Թադեոսէ։
Եւ դարձեալ ի սրբոյ առաքելոյ Թադէոսէ։
Թ. 160ա.— Եւ դարձեալ ասէ առաքեալ Թադէոս։
Յովհաննու Մանդակունոյ կանոնաց։
Ի Ներսիսէ հայոց կաթողիկոսէ խրատ կանոնական։
Թ. 160բ.— Ի կանոնական խրատուց Ներսէսի հայոց կաթողիկոսի։
Թ. 161ա.— Այլ կանոնք։
Ի կանոնականաց Սրբոյն Բարսեղի եպիսկոպոսի վասն քահանայից։
Թ. 161բ.— Այլ կանոնք։
Թ. 162ա.— Կանոնք յաղագս պէս պէս յանցանաց որք հանդիպին քահանայից և սարկաւագաց։
Առաքելական կանոնացն է։
Թ. 162բ.— Անտիոքայ ժողովոյն կանոնք։
Ի Նիկիական կանոնաց։
Սրբոյն Գրիգորի հայոց լուսաւորչի։
Կանոնք Յովհաննու Իմաստասիրի։
Սահակայ կանոնացն։
Թ. 163ա.— Կանոնք Եփրեմ Խորինայ։
Թադէոսի առաքելոյն կանոնացն։
Սահակայ է կանոնս։
Հայրապետաց կանոնաց, վասն եպիսկոպոսաց։
Թ. 163բ.— Խրատք ժամարարաց պատարագաց։
Թ. 165ա.— Սերմն որ անխափան ի քուն անցանի։
Թ. 165բ.— Սրբոյն Ներսէսի հայոց կաթողիկոսի։
Թ. 166ա.— Պատճէն որով զորովայնամոլսն և զարբեցողսն ամօթ առնէ։
Թ. 167բ.— Վասն սիրոյ և մախանաց և խորամանկութեան։
Թ. 169բ.— Վասն խորհրդոյ Սրբոյ Գրիգորին զոր և ջուրն ոչ սիրեսցուք։
Թ. 171բ.— Կիրակոս վարդապետի ասացեալ։
Թ. 175բ.— Բան վասն հաւատոյ և օրինաց, պատերազմ պարզ և համառօտ ի Յովհաննէս վարդապետէ։
Թ. 176բ.— Սրբոյն Ներսէսի պատասխանի թուղթ Յակոբայ վասն Ասորոց Մելիտենայ մայրաքաղաքի Հայոց։
Թ. 177ա.— Վասն անխմոր նշխարին և ջուր բաժակն։
Թ. 178բ.— Տեառն Ներսէսի արքեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոյ յորժամ չոգաւ դեսպանութեամբ ի Թագաւորէն Հայոց Լեւոնէ ի Կոստանդնուպոլիս։ Հարցումն պատրիարգին, և պատասխանի Սրբոյն Ներսէսի։

Թ. 181ա.— Թուղթ Տեառն Գրիգորի Կաթողիկոսի հայոց, գրեալ եղբօր Նորին եպիսկոպոսի հրամանաւ Նորայն, ի Միջագետս Ասորոց, Յամայք կոչեցեալ Նահանգին։ Յաղագս որ անդ մերոյ ազգիս քահանայից հալառակարանելոյ անմտարար ընդ միմեանս։ Ոմանց ասել զաստուածութեանն բնութիւն չարչարեալ և մեռեալ ընդ մարմնոյն, և ոմանց զմարմինն միայն։ Ի խնդրոյ ումեմն աստուածասիրի Առիւծ կոչեցելոյ իշխանի Թլկուր անուանի։

Թ. 185ա.— Կիրակոս վարդապետի յաղագս ութն խորհրդոյ։

Թ. 187բ.— Նորին Կիրակոս վարդապետի յաղագս շնութեան։

Թ. 189ա.— Նորին Կիրակոս վարդապետի յաղագս արծաթասիրութեան։

Թ. 190բ.— Նորին Կիրակոս վարդապետի յաղագս տրամութեան։

Թ. 192ա.— Նորին Կիրակոս վարդապետի յաղագս ձանձրութեան դիւին։

Թ. 192բ.— Յաղագս սնափառութեան։

Թ. 193ա.— Նորին Կիրակոս վարդապետի յաղագս ամբարտաւանութեան։

Թ. 194բ.— Նորին Կիրակոս վարդապետի յաղագս բարկութեան։

Թ. 195ա.— Կանոն պասակելոյ և պորտ Թուելոյ։

Թ. 196ա.— Ի խնդրոյ Թումայի վարդապետի հրեշտակարնակ սուրբ ուխտիս Մեծոբայ վանաց, և ծառայարար կատարեալ Յակոբ վարդապետի Ղբիմեցւոյ, աշակերտի Գէորգայ վարդապետի Եղընկոյ յաղագս ազգականութեանց բաժանման։

Թ. 199բ.— Առաջաբանութիւն։

Նախագրութիւն դրոց դատաստանի ընդ արդարութիւն բամբասողաց։ Որք բամբասեն զմեզ թէ ոչ կայ ի Հայք դատաստան։

Թ. 201բ.— Նշանակ զօրութեան Նորին հանդերձ աղերսարանութեամբ առ Տէր Ստեփաննոս աղուանից կաթողիկոս։

Թ. 202ա.— Յաղագս թէ ո՞վ վայելէ դատաւոր զանազան կերպիւ։

Թ. 202բ.— Յաղագս թէ զի՞նչ է դատաստանն, և ո՞ւմ վայելէ, և զո՞վ պարտ է կացուցանել դատաւոր։

Թ. 203ա.— Յաղագս թէ ո՞րպէս արժան է լինել դատաւորաց, ամբաստանաց և դատախազաց։

Թ. 204բ.— Յաղագս վկայից, եթէ զի՞նչ է հաւատարմութիւն նոցա, կամ ընդէ՞ր երկու կամ երեք ընտրին։

Թ. 205բ.— Յաղագս երդման, թէ որպէս և որոց։

Թ. 206ա.— Յաղագս զի ոչ է պարտ քրիստոնէի առ անօրինաց դատաստանն երթալ։

Թ. 206բ.— Յաղագս թէ որոց գրոց հաւաքեալ եմք, և գրեմք զգիրս դատաստանի, կամ յորոց ազգէ։

Թ. 207ա.— Եկեսցուք այժմ ի գործ դատաստանի գիտելով զի ըստ քաղաքաց դատաւորս հրամայեաց Մովսէս, և նոցունց դպիր, յորոց յայտ է, զի ոչ զամենայն գրով աւանդեաց Մովսէս զգիրս դատաստանի, այլ տեսակս սակաւ, և ի դատաւորսն ապաստանարար ի զանազան ժամանակս և յիրս։

Թ. 208ա.— Վասն թագաւորաց դատաստանի, և որոց ընդ ձեռամբ նոցա են։

Թ. 210ա.— Վասն հարանց անապատի։

Թ. 210բ.— Վասն վարդապետաց։

Թ. 211բ.— Վասն քահանայից։

Թ. 212ա.— Վասն առն և կնոջն անկարողաց, որ չկարէ այրն յանձնէ հանել զկոյսն։

Վասն առն և կնոջն զանազան պատահարաց։

Թ. 212բ.— Վասն առն և կնոջն դերելոց։

Վասն ատելութեան առն և կնոջն։

Վասն շնողաց առն և կնոջն։

Վասն ամլոց։

Թ. 213ա.— Վասն թէ որով պատճառաւ թողցէ կին զայր իւր։

Վասն առն և կնոջն թէ դիրար ատիցեն։

Վասն այնոցիկ որ հեռու ճանապարհ երթան ամէն տարիք, և կինն այլ այր առցէ։

Վասն առն և կնոջ որ յիմարութեամբ թողուն դիրար։

Թ. 213բ.— Վասն թէ կուրին այր և կին ընդ իրեարս։

Վասն ուրացողաց արանց և կանանց։

Թ. 214ա.— Վասն առն և կնոջն եթէ քինան ընդ իրար և մինն ուրանայ զՔրիստոս։

Վասն առն և կնոջն որ դիրար սպանանեն։

Վասն յանցաւոր իշխանաց առ թագաւորս և այլոց առ նոսա։

Վասն շինականաց։

Վասն սպաննութեան մանկանց։

Վասն մանկանց եթէ ի խաղս զիրար վընասեն։

Վասն մանկանց եթէ ի չուրս զիրար վնասեն։

(Շարունակելի)